

«ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻՐԱՎՈՒՆՔ ԶՈՒՆԻ ՊԱՐՏԿԵԼՈՒ
ԵՎ ՈՉ ՄԻ ՊԱՅԵՐԱԶՄՈՒՄ»

«АРМЕНИИ НЕ ДАНО ПРОИГРАТЬ НИ ОДНОЙ ВОЙНЫ»

«ARMENIA CAN NOT AFFORD TO LOSE ANY WAR»

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐ.
ԶԻՆՎԱԾ ՈՒՅԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՐԱԿԱՆ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

ОБОРОННЫЕ РЕФОРМЫ:
СОВЕРШЕНСТВОВАНИЕ СИСТЕМЫ ДЕМОКРАТИЧЕСКОГО КОНТРОЛЯ
НАД ВООРУЖЕННЫМИ СИЛАМИ

THE DEFENSE REFORMS:
IMPROVEMENT OF THE SYSTEM OF DEMOCRATIC CONTROL
OVER THE ARMED FORCES

**ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝
ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՄԲ
ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ**



ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը
և Ֆրանսիայի Պաշտպանության նախարար Էրվե Մորենը ստորագրում են
ռազմական բնագավառում համագործակցության մասին պայմանագիր.

Փարիզ, 2010 թ. փետրվարի 10



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

2(64). 2010

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

- Քոբանջյան Հ. Ս.**
քաղաքական գիտությունների դոկտոր (Ռ-Դ), Ռազմական գիտությունների ռուսաստանյան ակադեմիայի իսկական անդամ, հակահարկերի կուրսի գծով փորձագետ (ԱՄՆ)
(մախագահ)
- Չիլինգարյան Գ. Ս.**
(գլխավոր խմբագիր)
- Այդինյան Ռ. Ա.**
- Ապրիանով Է. Ա.**
- Ավետիսյան Վ. Պ.**
(գլխ. խմբ. տեղակալ)
- Բաբայան Ն. Մ.**
- Գասպարյան Վ. Ս.**
- Գասպարյան Տ. Շ.**
- Դավթյան Ա. Մ.**
- Թունյան Վ. Վ.**
- Իսախանյան Մ. Ռ.**
- Խաչատուրով Յու. Գ.**
- Կարապետյան Մ. Ն.**
- Կարապետյան Մ. Ս.**
- Մաթևոսյան Ի. Ժ.**
- Մարգարյան Վ. Հ.**
(գլխ. խմբ. տեղակալ)
- Մարտիրոսյան Ս. Ս.**
- Մարտիրոսով Լ. Ա.**
- Միրզաբեկյան Ա. Ռ.**
- Նազարյան Ա. Ս.**
- Սեդրակյան Ս. Գ.**
- Տեր-Գրիգորյանց Ն. Գ.**
- Տոնոյան Գ. Է.**
- Փարսադանյան Ա. Մ.**

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ**
- ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**
- Ա. Ս. Նազարյան, ՀՀ Ձինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության ապահովման օրենսդրական մեխանիզմները 9*
- Ա. Գ. Վաղարշյան, Հայաստանի երեք հանրապետություններում սահմանադրական կարգավորման տիպերը և Ձինված ուժերի քաղաքական չեզոքության ու դրանց նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքների սահմանադրաիրավական ամրագրումը 17*
- Վ. Ա. Խաչատրյան, Ձինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության իրավական ամրագրումը ՀՀ օրենսդրության մեջ 29*
- Հ. Կ. Կարապետյան, Հայաստանի Հանրապետությունում պաշտպանության ոլորտի նկատմամբ խորհրդարանական վերահսկողության որոշ հարցեր . . 39*
- Գ. Բ. Հարությունյան, ՀՀ Պաշտպանության մախարարին առընթեր հասարակական խորհրդի տեղը Ձինված ուժերի նկատմամբ հասարակական վերահսկողության գործում 46*
- Ռ. Ջ. Մախմուդյան, Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության դերը Ձինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության գործում 52*
- Գ. Ե. Միրզոյան, Ա. Է. Հովնանյան, Հասարակական կազմակերպության կողմից գորակառնական իրավունքների պաշտպանության որոշ հարցեր 62*

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Տ. Ռ. Մարտիրոսյան, ՀՀ պաշտպանական անվտանգության ոլորտում ռազմավարական որոշումների կայացման համակարգի օպտիմալացման որոշ եղանակների մասին՝ ռիսկերի կառավարման համատեքստում 69

Ա. Մ. Շահվերդյան, Բնապահպանական անվտանգության որոշ հարցերի դիտարկումը քաղաքական գիտության տեսանկյունից 79

ՈԱԶՄԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ա. Ս. Աբրահամյան, Կ. Վ. Հակոբյան, Ա. Ս. Միրայելյան, Ռ. Յու. Չիլինգարյան, Ս. Ա. Չիլինգարյան, Զ. Գ. Սահակյան, Սառը պլազմայի էներգատարության կառավարումը ակուստիկ դաշտերի միջոցով 93

ՈԱԶՄԱԿԱՆ ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Վ. Հ. Մարգարյան, Հ. Ա. Մարտիրոսյան, Չինվորական կոլեկտիվներում ոչ կանոնադրական հարաբերությունների սոցիալ-հոգեբանական պատճառները 101

ՈԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ

Մ. Լ. Կարապետյան, 19-րդ դարի և 20-րդ դարի սկզբի ռուսական բանակի հայազգի զորապետները. աղբյուրագիտական ակնարկ 111

Վ. Կ. Աթոյան, Նժդեհի՝ մարտի վարման տեսության արդիականությունը 115

ՈԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ն. Ս. Մկրտչյան, Լ. Հ. Պապիկյան, Գ. Ս. Չիլինգարյան, Համարի բառարան 125

ԳԻՏԱԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ռ. Վ. Աղուզումցյան, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,

Ն. Հ. Առաքելյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,

Գ. Ե. Բաղդասարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,

Հ. Ա. Գևորգյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,

Ռ. Գ. Գևորգյան, երկրաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Ա. Հ. Թռչունյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,

Վ. Մ. Հարությունյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,

Ա. Հ. Մանթաշյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,

Է. Գ. Մինասյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Մ. Մ. Միրիջանյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Կ. Ս. Մուսոյան, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Յու. Ս. Չիլինգարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,

Վ. Ս. Մարգարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,

Հ. Ս. Միսակյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)
ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ ИНСТИТУТА
НАЦИОНАЛЬНЫХ СТРАТЕГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ
ИМЕНИ ДРАСТАМАТА КАНАЯНА
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
№ 2(64). 2010
Издается 4 раза в год

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Котанджян Г. С., доктор политических наук (РФ), Действительный член
Российской Академии военных наук, научный эксперт
по контртерроризму (США) (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор),
Аветисян В. П. (зам. гл. редактора), *Айдинян Р. А.*, *Априамов Э. А.*, *Бабаян Н. М.*,
Гаспарян В. С., *Гаспарян Т. Ш.*, *Давтян А. М.*, *Исаханян М. Р.*, *Карапетян М. Н.*,
Карапетян М. С., *Маргарян В. Г.* (зам. гл. редактора), *Мартirosов Л. А.*,
Мартirosян С. С., *Матевосян И. Ж.*, *Мирзабекян А. Р.*, *Назарян А. С.*,
Парсаданян А. М., *Сегракян С. Г.*, *Тер-Григорьянц Н. Г.*,
Тоноян Д. Э., *Тунян В. В.*, *Хачатуров Ю. Г.*

СОДЕРЖАНИЕ

**ОБОРОННЫЕ РЕФОРМЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ:
СОВЕРШЕНСТВОВАНИЕ СИСТЕМЫ
ДЕМОКРАТИЧЕСКОГО КОНТРОЛЯ НАД ВООРУЖЕННЫМИ СИЛАМИ**

- А. С. Назарян.* Законодательные механизмы обеспечения демократического гражданского контроля над Вооруженными силами РА 9 (15)*
- А. Г. Вагаршян.* Типы конституционного регулирования и конституционно-правовое закрепление принципов политического нейтралитета Вооруженных сил и гражданского контроля над ними в трех Респубиках Армения 17 (27)
- В. А. Хачатрян.* Правовое закрепление демократического контроля над Вооруженными силами в законодательстве РА 29 (37)
- Г. К. Карапетян.* Некоторые вопросы парламентского контроля над сферой обороны в Республике Армения 39 (44)
- Г. Б. Арутюнян.* Место Общественного совета при Министре обороны РА в деле общественного контроля над Вооруженными силами . . 46 (50)
- Р. Дж. Махмудян.* Роль Института защитника прав человека Республики Армения в деле защиты прав человека в Вооруженных силах . . 52 (60)
- Г. Е. Мирзоян, А. Э. Овнанян.* Некоторые вопросы защиты прав призывников со стороны общественной организации 62 (67)

ПОЛИТОЛОГИЯ БЕЗОПАСНОСТИ

- Т. Р. Мартirosян.* О некоторых способах оптимизации системы принятия стратегических решений в сфере оборонной безопасности РА в контексте управления рисками 69 (90)

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

А. М. Шахвердян. Рассмотрение некоторых вопросов экологической безопасности с точки зрения политической науки 79 (91)

ВОЕННАЯ ИНЖЕНЕРИЯ

А. С. Абрамян, К. В. Акопян, А. С. Микаелян, Р. Ю. Чилингарян, С. А. Чилингарян, К. Г. Саакян. Управление энергоемкостью холодной плазмы акустическими полями 93 (99)

ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ И ВОСПИТАНИЕ

В. Г. Маргарян, А. А. Мартиросян. Социально-психологические причины неуставных взаимоотношений в воинских коллективах 101 (109)

ВОЕННАЯ ИСТОРИЯ

М. А. Карапетян. Армянские военачальники русской армии XIX века и начала XX века: источниковедческий очерк 111 (122)

В. К. Атоян. Об актуальности теории ведения боя Гарегина Нжде . 115 (123)

ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ

Н. С. Мкртчян, Л. Г. Папикян, Д. С. Чилингарян. Словарь номера . . 125 (127)

НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:

- Р. В. Агузумцян, кандидат психологических наук, доцент;*
- Н. У. Аракелян, академик НАН РА;*
- В. М. Арутюнян, академик НАН РА;*
- Г. Е. Багдасарян, академик НАН РА;*
- Г. А. Геворкян, академик НАН РА;*
- Р. Г. Геворкян, доктор геологических наук, профессор;*
- А. А. Манташян, академик НАН РА;*
- Э. Г. Минасян, доктор исторических наук, профессор;*
- М. М. Мириджаниян, доктор медицинских наук, профессор;*
- К. С. Мосоян, доктор технических наук, профессор;*
- В. С. Саркисян, академик НАН РА;*
- А. С. Сисакян, доктор медицинских наук, профессор;*
- А. А. Трчуян, член-корреспондент НАН РА;*
- Ю. С. Чилингарян, академик НАН РА*

«**HAIKAKAN BANAK**» («**ARMENIAN ARMY**»)

DEFENSE-ACADEMIC JOURNAL,
DRASTAMAT KANAYAN INSTITUTE FOR NATIONAL STRATEGIC STUDIES,
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

№ 2(64). 2010

Is published 4 times a year

EDITORIAL BOARD

Kotanjian H. S., Doctor of Political Sciences (RF), Fellow Member,
Russian Academy of Military Sciences, Counterterrorism Fellow (USA) (Chairman),
Chilingaryan D. S. (Editor-in-Chief), *Apreamov E. A.*,
Avetisyan V. P. (Deputy Editor-in-Chief), *Babayan N. M.*, *Davtyan A. M.*,
Gasparyan T. Sh., *Gasparyan V. S.*, *Idynyan R. A.*, *Isakhanyan M. R.*,
Karapetyan M. N., *Karapetyan M. S.*, *Khachatourov Yu. G.*,
Margaryan V. H. (Deputy Editor-in-Chief), *Martirosyan S. S.*, *Martirossov L. A.*,
Matevossyan I. Zh., *Mirzabekyan A. R.*, *Nazaryan A. S.*, *Parsadanyan A. M.*,
Sedrakyan S. G., *Ter-Grigoryants N. G.*, *Tonoyan D. E.*, *Tounyan V. V.*

CONTENTS

THE DEFENSE REFORMS OF THE REPUBLIC OF ARMENIA: IMPROVEMENT OF THE SYSTEM OF DEMOCRATIC CONTROL OVER THE ARMED FORCES

- A. S. Nazaryan.* The legislative mechanisms of ensuring democratic civilian control over the Armed Forces of the Republic of Armenia 9 (16)*
- A. G. Vagharshyan.* The types of constitutional regulation and constitutional legitimation of the principles of political neutrality of the Armed Forces and civilian control over them in the three Republics of Armenia . . 17 (28)
- V. A. Khachatryan.* The legitimation of the democratic control over the Armed Forces in the RA Legislation 29 (38)
- H. K. Karapetyan.* Some issues of the parliamentary control over the defense sphere in the Republic of Armenia 39 (44)
- G. B. Harutyunyan.* The place of the Public Council under the RA Minister of Defense in the public control over the Armed Forces 46 (51)
- R. J. Makhmudyan.* The role of the Ombudsman Institute of the Republic of Armenia in the Human Rights Protection in the Armed Forces . . 52 (61)
- G. Ye. Mirzoyan, A. E. Hovnanyan.* Some problems of the conscripts' rights protection by the Non-governmental organization 62 (68)

POLITICAL SCIENCE OF SECURITY

- T. R. Martirosyan.* On some methods of optimizing the system of strategic decision making in the sphere of the RA defense security in the context of risk management 69 (91)

* Numbers in brackets mean the page of the text in English.

A. M. Shahverdyan. Reviewing some issues of environmental security in terms of political science 79 (92)

MILITARY ENGINEERING

A. S. Abrahamyan, K. V. Hakobyan, A. S. Mikaelyan, R. Yu. Chilingaryan, S. A. Chilingaryan, K. G. Sahakyan. The management of the energy capacity of cold plasma through the acoustic fields 93 (100)

MILITARY PSYCHOLOGY AND EDUCATION

V. H. Margaryan, H. A. Martirosyan. The socio-psychological causes of acts of violence among servicemen in military collectives 101 (110)

MILITARY HISTORY

M. L. Karapetyan. The Armenian Commanders of the Russian Army in the 19th and early 20th centuries: a source study blueprint 111 (123)

V. K. Atoyan. On the relevance of Garegin Nzhdeh's battle waging theory 115 (124)

MILITARY TERMINOLOGY

N. S. Mkrtchyan, L. H. Papikyan, D. S. Chilingaryan. Volume Dictionary . . 125 (129)

SCIENTIFIC-ADVISORY COUNCIL:

- R. V. Aghouzoumstian,* Candidate of Psychological Sciences, Docent;
 - N. H. Arakelian,* Full Member, NAS RA;
 - G. Y. Baghdassarian,* Full Member, NAS RA;
 - Y. S. Chilingarian,* Full Member, NAS RA;
 - H. A. Gevorkian,* Full Member, NAS RA;
- R. G. Gevorkian,* Doctor of Geological Sciences, Professor;
 - V. M. Haroutyunian,* Full Member, NAS RA;
 - A. H. Mantashian,* Full Member, NAS RA;
- E. G. Minasyan,* Doctor of Historical Sciences, Professor;
- M. M. Miridjanian,* Doctor of Medical Sciences, Professor;
- K. S. Mossoyan,* Doctor of Technical Sciences, Professor;
 - V. S. Sargsian,* Full Member, NAS RA;
- H. S. Sissakian,* Doctor of Medical Sciences, Professor;
 - A. H. Trchounian,* Fellow Correspondent, NAS RA

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ.**

**ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**

**ОБОРОННЫЕ РЕФОРМЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ:
СОВЕРШЕНСТВОВАНИЕ СИСТЕМЫ
ДЕМОКРАТИЧЕСКОГО КОНТРОЛЯ
НАД ВООРУЖЕННЫМИ СИЛАМИ**

**THE DEFENSE REFORMS
OF THE REPUBLIC OF ARMENIA:
IMPROVEMENT OF THE SYSTEM
OF DEMOCRATIC CONTROL
OVER THE ARMED FORCES**

ՀՀ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Ա. Ս. ՆԱԶԱՐՅԱՆ, ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ



Ժողովրդավարական իրավական պետության ռազմական անվտանգության համակարգում կարևոր դերակատարություն ունի զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության ապահովումը:

ՀՀ Ձինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների ներդրման ու զարգացման անհրաժեշտությունն

ամրագրված է ՀՀ գործող մի շարք իրավական ակտերում:

Այսպես. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8.2-րդ հոդվածը սահմանում է, որ «ՀՀ Ձինված ուժերն ապահովում են ՀՀ անվտանգությունը, պաշտպանությունը և տարածքային ամբողջականությունը, նրա սահմանների անձեռնմխելիությունը: Ձինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո»¹:

Սահմանադրաիրավական այս նորմի շրջանակներում «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է. «Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը կազմակերպվում և իրականացվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակության և քաղաքացիների ընդգրկվածության, օրինականության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգման, Ձինված ուժերի գործունեության նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքների հիման վրա»²:

ՀՀ Նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» հմ. ՆՀ-37-Ն հրամանագրի 2-րդ բաժնի 2-րդ ենթաբաժնում ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությունը հետևողական է Ձինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության և ռազմական բյուջեի պլանավորման հիմնարար ժողովրդավարական սկզբունքների ապահովման խնդրում³:

¹ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն»: Ե., 2005:

² «Պաշտպանության մասին» ՀՀ 2008 թ. նոյեմբերի 27-ի հմ. ՀՕ-198-Ն օրենքը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2008 թ., հմ. 73 (663)):

³ Տես Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թ. փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» հմ. ՆՀ-37-Ն հրամանագիրը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2007 թ., հմ. 11 (535)):

Ըստ ՀՀ «Ռազմական դոկտրինի» 46-րդ կետի՝ «ռազմական անվտանգության համակարգի բարեփոխումների նպատակը քաղաքացիական վերահսկման և պաշտպանական պլանավորման ու կառավարման ժողովրդավարական հիմնարար սկզբունքների վրա հիմնված, արդիական ռազմական պահանջներին համապատասխանող, առավել ճկուն և ժամանակակից ռազմական անվտանգության համակարգի ստեղծումն է, որն ի գործու կլինի արդյունավետորեն ապահովելու ՀՀ ռազմական անվտանգությունը, պաշտպանելու ազգային անվտանգության հիմնարար արժեքներն ու ապահովելու ՀՀ միջազգային պարտավորությունների կատարումը»⁴:

Նույն փաստաթղթի 51-րդ կետի I ենթակետով ռազմական անվտանգության համակարգի ղեկավարման ոլորտի բարեփոխումների շրջանակներում նախատեսվում է նաև ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում քաղաքացիական ծառայության՝ որպես ՀՀ Ձինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության բաղկացուցիչ մասի ներդրումը:

Բացի այդ, Հայաստան–ՆԱՏՕ «Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի» շրջանակներում Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է զարգացնել և ամրապնդել Ձինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության մեխանիզմները, նպաստել պաշտպանական և անվտանգային քաղաքականության մշակման գործում քաղաքացիական մասնագետների և հասարակական շրջանների ներգրավմանը:

Վերը նշվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Հայաստանի Հանրապետության Ձինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների ներդրումն ու դրանց զարգացումը որդեգրվել է որպես ՀՀ պաշտպանական քաղաքականության հիմնական և կարևոր ուղղություններից մեկը:

ՀՀ Ձինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության համակարգում առկա մեխանիզմների վերլուծությունից առաջ անհրաժեշտ է պարզաբանել զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության բովանդակությունը:

Ձինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողությունը, ըստ էության, ոչ զինվորական բնույթի հսկողություն է, որը նպատակաուղղված է համապատասխան պետական զինվորական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից գործող զինվորական օրենսդրության անշեղ իրականացման ապահովմանը⁵:

Այլ կերպ ասած՝ Ձինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղա-

⁴ Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թ. դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը հաստատելու մասին» հմ. ՆՀ-308-Ն հրամանագիրը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2008 թ., հմ. 1 (591)):

⁵ Տես *B. M. Ануцимов*. Гражданский контроль за военными структурами (<http://www.polistudies.ru/N2004fulltext/1995/4114.htm>):

քաղաքական վերահսկողությունը ՀՀ Սահմանադրության և օրենքներին համապատասխան իրավական, կազմակերպական և տեղեկատվական միջոցառումների մի ամբողջություն է, որն ուղղված է զինվորական կառավարման մարմինների գործունեության օրինականության ու թափանցիկության ապահովմանը:

Հաճախ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողությունը նույնացվում է պետական-քաղաքական վերահսկողության հետ, որն իրականացնում են քաղաքացիական պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք (Նախագահ, վարչապետ, ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, պաշտպանության նախարար և այլն): Իրականում դա ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության տարրերից մեկն է: Նշված հանգամանքը պայմանավորված է նրանով, որ, բացի պետական մարմիններից, ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողություն իրականացնում են նաև հասարակական, իրավապաշտպան կազմակերպությունները, զանգվածային լրատվության միջոցները և հենց իրենք՝ քաղաքացիները⁶: Հետևաբար, հռչակելով ՀՀ Ձինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության իրականացման կարևորությունը, չպետք է սահմանափակվել միայն պետական պաշտոններում քաղաքացիական պետական պաշտոնյաների նշանակմամբ: Անհրաժեշտ են համալիր միջոցառումներ, որոնք ուղղված լինեն ոչ միայն ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության առանձին տարրերի, այլև դրա համալիր մեխանիզմների ներդրմանը:

Հայաստանի Հանրապետությունում Ձինված ուժերի նկատմամբ քաղաքացիական ժողովրդավարական վերահսկողության համակարգը ներառում է՝

1. ՀՀ Նախագահի կողմից իրականացվող վերահսկողությունը,
2. ՀՀ Ազգային ժողովի կողմից իրականացվող վերահսկողությունը,
3. ՀՀ Կառավարության կողմից իրականացվող վերահսկողությունը,
4. ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացվող վերահսկողությունը,
5. հասարակական վերահսկողությունը (ՁԼՄ-ներ, հասարակական կազմակերպություններ և այլն):

ՀՀ Նախագահի կողմից իրականացվող վերահսկողության առանցքն են ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 12-րդ կետով նախատեսված լիազորությունները: Ըստ այդ հոդվածի՝ ՀՀ Նախագահը՝ որպես ՀՀ Ձինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատար, համակարգում է պետական մարմինների գործունեությունը պաշտպանության բնագավառում, ինչպես նաև նշանակում և ազատում է Ձինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը: Այստեղ, մեր կարծիքով, առավել քան կարևոր է ՀՀ Նախագահի կողմից պաշտպանության բնագավառում ուղենշվող կադրային քաղաքականությունը, քանի որ հենց կադրերի մարդկային, բարոյական հատկանիշներից և մասնագիտական

⁶ *Stu M. Gačko. Гражданский контроль над вооруженными силами России. «Обозревателю», 2007, № 1:*

գիտելիքներից է մեծապես կախված ոլորտի վերահսկելիության, օրինականության և թափանցիկության ապահովման մակարդակը:

ՀՀ Ձինված ուժերի նկատմամբ Ազգային ժողովի կողմից իրականացվող քաղաքացիական ժողովրդավարական վերահսկողության հիմնական օրենսդրական մեխանիզմը ՀՀ պետական բյուջեով նախատեսված պաշտպանական ծախսերի նկատմամբ վերահսկողությունն է: ՀՀ Սահմանադրության 76-րդ և 77-րդ հոդվածների համաձայն՝ Ազգային ժողովը կառավարության ներկայացմամբ հաստատում է պետական բյուջեն, ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի կատարման նկատմամբ: Ազգային ժողովի կողմից իրականացվող ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության միջնորդավորված մեխանիզմ կարելի է համարել նաև Ձինված ուժերի նկատմամբ վերահսկողությունը ՀՀ Վերահսկիչ պալատի միջոցով, քանի որ նրա գործունեության ծրագիրը հաստատում է Ազգային ժողովը: ՀՀ Սահմանադրության 83.4-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ Վերահսկիչ պալատն անկախ մարմին է, որը վերահսկողություն է իրականացնում բյուջետային միջոցների և պետական ու համայնքային սեփականության օգտագործման նկատմամբ: Նման մեխանիզմ կարելի է համարել նաև ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի կողմից իրականացվող վերահսկողությունը:

Ընդհանրապես, խորհրդարանական վերահսկողությունը համարվում է ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության կարևորագույն բաղադրիչը: Այդ է վկայում նաև ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի կողմից 2001 թ. նոյեմբերի 24-ի որոշմամբ հաստատված «Պետության ռազմական կազմավորման նկատմամբ խորհրդարանական վերահսկողության մասին» մոդելային օրենքը⁷, որը առաջարկվել է օգտագործել ԱՊՀ անդամ պետությունների օրենսդրություններում: Ըստ այդ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի՝ զինված ուժերի նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունը ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության կենտրոնական տարրն է, որը ենթադրում է խորհրդարանի կողմից համարժեք իրավական և վարչական միջոցների կիրառում՝ ուղղված զինված ուժերի արդյունավետ ղեկավարման, զինված ուժերի քաղաքական չեզոքության և ապաքաղաքականացման, զինծառայողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, զինված ուժերի գործունեության թափանցիկության ապահովմանն ու զինված ուժերի՝ որպես իրավական պետության անբաժանելի տարրի կայացմանը:

Հարկ է նշել, որ ԱՊՀ անդամ պետություններից զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ապահովման որոշակի փորձ ունի ՌԻԿրաինան: ԱՊՀ շրջանակներում այն միակ պետությունն է, որն ունի պետության

⁷ Стн «Постановление Межпарламентской Ассамблеи государств—участников Содружества Независимых Государств от 24 ноября 2001 г. № 18-13 о модельном законе «О парламентском контроле над военной организацией государства» (<http://docs.cntd.ru/document/901813101>):

ուժային կառույցների նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության հարաբերությունները կարգավորող առանձին օրենք: Մասնավորապես՝ 2008 թ. մարտի 19-ին ընդունված «Պետության ռազմական կառույցի և իրավապահ մարմինների նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության մասին» ՈՒԿրահնայի օրենքով սահմանվել են զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության հիմնական խնդիրները, սկզբունքները, կանոնակարգվել են զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության իրականացման ոլորտում խորհրդարանի, նախագահի, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները և այլն⁸:

ԱՊՀ մյուս պետություններում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում, դեռևս փորձ չի արվել պաշտպանական համակարգում քաղաքացիական վերահսկողության հետ կապված հարաբերությունները կարգավորելու օրենքի մակարդակով:

ՀՀ Կառավարության կողմից իրականացվող վերահսկողության բովանդակությունը Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության իրականացման ապահովումն է:

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացվող վերահսկողության էությունն ամրագրված է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում⁹: Այս օրենքի համաձայն՝ Մարդու իրավունքների պաշտպանը անկախ և անփոփոխելի պաշտոնատար անձ է, որն իրականացնում է պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Մարդու իրավունքների պաշտպանը քննարկում է պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ինչպես նաև միջազգային իրավունքի սկզբունքներով ու նորմերով նախատեսված՝ մարդու, և այդ թվում նաև քաղաքացու, իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման վերաբերյալ բողոքները:

ՀՀ Ձինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության կարևոր տարրերից է նաև հասարակական վերահսկողությունը, որն իրականացվում է հասարակական կազմակերպությունների, Ձինված ուժերում քաղաքացիական բաղադրիչի, ինչպես նաև հասարակական բնույթ ունեցող խորհրդակցական մարմինների միջոցով:

Ներկայումս ՀՀ պաշտպանական ոլորտում իրականացվող բարեփոխում-

⁸ Տես «Закон Украины от 19 июня 2003 г. № 975-IV «О демократическом гражданском контроле над военной организацией и правоохранительными органами государства»»:

⁹ Տես «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ 2003 թ. հոկտեմբերի 21-ի հմ. ՀՕ-23-Ն օրենքը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2003 թ., հմ. 58 (293)):

ներն անվերապահորեն ուղղված են նաև ՀՀ Ձինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների ներդրմանն ու ամրապնդմանը:

Այդ է վկայում ՀՀ պաշտպանական համակարգում քաղաքացիական հատուկ ծառայության բաղադրիչի ներդրումը, որի նպատակն է՝ պաշտպանության նախարարության համակարգում կանոնակարգել և արդյունավետ դարձնել ոչ զինվորական բնույթի խնդիրների համար պատասխանատու մասնագետների ծառայության կազմակերպումը, ապահովել անհրաժեշտ ոչ զինվորական լավագույն մասնագետների հոսքը դեպի համակարգ, կիրառել քաղաքացիական վերահսկողության որոշ մեխանիզմներ, ինչպես նաև նպաստել ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի կառավարման ոլորտի թափանցիկության ապահովմանը:

ՀՀ Ձինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության տարրերից է նաև ՀՀ պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհուրդը¹⁰: Հասարակական խորհուրդը խորհրդակցական մարմին է, որը պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության ձևավորման և իրականացման ընթացքում ապահովում է ՀՀ քաղաքացիների, հասարակական կազմակերպությունների և ՀՀ պաշտպանության նախարարության համագործակցությունը, ինչպես նաև նախարարության գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողության իրականացումը: Հասարակական խորհրդի հիմնական նպատակը Ձինված ուժերում մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության, ինչպես նաև Ձինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ապահովումն է:

Հասարակական վերահսկողության մեխանիզմներից է նաև Ձինված ուժերի գործունեության վերաբերյալ հասարակության իրազեկման ապահովումը: Այդ նպատակով ՀՀ պաշտպանության նախարարի 2007 թ. նոյեմբերի 13-ի հրամանով հաստատվել է «ՀՀ պաշտպանության նախարարության հանրային իրազեկման հայեցակարգը»¹¹:

«Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հանրային իրազեկման հայեցակարգը» հիմնականում միտված է սահմանելու պաշտպանության բնագավառի կատարելագործմանն ու արդիականացմանն ուղղված ծրագրերի վերաբերյալ հանրային իրազեկման քաղաքականության առաջնահերթություններն ու նպատակները, ինչպես նաև դրանց իրագործման վերաբերյալ հանրային իրազեկման ապահովման մեթոդներն ու միջոցները՝ նպաստելով պաշտպանության բնագավառի ընթացիկ ու ծրագրվող բարեփո-

¹⁰ Տես Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2009 թ. մայիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհրդի կանոնադրությունը հաստատելու մասին» հմ. 594 հրամանը:

¹¹ Տես «ՀՀ ՊՆ հանրային իրազեկման հայեցակարգ» (<http://www.mil.am/arm/index.php?page=111>):

խումների վերաբերյալ տեղեկացված լինելու՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների սահմանադրական իրավունքի իրացմանը:

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետության Ձինված ուժերը գտնվում են ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների ներդրման և կայացման փուլում:

Այսօր Հայաստանի Հանրապետությունը Ձինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության զարգացումը կարևորում է որպես պաշտպանական բարեփոխումների առանցքային խնդիր և հաստատուն քայլեր է կատարում՝ ուղղված այդ խնդրի լուծմանը:

ЗАКОНОДАТЕЛЬНЫЕ МЕХАНИЗМЫ ОБЕСПЕЧЕНИЯ ДЕМОКРАТИЧЕСКОГО ГРАЖДАНСКОГО КОНТРОЛЯ НАД ВООРУЖЕННЫМИ СИЛАМИ РА

А. С. НАЗАРЯН, Заместитель Министра обороны РА

РЕЗЮМЕ

В системе военной безопасности демократического правового государства важнейшее значение имеет обеспечение законности и транспарентности в сфере обороны путем внедрения системы демократического гражданского контроля над вооруженными силами. Данное положение в РА зафиксировано на уровне Конституции (Статья 8.2): «Вооруженные силы соблюдают нейтралитет в политических вопросах и находятся под гражданским контролем». Соответствующие обязательства РА приняла также в рамках «Программы действий индивидуального партнерства Армения—НАТО».

Развитие демократического гражданского контроля над Вооруженными силами является одним из основных направлений оборонной политики РА и расценивается как одна из стержневых задач оборонной реформы. Данный факт отражен в законодательных и политических документах, таких, как законы РА «Об обороне», «Об особой гражданской службе», «Стратегия национальной безопасности» и «Военная доктрина» РА.

Принятыми в РА формами демократического гражданского контроля над ВС являются контроль со стороны Президента РА в качестве Верховного Главнокомандующего, парламентский контроль путем принятия законов, регулирующих отношения в данной сфере, и утверждения военного бюджета, контроль со стороны СМИ и общественных организаций. В целях обеспечения прав и свобод человека в ВС создан институт советника Омбудсмана по вопросам военнослужащих, а также общественный совет при Министре обороны РА.

THE LEGISLATIVE MECHANISMS OF ENSURING DEMOCRATIC
CIVILIAN CONTROL OVER THE ARMED FORCES
OF THE REPUBLIC OF ARMENIA

A. S. NAZARYAN, Deputy Minister of Defense of the Republic of Armenia

SUMMARY

Ensuring lawfulness and transparency in the defense sphere through introduction of the system of democratic civilian control over the Armed Forces is of paramount significance in the system of military security of a democratic legal state. This provision is fixed at the level of the Constitution (Article 8.2): «The Armed Forces shall maintain the neutrality in political matters and remain under civilian control». The Republic of Armenia has also assumed corresponding commitments in the framework of Armenia—NATO Individual Partnership Action Plan Program.

The development of democratic civilian control over the Armed Forces is one of the main directions in the RA defense policy. It is regarded as one of the pivotal issues of defense reforming. This fact is reflected in legislative and political documents such as the RA Laws «On Defense», «On Special Civil Service», «National Security Strategy of the Republic of Armenia» and «The Military Doctrine of the Republic of Armenia».

The manifestations of democratic civilian control over the Armed Forces, adopted in the RA, are the following: the control by the RA President as the Supreme Commander; parliamentary control through the adoption of laws regulating relations in this sphere and passing the military budget; control by the mass media and non-governmental organizations. For ensuring the protection of individual rights and freedoms Institute of Advisor to Ombudsman on servicemen's affairs, as well as a Public Council under the RA Minister of Defense have been established in the Armed Forces.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵՔ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՏԻՊԵՐԸ
ԵՎ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԲԱՂԱՔԱԿԱՆ ՉԵԶՈՔՈՒԹՅԱՆ
ՈՒ ԴՐԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ**

*Ա. Գ. ՎԱՂԱՐՇՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Պեյրոբյան և իրավունքի տեսության
ու պատմության ամբիոնի վարիչ*



Հայաստանի սահմանադրական օրենսդրության զարգացման պատմությունն սկսվել է 20-րդ դարի սկզբին հայոց պետականության վերածնունդով և շարունակվում է մինչև մեր օրերը: Այդ ընթացքում սահմանադրաիրավական կարգավորումը անցել է երեք պատմական փուլ, որոնցից յուրաքանչյուրին հատուկ է սահմանադրական իրավունքի իր ուրույն տիպը:

Դրանցից առաջինը Հայաստանի առաջին Հանրապետությունում (1918–1920 թթ.) սահմանադրաիրավական կարգավորումն էր, որն արտացոլում է շուրջ 600 տարի անկախությունը կորցրած հայ ժողովրդի պետականության վերածնունդը՝ խորհրդարանական հանրապետության ձևով: 1918 թ. մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի անկախությունը: Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի Անկախության հռչակագիրը սահմանադրական իրավական ակտ էր, որում ասված էր. «Հայոց ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն... Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական գավառների քաղաքական և վարչական դեկլարելու համար»¹:

Հայոց ազգային խորհուրդն իր գործունեությունն սկսեց ծանր արտաքին քաղաքական, տնտեսական և սոցիալական իրադրությունում: Իրավիճակը բարդանում էր նաև այն հանգամանքով, որ այդ մարմինը կոչված էր պետական կառավարում իրականացնելու նորանկախ պետությունում պետական ապարատի ձևավորման պայմաններում: Այս բացառիկ պայմաններն էլ կանխորոշում էին կառավարության գլխավոր խնդիրը՝ «կասեցնել քայքայման գործընթացը, հանել երկիրն անիշխանության վիճակից ու պայմաններ ստեղծել պետական շինարարության համար Անձև քառսի և ավերակների կույտից նա պետք է ստեղծի կենսունակ և աշխատող մի մարմին»²:

¹ Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն: Փարիզ, 1928, էջ 131–132:
² «Հ. Քաջազնունու կառավարության հայտարարությունը 1918 թ. օգոստոսի 3-ին»: «Զանգ», 1918 թ. օգոստոս, հմ. 43:

1918 թ. օգոստոսի 3-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի խորհրդի հաստատմանը ներկայացրեց իր հայտարարությունը, որի դրույթների մեծ մասը վերաբերում էր առօրյա հիմնախնդիրներին ներքին գործերի, ֆինանսների, արդարադատության, պաշտպանության, արտաքին գործերի ոլորտներում: Այն հեռանկարային ծրագրեր չէր պարունակում, սահմանադրական բնույթի ակտ չէր, այլ միայն նախատեսում էր գումարել Հայաստանի Սահմանադիր ժողովը, որն էլ պետք է մշակեր և ընդուներ Հայաստանի Սահմանադրությունը: Սահմանադրության հարցում և՛ հանրապետության քաղաքական ղեկավարության, և՛ օրենսդիր մարմնի, և՛ ընդդիմադիր քաղաքական որոշ ուժերի դիրքորոշումը եղել է հետևյալը. «ՀՀ Սահմանադրությունը կընդունվի ապագայում խաղաղություն հաստատվելուց և ՀՀ տարածքային սահմանների հարցի վերջնական լուծումից հետո՝ Սահմանադիր ժողովի կողմից»³:

Այսպիսով՝ Հայաստանի առաջին Հանրապետության իրավական համակարգը, որը գոյատևեց ընդամենը երկու և կես տարի, չհասցրեց ունենալ իր սահմանադրությունը*: Սակայն հանրապետությունում ընդունվել և գործել են հիմնադիր, սահմանադիր բնույթի նորմատիվ իրավական ակտեր, որոնց սահմանադրական-իրավական բովանդակությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ դրանք՝ կարգավորում էին պետության և անհատի փոխհարաբերությունները, պետական իշխանության կառույցների ստեղծման և գործունեության հարաբերությունները: Նման ակտերից էին հանրապետության կառավարության հայտարարագրերը (հռչակագրերը) և տարբեր ժամանակներում ընդունված օրենքները՝ Հայաստանի խորհրդի հրահանգը (1918 թ. օգոստոս), որը ժամանակակից նորմատիվ կարգավորման համակարգում համապատասխանում է խորհրդարանի կանոնակարգին, Հայաստանի խորհրդարանի ընտրությունների մասին օրենքը (1919 թ. ապրիլ), Հպատակության (քաղաքացիության) մասին օրենքը (1920 թ. մայիս): ՀՀ-ում գործել են նաև բազմաթիվ այլ

³ Նույն տեղում:

* ՀՀ արդարադատության նախարարությունում 1920 թ. սկզբներին՝ նախարար Ա. Չիլինգարյանի պաշտոնավարության օրոք, հավանաբար հանրապետության քաղաքական ղեկավարության համաձայնությամբ, աշխատանքներ են տարվել նաև ՀՀ Սահմանադրության նախագծի մշակման ուղղությամբ: Հանրապետության քաղաքական ղեկավարության հանձնարարությամբ Ա. Չիլինգարյանը 1920 թ. ապրիլի 14-ի նամակով Ս. Տիգրանյանին և Հ. Մամանդյանին (որոնք այդ ժամանակ աշխատում էին Ալեքսանդրապոլում որպես համալսարանի դասախոսներ) առաջարկում է մեկ ամսվա ընթացքում կազմել ՀՀ Սահմանադրության նախագիծը: Մայիսյան իրադարձությունները և հանրապետության քաղաքական կյանքի հետագա դեպքերը ընդհատեցին այս ուղղությամբ կատարվող աշխատանքները: ՀՀ Սահմանադրության մշակման խնդիրներով զբաղվել է նաև «Հայաստանի իրավաբանական ընկերություն» հասարակական կազմակերպությունը, որի հիմնադիր ժողովը տեղի է ունեցել 1919 թ. ապրիլի 26-ին: Նույն թվականի մայիսի 7-ին Շրջանային դատարանը հաստատել և ցուցակագրել է «Հայաստանի իրավաբանական ընկերության» կանոնադրությունը: Այնուհետև ընկերությունը, անցնելով գործի, հիմնել է դատավարության և դատարանակազմության, նյութական իրավունքի, հայկական իրավունքի, մահմեդական իրավունքի, Հայաստանի Սահմանադրության հարցերը ուսումնասիրելու և մշակելու հանձնաժողովներ:

օրենքներ՝ ընդունված օրենսդիր մարմինների և օրենսդիր լիազորություններով օժտված կառավարության կողմից: Այդ օրենքները կարգավորում էին կառավարության և խորհրդարանի փոխհարաբերությունները, պետական իշխանության համակարգի կազմակերպման ու գործունեության հարաբերությունները*:

Առաջին հանրապետության կարևորագույն գործառնություններից էր երկրի պաշտպանությունը, որը իրականացվում էր հատուկ պետաիրավական հաստատությունների համակարգի միջոցով: Այդ գործառնությի ենթադրում էր երկրի պաշտպանական համակարգի ձևավորում և կառավարում, նպատակամղված էր հատուկ կառուցվածքային կազմավորման՝ հայկական բանակի կայացմանը: Պաշտպանական համակարգը գործում էր ռուսաստանյան և հանրապետական իրավական ակտերի հիման վրա, որոնց հետազոտությունը հնարավորություն է ընձեռում եզրակացնելու, որ Առաջին հանրապետության պետական կառուցակարգում օրենսդիր մարմիններն ունեցել են հետևյալ լիազորությունները. պաշտպանական բյուջեի հաստատման միջոցով բանակի ֆինանսատնտեսական ապահովման հիմքերի ստեղծում, պաշտպանական ոլորտի օրենքների ընդունում, պատերազմի և խաղաղության հարցերով որոշումների ընդունում, քաղաքական հսկողություն Ձինված ուժերի գործունեության նկատմամբ՝ խորհրդարանական լիազորությունների և ընթացակարգերի միջոցով: Պաշտպանական համակարգի կառավարման ենթադրվող լիազորությունների և պատասխանատվության մեծ մասը կենտրոնացված էր գործադիր իշխանության համակարգում՝ ի դեմս կառավարության, զինվորական (ռազմական) նախարարության և այլ մարմինների: Կառավարությունն իրականացնում էր երկրի պաշտպանության իրավական ու կազմակերպական միջոցառումները և պատասխանատվություն էր կրում Ձինված ուժերի վիճակի և ապահովման համար: Այդ խնդրի կենսագործման համար նա օժտված էր համապատասխան գործադիր լիազորություններով⁴:

Հայաստանի խորհուրդը (1918–1919 թթ. միակ օրենսդիր մարմինը**) 1919 թ.

* Առաջին հանրապետության պետական շինարարության և իրավական համակարգի առանձնահատկություններից էր այն, որ Հայաստանի խորհուրդը 1918 թ. դեկտեմբերի 6-ին օրենսդիր հանձնաժողովի առաջարկությամբ ընդունել էր «Նախկին Ռուսական Կայսրության օրենքները ՀՀ տարածքի վրա գործադրման մասին» օրենք, համաձայն որի՝ ՀՀ տարածքում ժամանակավորապես գործադրվելու էին նախկին Ռուսական Կայսրության օրենքները՝ ժամանակավոր կառավարության, Անդրկովկասյան կոմիսարիատի, Սեյմի, Հայաստանի խորհրդի փոփոխություններով ու լրացումներով: Այդ քայլը, որը հետագայում խորհրդահայ իրավագիտությունը որակել է որպես հետադիմական, ժամանակավոր ստիպողական միջոցառում էր, քանի որ իրավական համակարգը միանգամից ստեղծել հնարավոր չէր: Մյուս կողմից՝ ռուսական օրենսդրությունը փետրվարյան հեղափոխությունից հետո կրած փոփոխությունների շնորհիվ գրեթե կորցրել էր իր հակաժողովրդավարական բնույթը:

⁴ Այդ մասին ավելի մանրամասն տես Ա. Գ. Վաղարշյան, Հայաստանի առաջին Հանրապետության կառավարության լիազորությունները և իրավական գործունեությունը երկրի պաշտպանության ոլորտում: «ՀԲ», 2008, հմ. 2–3:

** 1919 թ. ապրիլի 27-ից մինչև օգոստոսի մեկը և 1920 թ. մայիսի 4-ից մինչև Հանրապետության անկումը Կառավարությունը խորհրդարանի հատուկ օրենքներով օժտված էր նաև օրենսդրական լիազորություններով:

մարտի 31-ին ընդունել է «Հայաստանի Պառլամենտի ընտրությունների մասին» օրենքը, որը ուժի մեջ է մտել 1919 թ. ապրիլի 1-ին: Համաձայն այդ օրենքի՝ քսան տարին լրացած յուրաքանչյուր քաղաքացի, առանց սեռի, կրոնի և ազգության խտրության, իրավունք ունենալու մասնակցելու ընտրություններին: Ընտրությունը պիտի կատարվեր ընդհանուր, գաղտնի, հավասար և ուղղակի քվեարկությամբ: Այդ օրենքի հիման վրա հետագայում կազմակերպվեցին Հայաստանի խորհրդարանի ընտրությունները: Խորհրդարանն սկսեց գործել 1919 թ. օգոստոսի 1-ին: «Հայաստանի Պառլամենտի ընտրությունների մասին» օրենքն ամրագրում էր ընտրական իրավունքի այնպիսի սկզբունքներ, որոնք մեզ հիմք են տալիս ասելու, որ ընտրական համակարգն իր ձևակազմական հատկանիշներով ուներ ժողովրդավարական բնույթ: Մեզ հետաքրքրող հիմնահարցի տեսանկյունից ուշագրավ է այն փաստը, որ ակտիվ ընտրական իրավունքից զրկվող մի շարք կատեգորիաների քաղաքացիների մեջ մտնում էին նաև «խկական զինվորական ծառայության մեջ գտնվող անձինք»*: Առաջին հանրապետությունում պասիվ ընտրական իրավունք (ընտրվելու) ունեին ակտիվ ընտրական իրավունքով (ընտրելու) օժտված բոլոր քաղաքացիները: Այդ մոտեցումը որդեգրվեց նաև հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների ընտրական գործընթացների օրենսդրական կարգավորման գործում:

Այսպիսով՝ Առաջին հանրապետության օրենսդրությունը որպես ՁՈՒ-ի քաղաքական չեզոքության և ապաքաղաքականացվածության երաշխիք «խկական զինվորական ծառայության մեջ գտնվող անձանց» զրկում էր և՛ խորհրդարանական, և՛ տեղական ինքնակառավարման մարմինների ակտիվ ու պասիվ ընտրական իրավունքից:

ՁՈՒ-ի նախանշանակումն ու գործառնությունները չունեին հստակ իրավաօրենսդրական ամրագրում: Սակայն Առաջին հանրապետության օրենսդրական նյութի և կառավարական ակտերի մանրագնին հետազոտությունը ցույց է տալիս, որ բանակի առաքելությունը երկրի անվտանգության և պաշտպանության ապահովումն էր: Այսպես Ս. Վրացյանի կառավարության հայտարարագիրը, որը, ցավոք, մնաց չիրագործված, ազդարարում էր. «Այսուհանդերձ մենք զիտակցում ենք, որ հասարակական ներկա կարգերում տարաբախտաբար իշխողը դեռ ոչ թե արդարությունն է, այլ ուժը: Եվ պետական ամեն մի կազմավորում իր գոյությունը և արդար իրավունքները ապահովելու համար ստիպված է ունենալ կազմակերպված համառ ռազմական ուժ: Ուժտի և կառավարության գլխա-

* Ընտրական իրավունքից զրկված քաղաքացիների մնացած կատեգորիաներն էին՝ ա) օրինական կարգով «խենք կամ խելագար» ճանաչված անձինք, բ) խուլ ու համրերը, որոնք ենթակա էին խնամակալության, գ) օրենքում թվարկված մի շարք քրեական հանցագործությունների համար դատապարտված անձինք, եթե նրանց իրավունքները չէին վերականգնվել, դ) մեղադրյալները, եթե նրանց նկատմամբ որպես խափանման միջոց էր կիրառվել «պահակի հսկողությամբ պահելը», ե) դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով ընտրական իրավունքից զրկված անձինք (ընտրական իրավունքից զրկելը քրեական պատժատեսակներից էր), զ) դատարանի դատավճռով որպես «չարամիտ սնանկ» ճանաչված անձինք, եթե այդ ճանաչումից երեք տարի չէր անցել:

վոր հոգսերից մեկը պիտի լինի երկրի ուժերի հավաքումը և ժողովրդական կուռ բանակի կազմակերպումը»⁵:

Այսպիսով՝ Առաջին հանրապետության իրավական շինարարության պատմությունը հետազոտելիս մենք նկատում ենք, որ որդեգրված էր ՁՈՒ-ի կարգավիճակի, դրա նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ազատական մոդելը, որը խարսխված էր իշխանությունների տարանջատման և քաղաքական համակարգի սուբյեկտների ու ՁՈՒ-ի լիազորությունների սահմանազատման վրա: Սակայն այդ մոդելը չունեի սահմանադրական կարգավորում, այլ միայն ընթացիկ օրենսդրական էր: ՁՈՒ-ի քաղաքական չեզոքության և ՁՈՒ-ի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքները ուղղակիորեն, բառացիորեն ամրագրված չէին օրենսդրության մեջ, սակայն, այնուամենայնիվ, ենթադրվում էին և ըստ էության կենսագործված էին իրավական կարգավորման մեխանիզմում: Ընդ որում՝ հատուկ օրենսդրական կարգավորում էր ստացել ՁՈՒ-ի քաղաքական չեզոքության սկզբունքը՝ զինվորականների ընտրական իրավունքների սահմանափակման տեսանկյունից, ինչը նույնիսկ մեր օրերի համար բավականին «կոշտ» մոտեցում է և երաշխիք է զինված ուժերի քաղաքական չեզոքության իրավական կարգավորման հարցում:

Հայաստանի առաջին Հանրապետության գոյության դժվարին պայմաններում նոր ձևավորված հանրապետական կարգերը, խորհրդարանականությունը չունեցան իրենց բնականոն պատմական զարգացումը, որովհետև ընդհատվեցին բոլշևիկյան ամբողջատիրության և դրան համապատասխանող սահմանադրական իրավական կարգավորման հաստատմամբ: Այս շրջանում բուն Հայաստանում սահմանադրական-իրավական կարգավորման մասին կարելի է խոսել միայն մինչև ԽՍՀՄ կազմի մեջ ՀԽՍՀ մտնելը: Դրանից հետո Հայաստանը փաստորեն կառավարվում էր Անդրֆեդերացիայի, իսկ այնուհետև՝ ԽՍՀ Միության օրենքների և մարմինների միջոցով, իսկ ՀԽՍՀ սահմանադրություններն արտացոլում էին ԽՍՀՄ սահմանադրությունների սկզբունքները: Թեև դրանք ՀԽՍՀ-ն հայտարարում էին ինքնիշխան պետություն, բայց իրականում հանրապետության պետական մարմինները և իրավական համակարգը խստորեն ենթարկված էին միութենական պետության կենտրոնացված իշխանության համակարգին: Ամբողջատիրական սահմանադրական իրավունքի, սոցիալիստական սահմանադրությունների ելակետային սկզբունքները և պատմական զարգացումը պայմանավորված էին մարքս-լենինյան ուսմունքով, որը պետությունը դիտում էր որպես կոմունիզմի կառուցման նպատակով բոլոր հասարակական հարաբերությունների վերակառուցման գլխավոր գործիք:

Հայաստանի երկրորդ Հանրապետության սահմանադրական զարգացումը (1920–1990 թթ.) արտացոլում է բոլշևիզմի հաղթանակի հետևանքով Հայաստանում ամբողջատիրական սահմանադրական իրավական կարգավորման հաս-

⁵ «Ս. Վրացյանի կառավարության 1920 թ. նոյեմբերի դեկլարացիան»: ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 487, ք. 121:

տատումը և տարբեր տարատեսակներով դրա գոյատևումը մինչև Երրորդ հանրապետության հռչակումը: Քաղաքական իշխանությունն անբաժանելիորեն գտնվում էր կոմկուսի ձեռքում, իսկ տարբեր տեսակի պետական կառույցները (խորհուրդներ, գործադիր և դատական մարմիններ), ինչպես նաև ՁՈՒ-ն լրիվ կախված էին կուսակցական որոշումներից:

Պրոլետարիատի դիկտատուրայի համակարգում կոմկուսի ղեկավար դերը բացառում էր իշխանությունների բաժանման հնարավորությունը: Պրոլետարիատի դիկտատուրան՝ իր հակախորհրդարանականությամբ, իշխանությունների տարանջատման և մարդու իրավունքների մերժմամբ, ուժային նորմերի գերիշխանությամբ և այլն, ըստ մարքսիզմի, պետք է պահպանվեր մինչև «լրիվ կոմունիզմ»: Այդ դոկտրինը սոցիալիզմի համար այլ պետություն, բացի կուսակցական դասակարգային դիկտատուրայից, չէր նախատեսում: Նման պայմաններում ՁՈՒ-ի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը և դրանց քաղաքական չեզոքությունը սահմանադրական-իրավական հիմնախնդիր չէին: Ավելին. ՁՈՒ-ն քաղաքականապես չեզոք չէին, որովհետև դրանցում գործում էին կոմկուսի սկզբնական կուսակցական կազմակերպությունները:

Եվրոպական սահմանադրական իրավունքի մասին գիտության համար նշված հիմնահարցերը իրական սահմանադրական հիմնախնդիրներ էին, հետևաբար այն ձգտում էր դրանց տալ արդյունավետ սահմանադրական կամ օրենսդրական կարգավորում, հատկապես այն երկրներում, որտեղ զինված ուժերի նկատմամբ վերահսկողության հիմնահարցը և դրանց քաղաքական չեզոքության սկզբունքը սրված էին: Խորհրդային պետութենագիտության համար ՁՈՒ-ի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը և դրանց քաղաքական չեզոքությունը կառուցված էին հակառակ մեկնակետի վրա, այսինքն՝ ՁՈՒ-ն չեն կարող լինել քաղաքականապես չեզոք, որովհետև դրանք կուսակցության՝ քաղաքական համակարգի միջուկի, հասարակության ղեկավար և ուղղորդող ուժի «զինված պահապաններն էին»: Այդ մոտեցման իրավական հետևանքն այն էր, որ ՁՈՒ-ի առաքելությունը, կազմակերպումն ու գործունեությունը սահմանադրորեն չէին կարգավորվում: Ո՛չ ՀԽՍՀ 1922 թ. Սահմանադրությունը, ո՛չ էլ 1937 թ. Սահմանադրությունը որևէ կերպ չեն անդրադառնում այդ հիմնահարցի կարգավորմանը:

1960-ական թվականների սկզբներին կոմկուսն առաջ քաշեց պրոլետարիատի դիկտատուրայից համաժողովրդական պետության անցնելու վերաբերյալ դրույթ: Սակայն ինչպես այդ դրույթը, այնպես էլ դրա ամրագրումը բրեժնևյան 1977 թ. Սահմանադրության մեջ կրում էին հայտարարական բնույթ, քանի որ, ըստ էության, անձեռնմխելի էին մնում պրոլետարիատի դիկտատուրայի բոլոր նախկին հիմքային և վերնաշենքային կառույցները՝ ԽՍՀՄ մենաշնորհային կառավարմամբ: ԽՍՀՄ 1977 թ. և ՀԽՍՀ 1978 թ. Սահմանադրությունները ՁՈՒ-ի կարգավիճակի հարցում մի քայլ առաջ անցան նախորդ սահմանադրություններից: ՀԽՍՀ 1978 թ. Սահմանադրության 1-ին՝ ՀԽՍՀ հասարակարգի և քաղա-

քականության հիմունքները, բաժնի 4-րդ գլուխը կարգավորում էր արտաքին քաղաքական գործունեության և սոցիալիստական հայրենիքի պաշտպանության հիմունքները: Սահմանադրության 29-րդ և 30-րդ հոդվածները սահմանում էին, որ՝

1) հայրենիքի պաշտպանությունը պետության կարևորագույն գործառույթներից է և ամբողջ ժողովրդի գործը, պետությունը պարտավոր է ապահովել երկրի անվտանգությունը և պաշտպանունակությունը, հանդերձել ՉՈՒ-ն,

2) ՉՈՒ-ի ստեղծման համար սահմանվում է ընդհանուր զինապարտություն,

3) ՉՈՒ-ի սահմանադրական գործառույթներն են՝ սոցիալիստական նվաճումների, խորհրդային ժողովրդի խաղաղ աշխատանքի, պետության ինքնիշխանության և տարածքային ամբողջականության պաշտպանությունը,

4) երկրի անվտանգության ապահովման և պաշտպանունակության ամրապնդման ոլորտի իրավական կարգավորումը հայտարարվում է ԽՍՀ Միության բացառիկ իրավասությունը:

Այսպիսով՝ 1970-ական թվականների սահմանադրական բարեփոխումների շնորհիվ սահմանադրական կարգավորման ենթարկվեցին խորհրդային ՉՈՒ-ի նախանշանակումը և դրան առնչվող մի շարք հիմնահարցեր: Սակայն ՉՈՒ-ի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության և դրանց քաղաքական չեզոքության սկզբունքները չունեին սահմանադրական ամրագրում, որովհետև համաժողովրդական սոցիալիստական պետության սահմանադրական կարգավորումը չէր հրաժարվել այդ սկզբունքների նկատմամբ «պրոլետարիատի դիկտատուրայի պետության» մոտեցումից: Նշված սկզբունքների նկատմամբ հայեցակարգային մոտեցումները պահպանեցին իրենց ուժը և դիրքերը նաև վերակառուցման տարիներին, երբ խորհրդային ղեկավարությունն ստիպված եղավ գնալու որոշ զիջումների. հարաբերականորեն ազատ և այլընտրանքային ընտրություններ, բարձրագույն ներկայացուցչական և գործադիր մարմինների մասնակի բարենորոգում, ԽՍՀՄ մշտապես գործող Գերագույն խորհրդի կազմավորում, ԽՍՀՄ պրեզիդենտի հաստատության ներքերում, ԽՍԿԿ ղեկավար և ուղղորդող դերի վերաբերյալ սահմանադրական նորմի վերացում⁶: Թերևս սոցիալիստական իրավական պետության հայեցակարգի կենսագործումը խորհրդային պետութենագիտությունը կհանգեցնե՞ր նշված սկզբունքների իմաստավորմանը և դրանց սահմանադրական ամրագրման անհրաժեշտության ճանաչմանը, սակայն հետագա քաղաքական իրադարձությունները դադարեցրեցին այդ գործընթացների զարգացումը:

Երրորդ հայկական հանրապետության սահմանադրական զարգացումը (1990 թ. մինչև մեր օրերը) նպատակաուղղված է նոր՝ ժամանակակից տիպի սահմանադրաիրավական կարգավորման ձևավորմանը և արտացոլում է

⁶ 1988 թ. ԽՍԿԿ համամիութենական 19-րդ խորհրդաժողովը հռչակեց, որ սկզբունքորեն կարևոր նշանակության գործ է համարվում սոցիալիստական իրավական պետության՝ որպես սոցիալիզմի գաղափարների լիովին համապատասխանող քաղաքական իշխանության կազմակերպված քի կերտումը (տես «Материалы XIX Всесоюзной конференции КПСС». М., 1988, с. 122):

ամբողջատիրությունից քաղաքացիական հասարակությանն ու ինքնիշխան, իրավական, ժողովրդավարական պետությանն անցումը:

Դիտարկելով պատմական այն աստիճանները, որոնցով անցել է Հայաստանի սահմանադրական զարգացումը, կարելի է նկատել, որ այդ զարգացման մեջ չկա պատմական հաջորդականություն: Դրանց միջև կապ չլինելու հանգամանքը հնարավորություն չի տալիս Հայաստանի սահմանադրական զարգացումը դիտելու միասնական պատմական գործընթացի շրջանակներում, քանի որ պատմաքաղաքական և գաղափարախոսական հանգամանքների բերումով դրանում յուրաքանչյուր նոր աստիճան սկզբունքորեն բացասում է նախորդը:

Արդի ժողովրդավարական սահմանադրաիրավական կարգավորումը «սկզբունքորեն բացասում է ամբողջատիրական տիպը, սակայն «բացասման բացասման» միջոցով այն, կարծես թե, պետությունը վերադարձնում է բոլշևիկյան հեղափոխությամբ ընդհատված զարգացման փուլին: Այդուհանդերձ, դա ոչ թե պարզ վերադարձ է, այլ ավելի շատ համաշխարհային քաղաքակրթության մշակած ժողովրդավարական սկզբունքների ընկալում»⁷: Այսպիսով՝ Երրորդ հանրապետության նոր Սահմանադրությունը, մի կողմից, վերականգնում է ժամանակների կապը (Հայաստանի առաջին Հանրապետության հետ), իսկ մյուս կողմից՝ նոր պատմական հիմքի վրա վերածնում է հայոց պետականությունը:

1995 թ. հանրաքվեով ընդունված ՀՀ Սահմանադրությունը ուղակիորեն չէր կարգավորում ո՛չ ԶՈՒ-ի առաքելությունը, ո՛չ էլ դրանց կազմակերպման ու գործունեության սկզբունքները: Սակայն Սահմանադրության որդեգրած հայեցակարգները ենթադրում էին դրանց ազատական մոդելի վրա կառուցված կարգավորում, որն իրականացվում էր ընթացիկ օրենսդրության միջոցով: 2005 թ. Սահմանադրության «Սահմանադրական կարգի հիմունքները» առաջին գլխի 8.2-րդ հոդվածում կարգավորվում են ՀՀ Զինված ուժերի սահմանադրական նախանշանակումն ու գործառույթները, և դրանց կազմակերպման ու գործունեության երկու կարևոր սկզբունքները: Համաձայն Սահմանադրության այդ հոդվածի՝ «Հայաստանի Հանրապետության զինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության անվտանգությունը, պաշտպանությունը և տարածքային ամբողջականությունը, նրա սահմանների անձեռնմխելիությունը: Զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո»:

Սահմանադրության նշված հոդվածը պարունակում է երեք առանձին հիմնադրույթներ.

- ա) Զինված ուժերի սահմանադրական գործառույթները,
- բ) Զինված ուժերի քաղաքական չեզոքության սկզբունքը,
- գ) Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքը:

ՀՀ ԶՈՒ-ի սահմանադրական գործառույթներն են՝ Հայաստանի Հանրապե-

⁷ М. В. Баглай, Б. Н. Габричугзе. Конституционное право РФ. М., 1996, с. 42.

տության անվտանգության, պաշտպանության և տարածքային ամբողջականության, նրա սահմանների անձեռնմխելիության ապահովումը: Սահմանադրական այս դրույթի նշանակությունն այն է, որ Ձինված ուժերը չեն կարող կիրառվել ուրիշ նպատակով: Դրան համապատասխան՝ մի շարք սահմանադրական այլ հոդվածներ կարգավորում են զինված ուժերի կառավարման և կիրառման հարաբերությունները: Այսպիսով՝ Սահմանադրությունը երկրի պաշտպանությունն անուղղակիորեն ճանաչում է որպես պետության կարևորագույն արտաքին գործառույթ: Այդ գործառույթը քաղաքական, դիվանագիտական, տնտեսական, ռազմական, սոցիալական, իրավական և այլ միջոցների համակարգ է, որի նպատակն է պատրաստել պետությունը պաշտպանությանը, ինչպես նաև պետության, նրա տարածքային ամբողջականության ու անձեռնմխելիության զինված պաշտպանությունը (ներառյալ՝ բուն ռազմական գործողությունները): Պաշտպանական համակարգի ձևավորման ու կայացման գործում էական դեր է խաղում պետական իշխանության ամբողջ համակարգը: Սակայն այդ համակարգում գլխավորը Ձինված ուժերն են:

Սահմանադրությունը ամրագրում է Ձինված ուժերի քաղաքական չեզոքության սկզբունքը: Սահմանադրական այս սկզբունքի համաձայն Ձինված ուժերի պարտականությունն է՝ չմասնակցել ներքին քաղաքական պայքարին, չմիջամտել քաղաքական գործընթացներին: Միևնույն ժամանակ, պետական համապատասխան մարմինները և քաղաքական համակարգի սուբյեկտները պարտավոր են Ձինված ուժերը չներքաշել քաղաքական գործընթացների մեջ: Ձինված ուժերի չեզոքության սկզբունքի երաշխիքը դրանց ապաքաղաքականացումն է: Ապաքաղաքականացումը գործընթաց է և ձեռքբերում, որի նպատակն է Ձինված ուժերը դուրս բերել քաղաքականության ակտիվ ներգործության շրջանակից և, ամենից առաջ, այս կամ այն կուսակցության քաղաքական ազդեցությունից: Բացի այդ, պետք է արգելվի քաղաքական կազմակերպությունների գործունեությունը և դրանց կառույցների ստեղծումը Ձինված ուժերում: Ձինված ուժերում և այլ զինված կազմակերպություններում պետք է արգելվի ցանկացած քաղաքական քարոզչություն, այդ թվում՝ ընտրական: Այս դրույթի երաշխիքը Սահմանադրության 28-րդ հոդվածն է, որն ամրագրում է միավորումներ կազմելու սահմանադրական իրավունքի սահմանափակման հիմքերը. «Կուսակցություններ և արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքներն օրենքով սահմանված կարգով կարող են սահմանափակվել զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողների, ինչպես նաև դատավորների և սահմանադրական դատարանի անդամի նկատմամբ»*: «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի

* Սահմանադրության 28-րդ հոդվածի 3-րդ մասը օգտագործում է «օրենքով սահմանված կարգով կարող են սահմանափակվել» արտահայտությունը. ինչը սակայն չի նշանակում, թե դա օրենսդրի հայեցողական լիազորությունն է: Սահմանադրության 28-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով միավորումներ կազմելու կամ դրանց անդամագրվելու իրավունքների սահմանափակման ոլորտների մեծ մասը սահմանադրական անհրաժեշտություն է, որը բխում է Սահմանադրության 8.2-րդ հոդվածից

10-րդ հոդվածի 2-րդ մասով կուսակցության անդամ չեն կարող լինել նաև ՀՀ ՁՈՒ-ի և այլ գործերի ծառայողները⁸: Համապատասխանաբար՝ «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքը սահմանափակում է արհեստակցական միություններին Ձինված ուժերի և իրավապահ մարմինների ծառայողների՝ անդամակցելու իրավունքները: ՁՈՒ-ի քաղաքական չեզոքության սկզբունքի երաշխիք է նաև Սահմանադրության 29-րդ հոդվածի 2-րդ մասը. «Ձինված ուժերում, ոստիկանությունում, ազգային անվտանգության, դատախազության մարմիններում ծառայողների, ինչպես նաև դատավորների և սահմանադրական դատարանի անդամների կողմից այդ իրավունքների իրականացման սահմանափակումներ կարող են նախատեսվել միայն օրենքով»: Սահմանադրական նման կարգավորման պայմաններում ընթացիկ օրենքները զինծառայողներին արգելում են կազմակերպել հավաքներ կամ մասնակցել դրանց:

Ձինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքը շատ կարևոր նշանակություն ունի ժողովրդավարության կայացման համար: Ձինված ուժերը պետական ծառայողների՝ փակ, ստորակարգությամբ կազմակերպված և զինված ամբողջություն են: Պատմական փորձը վկայում է, որ զինված ուժերը կարիք ունեն քաղաքացիական վերահսկողության, քանի որ դրանք զենքը կարող են օգտագործել իշխանությունը նվաճելու կամ որոշակի քաղաքական ուժերի աջակցելու նպատակով:

Այսպիսով՝ արդի աշխարհում գործում է զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ազատական մոդելը, որը խարսխված է քաղաքական համակարգի սուբյեկտների և զինված ուժերի լիազորությունների խստիվ սահմանազատման վրա: Հասարակության մեջ հաստատված է փոխհամաձայնություն, ըստ որի՝ քաղաքականությունը զինվորականության զբաղմունքը չէ:

ՀՀ բարեփոխված Սահմանադրությունը, ի տարբերություն սահմանադրական կարգավորման նախորդ երկու տիպերից, հստակ և ուղղակի կերպով ամրագրում է թե՛ ՁՈՒ-ի սահմանադրական նախանշանակումը և գործառույթները, թե՛ դրանց կազմակերպման ու գործունեության երկու կարևորագույն՝ ՁՈՒ-ի քաղաքական չեզոքության ու ՁՈՒ-ի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ժողովրդավարական սկզբունքները, ինչպես նաև դրանց բազմաթիվ երաշխիքներ՝ հանձինս մարդու իրավունքների ու ազատությունների, պաշտպանական ոլորտում պետական իշխանության մարմինների լիազորությունների:

(Ձինված ուժերի չեզոքության սկզբունքը, իշխանությունների տարանջատման սկզբունքի անձնական առումից (տես Սահմանադրության 5-րդ հոդվածի մեկնաբանությունը (<http://www.concourt.am/armenian/library/cclibrary/2010/sahmanadrakan2010.pdf>)), դատախազության և դատական իշխանության անկախության սկզբունքներից և այլն:

⁸ Տես «Կուսակցությունների մասին» ՀՀ 2002 թվականի հուլիսի 3-ի հմ. ՀՕ-410-Ն օրենքը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2002 թ., հմ. 34 (209)):

ТИПЫ КОНСТИТУЦИОННОГО РЕГУЛИРОВАНИЯ
И КОНСТИТУЦИОННО-ПРАВОВОЕ ЗАКРЕПЛЕНИЕ
ПРИНЦИПОВ ПОЛИТИЧЕСКОГО НЕЙТРАЛИТЕТА
ВООРУЖЕННЫХ СИЛ И ГРАЖДАНСКОГО КОНТРОЛЯ
НАД НИМИ В ТРЕХ РЕСПУБЛИКАХ АРМЕНИЯ

*А. Г. ВАГАРШЯН, кандидат юридических наук, доцент, заведующий кафедрой
теории и истории государства и права юридического факультета ЕГУ*

РЕЗЮМЕ

В Первой Республике была установлена либеральная модель статуса ВС и гражданского контроля над ними. Но эта модель имела не конституционное, а только текущее законодательное регулирование. Принципы политического нейтралитета ВС и гражданского контроля над ними не имели прямого законодательного закрепления, однако они были претворены в механизме правового регулирования. Особо и довольно жестко была закреплена одна из гарантий политического нейтралитета ВС: военнослужащие были лишены избирательных прав.

Конституционное развитие Второй Республики отражает установление тоталитарного конституционно-правового регулирования и его существование в разных модификациях. В системе диктатуры пролетариата руководящая роль партии исключала разделение властей. Для советской доктрины политический нейтралитет ВС и гражданский контроль над ними не являлись конституционно-правовой проблемой. В этой системе ВС не могли быть политически нейтральными, поскольку они выполняли роль «вооруженной охраны» партии—руководящей и направляющей силы общества. Правовым последствием такого подхода было отсутствие конституционного регулирования статуса ВС, их назначения, принципов организации и деятельности. Советские конституции третьего поколения (1970-ые годы) закрепили назначение ВС и соответствующие им некоторые нормы, однако и на этом этапе принципы политического нейтралитета ВС и гражданского контроля над ними не стали предметом конституционного регулирования, поскольку сохранился подход к этим принципам с «позиций диктатуры пролетариата».

Конституция Третьей Республики 1995 г. хотя прямым образом не регулировала назначение ВС, принципы их организации и деятельности, однако заложенные в основу Конституции концепты подразумевали их регулирование на основе либеральной модели, что осуществлялось текущим законодательством. Реформированная в 2005 г. Конституция уже прямо и четко закрепила назначение ВС (посредством указания их функций) и два важных принципа организации и деятельности ВС: политический нейтралитет и гражданский контроль, а также многие гарантии этих принципов, среди которых важное значение имеют права и свободы личности и полномочия органов государственной власти в области обороны.

THE TYPES OF CONSTITUTIONAL REGULATION
AND CONSTITUTIONAL LEGITIMATION OF THE PRINCIPLES
OF POLITICAL NEUTRALITY OF THE ARMED FORCES
AND CIVILIAN CONTROL OVER THEM
IN THE THREE REPUBLICS OF ARMENIA

*A. G. VAGHARSHYAN, PhD in Law, Associate Professor, Head of the Chair
of Theory and History of State and Law of the Faculty of Law, YSU*

SUMMARY

The liberal model of the status of the Armed Forces and civilian control over them was established in the First Republic. However, this mode had not constitutional but merely current legislative regulation. The principles of political neutrality of the Armed Forces and civilian control over them didn't have direct legislative consolidation, however, they were implemented in the mechanism of legal regulation. One of the guarantees of political neutrality of the Armed Forces was specially and rather toughly consolidated: servicemen were disfranchised.

Constitutional development of the Second Republic reflects the establishment of totalitarian constitutional-legal regulation and its existence in different modifications. The leading role of the Party ruled out the separation of powers in the system of the dictatorship of the proletariat. The political neutrality of the Armed Forces and civilian control over them were not a constitutional-legal problem for the Soviet Doctrine. In this system the Armed Forces could not be politically neutral as they served as the «armed escort» of the Party—leading and guiding the power of society. The lack of constitutional regulation of the status of the Armed Forces, their purpose, the principles of organization and activity was the legal consequence of such an approach. The Soviet Constitutions of the third generation (the 1970s) consolidated the purpose of the Armed Forces and some norms compliant with them, but the principles of political neutrality of the Armed Forces and civilian control over them didn't become a matter of constitutional regulation at that stage. This was accounted for by the fact that the approach to those principles from «the positions of the dictatorship of the proletariat» had been preserved.

Though the Constitution of the Third Republic of 1995 didn't directly regulate the purpose of the Armed Forces, the principles of their organization and activity, the concepts underlying the Constitution assumed their regulation on the basis of the liberal model. That was implemented by the current legislation. The Constitution reformed in 2005 directly and explicitly fixed the purpose of the Armed Forces (through indicating their functions) and two important principles of organization and activity of the Armed Forces: the political neutrality and civilian control, as well as many guarantees of these principles. Among them the rights and freedoms of an individual and the authority of the state bodies in the defense sphere have an important significance.

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ
ՀՀ ՕՐԵՆՍԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՁ

*Վ. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ, ՀՀ ՊՆ պաշտպանական
քաղաքականության վարչության միջազգային պայմանագրաիրավական
սպահովման բաժնի գլխավոր մասնագետ*



Հանրային կառավարման ոլորտի* ցանկացած ճյուղում օրինականության ապահովման կարևորագույն երաշխիքներից է վերահսկողությունը:

Ի տարբերություն հսկողությունից, որն իրականացվում է անմիջականորեն կառավարման գործընթացում և, որպես կանոն, հենց կառավարման համակարգի ներսում, վերահսկողությունը օրինականության արտաքին ապահովման համակարգ է:

Վերահսկողության համակարգի արդյունավետ գործունեության կարևոր նախապայմաններն են հանրային կառավարման համակարգում երկու հիմնա-

րար՝ թափանցիկության և հաշվետու լինելու սկզբունքների ամրագրումը:

Ամենաընդհանուր ձևով թափանցիկությունը բնութագրվում է որպես մի իրավիճակ, երբ քաղաքացին, հասարակական կազմակերպությունները և քաղաքացիական հասարակության այլ հաստատություններ կարող են անհրաժեշտ տեղեկությունն ստանալ այն անմիջականորեն տնօրինող մարմնից՝ առանց որևէ այլ միջոցի դիմելու¹:

Հաշվետու լինելը բնութագրվում է այնպիսի հասկացություններով, ինչպիսիք են պատասխանատվությունը, մեղադրանք ներկայացնելը և այլն:

Հանրային կառավարման ոլորտում թափանցիկության և հաշվետու լինելու սկզբունքների նպատակային շահառուն ի վերջո ժողովուրդն է: Այդ երկու սկզբունքներն ըստ էության կոչված են ապահովելու ժողովրդի, նրա յուրաքանչյուր ներկայացուցչի մասնակցությունը հանրային կառավարման գործընթացին:

Հանրային կառավարման ցանկացած փուլում թափանցիկությունը և հաշվետու լինելը զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության անհրաժեշտ նախադրյալներ են:

Ժողովրդավարական վերահսկողությունը՝ որպես զինված ուժերում օրինա-

* Հանրային կառավարումը ներառում է պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման ոլորտները:

¹ Տես «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների մեկնաբանություն»: Ե., 2003, էջ 158:

կանոնային ապահովման միջոց, էականորեն տարբերվում է վարչական հսկողությունից և պետական վերահսկողությունից:

Վարչական հսկողությունը² հանրային կառավարման մի մասն է և կոչված է ապահովելու կառավարման իրականացումը: Այդ է պատճառը, որ հսկողություն իրականացնող մարմինները գործում են հանրային կառավարման մարմնի համակարգում: Մինչդեռ պետական վերահսկողությունը դուրս է պետական կառավարման կոնկրետ մարմնի համակարգից և իրականացվում է անկախ պետական մարմինների կողմից:

Խորհրդային Միությունում իրականացվող պետական վերահսկողությունը բնութքով ժողովրդավարական չէր, քանի որ այն իրականացնում էին իշխող կուսակցական մարմինները, ինչը բացառում էր որևէ ժողովրդավարական տարրի առկայությունը: Այդ վերահսկողությունն իրականացվում էր հասարակության լայն շերտերի ձևական ներգրավմամբ, սակայն դրա իրական նպատակը կուսակցության կամքի կատարման ստուգումն էր:

Խորհրդային Միության փլուզումից հետո հետխորհրդային պետությունները, բռնելով ժողովրդավարացման ուղին, կանգնեցին նաև զինված ուժերի նկատմամբ անհրաժեշտ ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմ ստեղծելու հրամայականի առջև: Պետք է նշել, որ խորհրդային պետությունում ևս գոյություն ուներ Ձինված ուժերի նկատմամբ վերահսկողության համակարգ, որը գործում էր բավականին արդյունավետ կերպով: Վերահսկողության սուբյեկտը կոմունիստական կուսակցությունն էր, որն ապահովում էր զինված ուժերի կողմից կուսակցության կամքի կատարումը: Այդ վերահսկողությունը բնութքով քաղաքացիական էր, սակայն ժողովրդավարական չէր, քանի որ կոմունիստական ամբողջատիրական վարչակարգում թափանցիկության ու հասարակությանը հաշվետու լինելու սկզբունքներն զգալի չափով ձևական բնույթ էին կրում:

Այդ համակարգի փլուզումից հետո փաստորեն ստեղծվեց մի իրավիճակ, երբ նախկին խորհրդային հասարակարգի բաղկացուցիչ մաս կազմող ամբողջական կուսակցական վերահսկողության վերացումից հետո չստեղծվեց ժողովրդավարական վերահսկողության հաստատությունների արդյունավետ գործունեությունն ապահովող համակարգ: Ընդ որում, պրոբլեմը հնարավոր չէ լուծել միայն որոշակի օրենքների ընդունմամբ կամ որոշակի հաստատությունների ստեղծմամբ: Անհրաժեշտ են համակարգային մոտեցում և դրան համապատասխան՝ օրենսդրական միջոցառումների և կոնկրետ գործողությունների համալիր իրականացում:

Ընդհանուր առմամբ կարող ենք ասել, որ նախկին սոցիալիստական ճամբարի բոլոր պետություններում առկա դժվարությունները գրեթե նույնաբնույթ են: Դրանցում զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության կայացմանը խոչընդոտում են՝

² Կառավարման տեսության մեջ հսկողությունը բնութագրվում է որպես կառավարման գործառնություն, կառավարման գործընթացի բաղկացուցիչ մաս (տես *Գ. Վ. Атаманчук. Теория государственного управления. М., 2004, сс. 57—63*):

– պաշտպանական գործընթացների պատշաճ լուսաբանում և դրանց մասնագիտական վերլուծություններ չլինելը,

– քաղաքացիական հասարակության հաստատությունների (հասարակական կազմակերպություններ, ՋԼՄ-ներ) ոչ ակտիվ ներգրավվածությունը զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության գործում,

– բնակչության իրավագիտակցության ոչ պատշաճ մակարդակը:

Կարող ենք վստահորեն ասել, որ այդ պետություններում ժողովրդավարական վերահսկողության արդյունավետ համակարգի ստեղծումը առաջին հերթին պայմանավորված է վերը նշված խնդիրների լուծմամբ:

Չմանրամասնելով այլ պետություններում ժողովրդավարական վերահսկողության համակարգի կայացման գործընթացները՝ արձանագրենք, որ հետխորհրդային պետությունների շարքում զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության օրենսդրական կարգավորման առումով նշանակալի առաջընթաց է դիտվում ՌԻկրաիմայում: ՌԻկրաիմայի Գերագույն ռադան 2003 թ. ընդունել է «Պետության ռազմական կառույցի և իրավապահ մարմինների նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության մասին» օրենք, որով համակարգված կերպով կարգավորվում են ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության հարաբերությունները³:

Նման օրենքի ընդունման փորձ երկու անգամ արվել է նաև Ռուսաստանի Դաշնությունում, սակայն օրինագծի թերությունների, մեծ թվով չհիմնավորված դրույթների նախատեսման, ինչպես նաև Դաշնային Ժողովի ու Դաշնային կառավարության բացասական վերաբերմունքի պատճառով այդ օրինագծի ընդունման գործընթացը կասեցվել է*:

Հայաստանի Հանրապետությունում Ձինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության տարրերի օրենսդրական պրոբլեմների մասին խոսելուց առաջ նպատակահարմար է պարզաբանել «զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողություն» հասկացությունը:

Ըստ ընդունված տեսակետի՝ զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողությունը այնպիսի վիճակ է, որի պարագայում քաղաքացիական հասարակության գրեթե բոլոր տարրերը (հասարակական կազմակերպություններ, լրատվամիջոցներ, կուսակցություններ, արհմիություններ և այլն), ինչպես նաև ժողովրդավարական ճանապարհով ձևավորված այլ հաստատություններ (պետության խորհրդարանը, մարդու իրավունքների պաշտպանը և այլն) կարող են ցանկացած պահի տեղեկանալ զինված ուժերի գործունեության տարրեր

³ Ств «Закон Украины от 19 июля 2003 г. № 975-IV «О демократическом гражданском контроле над военной организацией и правоохранительными органами государства»»:

* Մեր կարծիքով՝ զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության ոլորտը կարգավորելու նպատակով առանձին օրենքի ընդունումը նպատակահարմար չէ և՛ տեսական, և՛ գործնական առումներով, քանի որ այն պարունակելու է տարբեր ոլորտների ու տարբեր բնույթի՝ ինչպես նյութական, այնպես էլ ընթացակարգային, հարաբերություններ կարգավորող նորմեր:

ուրոտներում տիրող իրավիճակի մասին, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, պետական մարմինների ուշադրությունը հրավիրել այդ ոլորտներում առկա բացասական երևույթների վրա:

Ժողովրդավարական վերահսկողության գործընթացում ընդգրկվում են ոչ միայն հանրային կառավարման մարմինները, այլև քաղաքացիական հասարակության բոլոր տարրերը: Ընդ որում, փորձը ցույց է տալիս, որ քաղաքացիական հասարակության տարրերի ակտիվ ներգրավումն է ապահովում ժողովրդավարական վերահսկողության արդյունավետությունը:

Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության համակարգի իրավական ամրագրումը, ըստ էության, հանգում է այդ վերահսկողության համար անհրաժեշտ տարրերը օրենսդրական համակարգում ամրագրելուն, ինչը ներառում է՝

– քափանցիկության և հաշվետու լինելու սկզբունքների, ինչպես նաև դրանց գործնական կիրառման համար անհրաժեշտ այլ նորմերի օրենսդրական ամրագրումը,

– քաղաքացիական հասարակության տարրերի ակտիվ ներգրավվածությունն ապահովող նորմերի օրենսդրական ամրագրումը,

– հանրային կառավարման մարմինների գործուն լիազորությունների օրենսդրական ամրագրումը:

Հայաստանի Հանրապետությունում Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության համակարգի ստեղծումն անցել է զարգացման որոշակի ուղի: Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ ժողովրդավարական վերահսկողությանը վերաբերող առաջին նորմերի կարելի է հանդիպել դեռ «ՀՀ Զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքում», որտեղ, մասնավորապես, սահմանվում է, որ հրամանատարը պարտավոր է կատարելագործել իր անձնական մասնագիտական պատրաստությունը և զորամասի ղեկավարման մեթոդները, իրեն տրված իրավունքների սահմաններում գործել ինքնուրույնաբար, միևնույն ժամանակ՝ պետական իշխանության և կառավարման մարմինների, հասարակական միավորումների, ձեռնարկությունների և կոլեկտիվների, պատերազմի և զինված ուժերի վետերանների հետ սերտ կապի մեջ, ինչպես նաև ամեն կերպ ամրապնդել միանձնյա ղեկավարությունը՝ հենվելով սպայական ժողովի, զորամասի հասարակական կազմակերպությունների վրա, նրանց հետ համագործակցությամբ անձնակազմի ջանքերն ուղղել առաջադրված խնդիրների ակտիվ ու ստեղծագործական լուծմանը⁴: Մի շարք այլ դրույթներ հրամանատարներին պարտավորեցնում են զորամասի ղեկավարման ժամանակ հաշվի առնել հասարակական կազմակերպությունների կարծիքը, ապահովել զինծառայողների շփումն իրենց ընտանիքների անդամների և հասարակական կազմակերպությունների հետ և այլն:

⁴ Տես «ՀՀ Զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ 1996 թվականի դեկտեմբերի 3-ի հմ. ՀՕ-99 օրենք, 89-րդ հոդված («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 1997 թ., հմ. 1):

Դրա հետ մեկտեղ, հարկ է նշել, որ մեր իրականության մեջ այս նորմերը ոչ միշտ են իրականացվում լիարժեք կերպով: Մասնավորապես՝ «ՀՀ ՁՈՒ կարգապահական կանոնադրությամբ» նախատեսված քաղաքացիական ժողովրդավարական վերահսկողության մեկ այլ հնարավորություն՝ պետական մարմինների կամ հրամանատարի գործողությունները դատական կարգով բողոքարկելու զինծառայողի իրավունքը, գործնականում չի կիրառվել. այն ընդամենը նշված է Կանոնադրության հինգերորդ գլխում: Կանոնադրությունն այդ իրավունքի իրականացման որևէ մեխանիզմ չի բովանդակում:

Բացի նշվածներից, Չինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության տարրեր կարելի է համարել Խորհրդարանի կողմից բյուջեի հաստատումը, ռազմական բնույթի միջազգային պայմանագրերի վավերացումը և այլն:

Չինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողություն սահմանելու առաջին քայլը պաշտպանության նախարարի պաշտոնը քաղաքական պաշտոնների ցանկում ընդգրկելն էր, ինչի հետևանքով պաշտպանության նախարար նշանակվեց արդեն քաղաքացիական անձ:

Այս ուղղությամբ հաջորդ կարևորագույն քայլը ՀՀ Սահմանադրության 8.2-րդ հոդվածն էր, համաձայն որի՝ Չինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գտնվում են քաղաքացիական վերահսկողության* ներքո: Այս դրույթը թերևս պետք է հիմք դառնա պետությունում Չինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության ամբողջ համակարգի կառուցման համար:

Պետք է նշել, սակայն, որ այս սահմանադրական նորմը ամբողջությամբ չի արտացոլում զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողությանը ներկայացվող բոլոր պահանջները: Մեր կարծիքով՝ այստեղ ամենավիճահարույց հարցն այն է, թե ի՞նչ պետք է հասկանալ «զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողություն» ասելով: Ամբողջ աշխարհում այսօր կիրառվում է «զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողություն» ձևակերպումը: Օրինակ կարող է ծառայել ԽՍՀՄ-ը, որտեղ իրականացվող վերահսկողությունը թեև քաղաքացիական էր, սակայն ժողովրդավարական չէր:

Չինված ուժերի գործունեության նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքն ամրագրվեց նաև 2008 թվականին ընդունված «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում: Չինված ուժերի գործունեության նկատմամբ ժողովրդավարական վերահսկողությանը վերաբերող նորմեր են պարունակում մի շարք այլ իրավական ակտեր ևս: Դրանցից են ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգը, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը և այլն:

Այդուհանդերձ, գործող օրենսդրությունը դեռևս ոչ բավարար չափով է զար-

* Ինչպես արդեն նշվեց, Սահմանադրությունում միայն «քաղաքացիական վերահսկողություն» տերմինի օգտագործումն այնքան էլ ճիշտ չէ, քանի որ քաղաքացիական վերահսկողությունն առանց ժողովրդավարական վերահսկողության թերի է:

գացած Ձինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության ամբողջականությունը լիարժեք կերպով ապահովելու համար: Հատկապես ակներև են Ձինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի որոշ պրոբլեմներ: Որպես օրինակ՝ ՀՀ Կառավարության 1996 թվականի օգոստոսի 12-ի հմ. 247 որոշմամբ հաստատված ՀՀ ՁՈՒ-ի կարգապահական կանոնադրության կիրառելիության իրավաչափության պրոբլեմը դիտարկենք Սահմանադրության պահանջների և մարդու իրավունքների ու ազատությունների վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի հետ համապատասխանության տեսակետից:

Ընդ որում, պրոբլեմն ունի երկու կողմ: Առաջինը ՀՀ ՁՈՒ-ի կարգապահական կանոնադրությունը որպես իրավական ակտ ճանաչելու հարցն է, երկրորդը՝ դրանով սահմանված կարգով որոշ կատեգորիայի զինծառայողներին հրամանատարների իշխանությամբ կարգապահական մեկուսարանում մեկուսացնելու և պահելու ձևով տույժ նախատեսող նորմերի կիրառելիության իրավաչափությունն է:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային (այսուհետև՝ Կոնվենցիա) միանալիս Հայաստանի Հանրապետությունն արել է հետևյալ վերապահումը.

«Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթները չեն ազդում Հայաստանի Հանրապետության Կառավարության 1996 թվականի օգոստոսի 12-ի թիվ 247 որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնադրության գործողության վրա, համաձայն որի՝ մեկուսացումը և պահումը կարգապահական մեկուսարանում որպես կարգապահական տույժ կարող է կիրառվել.

– ժամկետային ծառայության զինվորների և սերժանտների նկատմամբ՝ մինչև 10 օր ժամկետով (համապատասխանաբար 54-րդ կետի «ե» ենթակետ և 55-րդ կետի «դ» ենթակետ).

– պայմանագրով զինվորական ծառայության ընդունված զինվորների և սերժանտների նկատմամբ՝ մինչև 7 օր ժամկետով (համապատասխանաբար 54-րդ կետի «ե» և 56-րդ կետի «գ» ենթակետ).

– ենթասպանների նկատմամբ՝ մինչև 7 օր ժամկետով (60-րդ կետի «գ» ենթակետ).

– սպանների նկատմամբ՝ մինչև 5 օր ժամկետով (74-րդ կետի «գ» ենթակետ)»⁵:

2007 թ. սահմանադրական բարեփոխումներով ՀՀ Սահմանադրության մեջ նախատեսվեց նոր բովանդակությամբ հոդված, համաձայն որի՝ բացառապես ՀՀ

⁵ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիան, դրան կից 1952 թվականի մարտի 20-ին Փարիզ քաղաքում ստորագրված արձանագրությունը, 1963 թվականի սեպտեմբերի 16-ին Ստրասբուրգ քաղաքում ստորագրված թիվ 4 արձանագրությունը և 1984 թվականի նոյեմբերի 22-ին Ստրասբուրգ քաղաքում ստորագրված թիվ 7 արձանագրությունը վավերացնելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2002 թ. մարտի 20-ի հմ. Ն-264-2 որոշումը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2002 թ., հմ. 12 (187)):

օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվության տեսակները, չափերը, պատասխանատվության ենթարկելու կարգը, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգը⁶: Մինչդեռ ՀՀ ՁՈՒ-ի կարգապահական կանոնադրությունը հաստատվել է ՀՀ Կառավարության որոշմամբ:

Սահմանադրական բարեփոխումներից հետո, երբ Կոնվենցիայի 5-րդ հոդվածը ամբողջությամբ արտացոլվեց Սահմանադրության մեջ, ըստ որի՝ պատասխանատվության միջոցների սահմանումը հնարավոր է բացառապես օրենքով, կարգապահական կանոնադրության համապատասխանեցումը Սահմանադրությանն արդեն դարձավ հրատապ խնդիր: Այդ նպատակով ՀՀ պաշտպանության նախարարությունը ներկայումս մշակել և շրջանառության մեջ է դրել ՀՀ Ձինված ուժերի կարգապահական ոլորտը կանոնակարգող օրենքի նախագիծ:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Օրենքը կարող է նախատեսել ազատությունից զրկում միայն Սահմանադրությամբ նախատեսված դեպքերում:

Դեպքերի վերլուծությունից պարզ է դառնում, որ ազատությունից զրկելը (որպես պատիժ) կարող է կիրառել միայն դատարանը: Բոլոր մնացած դեպքերում նպատակը պետք է լինի դատարանի կողմից պատժի նշանակման կամ հարկադրանքի այլ միջոցի կիրառման ապահովումը:

Պետք է նշել, որ զինծառայողներին հրամանատարների իշխանությամբ կարգապահական վարույթի կարգով ազատությունից զրկելու դեպքերին վերաբերող գործեր գոյություն ունեն նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական դատարանի պրակտիկայում: Մասնավորապես՝ «Էնգելը և այլք ընդդեմ Նիդեռլանդների» գործով դիմող Էնգելը, Վան դեր Վիելը, Յան դը Վիտը, Յոհաննես Դոնը և Վիլիելմ Շուլը պնդում էին, որ կարգապահական պատիժը և իրենց նկատմամբ կիրառված հարկադրական միջոցը հակասում են Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետին:

Այդ գործով վճռի մեջ նշվում է, որ Կոնվենցիայի նախապատրաստման և ընդունման ժամանակ մասնակից պետությունների մեծամասնությունն իրենց զինված ուժերի համակարգում ունեին համապատասխան զինվորական կարգապահական գումարտակներ, որտեղ կարող էին զինծառայողների որոշ իրավունքներ և ազատություններ սահմանափակվել, ինչը չէր կարող կիրառվել քաղաքացիական անձանց նկատմամբ: Հետևաբար, այդպիսի համակարգի առկայությունը ինքնըստինքյան չէր հակասում նրանց պարտավորություններին:

Քննության առարկա գործով Դատարանը վճռեց.

– զինվորական կարգապահությունը, այդուհանդերձ, 5-րդ հոդվածի 1-ին կե-

⁶ Տես «ՀՀ Սահմանադրություն», 83.5-րդ հոդված: Ե., 2005:

տի կիրառման ոլորտից դուրս չէ: Այդ տեսքերը պետք է դիտվի Կոնվենցիայի 1-ին և 14-րդ հոդվածների լույսի ներքո, դրանում նշված ազատությունից զրկելու դեպքերի ցանկն սպառնիչ է: Հետևաբար, կարգապահական պատիժը կամ միջոցը կարող է համարվել 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում,

– որոշելու համար, թե արդյոք որևէ մեկը 5-րդ հոդվածի իմաստով «զրկվել է ազատությունից», մեկնակետ պետք է լինի կոնկրետ իրադրությունը: Ձինվորական ծառայությունն այն տեսքով, որը գոյություն ունի մասնակից պետություններում, ոչ մի դեպքում Կոնվենցիայի իմաստով ազատությունից զրկում չէ, և դա հատուկ նշված է 4. 3 բ) կետում: Ձինծառայողների տեղաշարժի ազատության իրավունքի բավականին լայն սահմանափակումները պայմանավորված են զինվորական ծառայության հատուկ պահանջներով. դրան ուղեկցող մյուս սահմանափակումների վրա 5-րդ հոդվածի գործողությունը չի տարածվում,

– յուրաքանչյուր մասնակից պետություն լիազորված է սահմանելու զինվորական կարգապահության իր համակարգը և այդ հարցում օգտվում է հայեցողական ազատությունից: Շրջանակները, որոնցից մասնակից պետությունը չի կարող դուրս գալ, ինչպես այդ պահանջում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածը, զինծառայողների և քաղաքացիական անձանց համար միատեսակ չեն: Կարգապահական պատիժը կամ միջոցը, որոնք կարող են համարվել ազատությունից զրկում, քաղաքացիական անձի նկատմամբ կիրառելու դեպքում կարող են չունենալ նույն բնույթը, ինչն ունեն զինծառայողի նկատմամբ կիրառելիս: Այդուհանդերձ, վերջին դեպքում նույնպես 5-րդ հոդվածը կարող է կիրառվել, երբ դրանք վերածվում են այնպիսի սահմանափակումների, որոնք ակնհայտորեն շեղվում են մասնակից պետություններում զինված ուժերի սովորական կենսապայմաններից: Դատարանի մոտեցմամբ, որպեսզի որոշվի, թե արդյոք դա իսկապես այդպես է, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել գործոնների մի ամբողջ շարքի վրա, ինչպիսիք են տվյալ պատժի կամ կարգապահական միջոցի բնույթը, երկարատևությունը, հետևանքները և ազատագրկման եղանակը:

Այսպիսով՝ միայն դատարանը կարող է անձի նկատմամբ ազատագրկման ձևով պատիժ նշանակել ու կիրառել, մինչդեռ ՀՀ ՁՈՒ-ի կարգապահական կանոնադրության համաձայն՝ դա արվում է հրամանատարների իշխանությամբ:

Հրամանատարի կողմից անձի ազատության սահմանափակումը հակասում է նաև ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածին, որի համաձայն՝ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությամբ նախատեսված մարմինների միջոցով: Որևէ կասկած չկա, որ անձին ազատությունից զրկելը պետական իշխանության իրականացման ձև է: ՈՒՍտի դա պետք է արվի միայն Սահմանադրությամբ նախատեսված մարմինների, տվյալ դեպքում՝ դատարանի միջոցով:

Մինևույն ժամանակ, պետք է նշել, որ միայն կարգապահական նոր կանոնադրության ընդունմամբ չի լուծվի ժողովրդավարական վերահսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ իրավական բազայի ապահովման խնդիրը: Փոփոխություններ են պահանջվում բազմաթիվ այլ օրենքներում, որոնք թեև չեն

պարունակում մարդու իրավունքների ոտնահարման անմիջական հնարավորություն նախատեսող նորմեր, սակայն չունեն նաև այդ իրավունքների պաշտպանության և Ձինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության իրականացման բավարար մեխանիզմներ: Այդպիսիք են, մասնավորապես, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը, դատավարական օրենսգրքերը և այլն:

Փաստորեն, ժողովրդավարական վերահսկողության ոլորտը պետք է կարգավորվի դրան վերաբերող բոլոր իրավական ակտերի զուգահեռ բարեփոխման միջոցով:

ПРАВОВОЕ ЗАКРЕПЛЕНИЕ ДЕМОКРАТИЧЕСКОГО КОНТРОЛЯ НАД ВООРУЖЕННЫМИ СИЛАМИ В ЗАКОНОДАТЕЛЬСТВЕ РА

*В. А. ХАЧАТРЯН, соискатель кафедры конституционного права
юридического факультета ЕГУ, главный специалист отдела международного
договорно-правового обеспечения Управления оборонной политики МО РА*

РЕЗЮМЕ

В статье анализируются особенности контроля как внешней функции в системе государственного управления и местного самоуправления (в отличие от надзора, который является внутренней функцией управления).

Результаты исследования проблем в области контроля над вооруженными силами в постсоциалистических государствах позволяют сделать вывод о том, что практически во всех этих государствах проблемы в данной сфере имеют одинаковые по характеру причины. Автор в качестве решения указанных проблем считает правовое закрепление в законодательстве РА системы демократического контроля над вооруженными силами с соблюдением принципов транспарентности и отчетности, а также необходимых для их осуществления норм, в том числе норм, обеспечивающих активное участие элементов гражданского общества в процессе контроля.

В контексте вышеуказанного проводится исторический, компаративный и практический анализ становления и развития законодательной базы демократического контроля над Вооруженными силами в РА.

THE LEGITIMATION OF THE DEMOCRATIC CONTROL
OVER THE ARMED FORCES IN THE RA LEGISLATION

*V. A. KHACHATRYAN, Applicant at the Chair of Constitutional Law
of the Faculty of Law, YSU, Senior Specialist of the Treaty Legal Support Desk
at the Defense Policy Department of the MOD, RA*

SUMMARY

The article analyzes the features of control as an external function in the system of public administration and local self-government (as opposed to the supervision which is an internal management function).

The results of studying the problems in the field of control over the Armed Forces in post-socialist countries enable us to draw the conclusion that the problems in this sphere have the same causes in nature virtually in all these states. The author regards the legitimation of the system of democratic control over the Armed Forces in the RA legislation as the solution to the mentioned problems. He finds it possible with adherence to the principles of transparency and accountability, as well as to the norms necessary for implementing them, including those ensuring an active participation of elements of civil society in the process of control.

The historical, comparative and practical analysis of the establishment and development of the legislative basis of democratic control over the Armed Forces in the Republic of Armenia is being conducted in the context of the above mentioned.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՄԱԲ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆԿԱՏԱՄԱԲ
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

*Հ. Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, մանկավարժական գիտությունների թեկնածու,
ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության
և ներքին գործերի մշտական հանձնաժողովի նախագահ*



Ժողովրդավարական իրավական պետություններում կարևոր տեղ է գրավում զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական, այդ թվում՝ խորհրդարանական, վերահսկողությունը: Այն բխում է նաև վավերացված միջազգային պայմանագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններից: Խորհրդարանական վերահսկողության ոլորտում կարևոր դերակատարություն ունեն Հայաստան-ՆԱՏՕ հարաբերությունների շրջանակներում ՀՀ ստանձնած պարտավորությունները: Հայաստանը որդեգրել է եվրոպական զարգացման ուղին, ուստի Եվրոպայի անվտանգությունն ապահովող հիմնական կառույցներից մեկի՝ ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների զարգացումը և ամրապնդումը հետապնդում են ոչ թե որոշակի քաղաքական նպատակներ, այլ ձևավորվում են բնականորեն՝ եվրոպական ինտեգրային գործընթացների զուգընթաց: ՀՀ-ՆԱՏՕ Անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը (ԱԳԳԾ) ընդունվել է 2005 թ. և մինչև 2015 թ. լինելու է մեր հարաբերությունների զարգացման ուղեցույցը: Այդ հարաբերությունների նորմալ ընթացքը և մեզ վրա վերցված պարտավորությունների կատարումը հնարավորություն են ընձեռում, որ մենք մեր պաշտպանության և անվտանգության համակարգերում կատարենք լուրջ բարեփոխումներ:

Հայաստան-ՆԱՏՕ ԱԳԳԾ շրջանակներում Հայաստանի Հանրապետության պարտավորություններից է ընդլայնել հասարակության իրազեկումը պաշտպանական անվտանգության համակարգերում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ: Դրա վառ ապացույցներից է նաև այդ շրջանակներում գործող ՀՀ միջգերատեսչական հանձնաժողովի կողմից մշակված և ՀՀ Նախագահի հրամանագրով 2007 թ. հաստատված «Ազգային անվտանգության ռազմավարությունը», մի փաստաթուղթ, որը բազմիցս ներկայացվել է քաղաքացիական հասարակության լայն շրջաններին, ինչպես նաև ՀՀ Ազգային ժողովի աշխատանքային քննարկմանը*: Ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները քննարկվել և մեծ մասամբ ընդունվել են միջգերատեսչական հանձնաժողովի կողմից:

Հայաստան-ՆԱՏՕ ԱԳԳԾ շրջանակներում Հայաստանի Հանրապետության պարտավորություններից է ընդլայնել հասարակության իրազեկումը պաշտպանական անվտանգության համակարգերում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ: Դրա վառ ապացույցներից է նաև այդ շրջանակներում գործող ՀՀ միջգերատեսչական հանձնաժողովի կողմից մշակված և ՀՀ Նախագահի հրամանագրով 2007 թ. հաստատված «Ազգային անվտանգության ռազմավարությունը», մի փաստաթուղթ, որը բազմիցս ներկայացվել է քաղաքացիական հասարակության լայն շրջաններին, ինչպես նաև ՀՀ Ազգային ժողովի աշխատանքային քննարկմանը*: Ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները քննարկվել և մեծ մասամբ ընդունվել են միջգերատեսչական հանձնաժողովի կողմից:

* Հեղինակը, լինելով ՀՀ ԱԺ-ի պատգամավոր, ներգրավված է եղել այդ հանձնաժողովի կազմում:

Պաշտպանական անվտանգությանն առնչվող օրինագծերը ԱԳԳԾ շրջանակներում աշխատանքային քննարկումների փուլում են կամ արդեն ընդունվել են: Դրանցից հատկապես կարելի է նշել Ջինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողությանը վերաբերող՝ «Քաղաքացիական ծառայողի ինստիտուտի ներդրումը պաշտպանական ոլորտում» և «Պաշտպանության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանի գործառույթները» թեմաներով քննարկումները: Բնականաբար, այս ոլորտին առնչվող օրինագծերի ընդունման հետ կապված՝ հանձնաժողովը աշխատանքային քննարկումներ է կազմակերպում պաշտպանության նախարարության ներկայացուցիչների և մասնագետների հետ:

Կցանկանայի նշել, որ ԱՊՀ մասնակից պետությունների համար ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի 18-րդ նստաշրջանում որպես կողմնորոշիչ փաստաթուղթ ընդունվել է «Ջինվորական կազմակերպությունների նպատմամբ խորհրդարանական վերահսկողության մասին» մոդելային օրենքի նախագիծը:

Պաշտպանության ոլորտի արդյունավետ խորհրդարանական վերահսկողության պայմանները հետևյալն են.

- հստակ ձևակերպված սահմանադրաիրավական լիազորություններ,
- սովորույթներ,
- ռեսուրսներ, գիտելիքներ և փորձ,
- քաղաքական կամք:

Ընդհանրապես, պաշտպանության ոլորտի նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունը միջազգային փորձի առումով կարելի է բաժանել երկու մասի՝ անմիջական (Սահմանադրությամբ և օրենքներով հստակորեն սահմանված վերահսկողական լիազորություններ, պաշտպանական ոլորտի խորհրդարանական հատուկ հետաքննություն, զինված ուժերում նշանակումների կատարում և այլն) և միջնորդավորված (օրենքների ընդունում, միջազգային պայմանագրերի վավերացում և այլն): Հայաստանի Հանրապետությունում պաշտպանության ոլորտի նկատմամբ խորհրդարանի լիազորություններն զգալի չափով սահմանափակված են:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 62-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ, իսկ նրա մարմինների ձևավորման և գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրությամբ և «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքով:

ՀՀ Սահմանադրության 77-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի կատարման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացվող փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ: Ազգային ժողովը Վերահսկիչ պալատի եզրակացության առկայությամբ քննարկում և հաստատում է պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը:

Հայաստանի Հանրապետությունում պաշտպանության ոլորտի նկատմամբ վերահսկողությունը դրսևորվում է հետևյալ գործառույթներով:

**ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**



**ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի աշխատանքային այցելությունը
ՀՀ պաշտպանության նախարարություն.**

Երևան, 2009 թ. հուլիսի 30



ՀՀ պետական բյուջեի նախագծի քննարկում ՀՀ Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նիստում.

2010 թ. հունիսի 18



ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը և Առողջապահության նախարար Հարություն Քուշկյանը կենտրոնական հավաքակայանում.

Երևան, 2010 թ. մայիսի 25



ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի
և ՀՀ Պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհրդի նախագահ
Գեղամ Հարությունյանի (ձախից երկրորդը) հանդիպումը
ՀՀ Վարչապետին առընթեր Ազգային երիտասարդական քաղաքականության
խորհրդի ներկայացուցիչների հետ.

2010 թ. մայիսի 7



ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի ռազմական և զինմառայողների հարցերով
խորհրդական Ռուստամ Մախմուդյանի աշխատանքային այցը զորամաս.

2009 թ. հուլիսի 25



Հանդիպում ՀՀ ՊՆ վարչական համալիրում՝ մշակույթի գործիչների, հասարակական կազմակերպությունների, կրթամշակութային հաստատությունների ներկայացուցիչների հետ.

Երևան, 2010 թ. ապրիլի 12



«Զինվոր և օրենք» հասարակական կազմակերպության նախագահ Մարգարիտա Խաչատրյանի հերթական ստուգայքը դիրքեր.

2006 թ.

Օրենքների ընդունում, օրենսդրական նախաձեռնությունների ներկայացում:

Ազգային ժողովն օրենքների ընդունմամբ սահմանում է համապատասխան ոլորտների կառավարման հիմնարար սկզբունքները՝ դրանով իսկ կանխորոշելով դրանց զարգացումը, ապահովում է տվյալ բնագավառում տարբեր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիների ու կազմակերպությունների գործունեության համակարգվածությունը:

Խորհրդարանը, օրենքներ ընդունելու միջոցով կանոնակարգելով Ձինված ուժերի գործունեությունը, միջնորդավորված ձևով ազդում է ոչ միայն Ձինված ուժերի կառավարման կազմակերպման, այլև դրանց ամենօրյա ծառայության գործընթացի վրա:

Միջազգային պայմանագրերի վավերացում: ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովը Հայաստանի Հանրապետության Նախագահի առաջարկությամբ վավերացնում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում ՀՀ միջազգային պայմանագրերը: Ազգային ժողովի վավերացմանը ենթակա միջազգային ակտերի շարքում թվարկված են նաև քաղաքական կամ ռազմական բնույթ ունեցող միջազգային պայմանագրերը:

Պետական բյուջեի և դրա կատարման վերաբերյալ հաշվետվության հաստատում: Բյուջեի նախագծի նախնական քննարկումները տեղի են ունենում առանձին մշտական հանձնաժողովների և դրանց համատեղ նիստերում, որոնց սահմանված կարգով մասնակցում են նաև վարչապետի լիազորած անձինք: Բյուջեի նախագծի՝ պետական և ծառայողական գաղտնիք պարունակող ծախսային հոդվածներին վերաբերող օրենսդրությամբ նախատեսված փակ ծրարի նյութերը քննարկվում են պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի ու ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ դռնփակ նիստում: Ազգային ժողովը բյուջեի կատարման նկատմամբ իր վերահսկողությունն իրականացնում է Վերահսկիչ պալատի միջոցով:

Հարցեր և հարցապնդումներ: Հարցերի և հարցապնդումների սահմանակարգը (ինստիտուտ) Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանական վերահսկողության կարևոր լիազորություններից և ամենաճանաչված ընթացակարգերից է: Դա պաշտպանության ոլորտի նկատմամբ խորհրդարանական վերահսկողության բավականին ազդեցիկ միջոց է և կարող է լուրջ նշանակություն ունենալ այդ ոլորտի վրա ազդելու կամ այն կողմնորոշելու հարցում, քանի որ խորհրդարանում հնչած հարցերը չեն սահմանափակվում միայն խորհրդարանի լսարանով, այլ ընդգրկում են շատ ավելի լայն շրջան՝ լրատվամիջոցներ, հասարակական կազմակերպություններ և քաղաքացիական հասարակություն:

Խնդրո առարկայի վերաբերյալ ուսումնասիրությունների նպատակով անհրաժեշտության դեպքում համագործակցություն հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ: Հայաստանի Հանրապետության Ազգային

ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովը իր աշխատանքային գործունեության ընթացքում արդյունավետորեն համագործակցել և համագործակցում է մի շարք միջազգային, հասարակական և այլ կազմակերպությունների հետ:

Մասնավորապես՝ մեր հանձնաժողովը մի շարք նախաձեռնություններով արդյունավետորեն համագործակցում է Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) հետ:

Մեր հանձնաժողովը և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակը ստորագրել են փոխըմբռնման հուշագիր ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովին Ջինված ուժերի նկատմամբ արդյունավետ խորհրդարանական վերահսկողություն իրականացնելուն աջակցելու մասին:

Մեր հանձնաժողովը համագործակցում է Ջինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության ժնկյան կենտրոնի հետ, ինչի շնորհիվ հանձնաժողովի փորձագետները մասնակցել են զինված ուժերի նկատմամբ խորհրդարանական վերահսկողության վերաբերյալ մի շարք եվրոպական երկրների խորհրդարանների փորձի փոխանակմանը: Նշված համագործակցության շրջանակներում հայերեն են թարգմանվել համապատասխան ուսումնական ձեռնարկներ:

Մեր հանձնաժողովի անդամ պատգամավորներ ընդգրկված են ԱՊՀ երկրների միջխորհրդարանական վեհաժողովի պաշտպանության և ազգային անվտանգության հանձնաժողովում, ինչի շնորհիվ մեր հանձնաժողովին է տրամադրվում վեհաժողովում քննարկվող մոդելային օրենքների մասին տեղեկատվություն: Շատ դեպքերում դրանք տեղայնացվում և ընդգրկվում են ազգային օրենսդրության մեջ:

Մեր հանձնաժողովի ևս երկու պատգամավոր ընդգրկված են Կոլեկտիվ անվտանգության խորհրդարանական վեհաժողովում:

Կարևորում ենք նաև հանձնաժողովի և ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի հարաբերությունները: Որպես այդ համագործակցության արդյունք՝ ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովը մեր հանձնաժողովի անդամ պատգամավորների և փորձագետների համար կազմակերպել է հատուկ ուսումնական ծրագիր:

Հանձնաժողովը ակտիվ կերպով համագործակցում է պաշտպանության և ոստիկանության ոլորտներին առնչվող գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների հետ: Օրինագծերի աշխատանքային քննարկումների ժամանակ առաջարկություններով և դիտողություններով պարբերաբար իրենց ակտիվ մասնակցությունն են ունենում նաև հանձնաժողովի կողմից հրավիրված հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Պետք է նշել, որ հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված մի շարք առաջարկություններ մեր հանձնաժողովի անդամ պատ-

գամավորների կողմից վերածվել են օրենսդրական նախաձեռնությունների:

Մեր հանձնաժողովը մշտապես համագործակցում է պաշտպանության ոլորտի բարձրաստիճան ղեկավարների և մասնագետների հետ: Հանձնաժողովի ու Ազգային ժողովի նիստերի և մեր հանձնաժողովի կողմից կազմակերպված խորհրդարանական լուսնների ժամանակ օրինագծերի ներկայացման և առանձին հարցերի վերաբերյալ նրանց կողմից մեր հանձնաժողովին և խորհրդարանին տրվում են պարզաբանումներ:

Պաշտպանական հարցերով որոշումներ ընդունելու համար հանձնաժողովը օգտագործում է նաև հարցերի, օրինագծերի և իրադարձությունների աշխատանքային քննարկումների, խորհրդարանական լուսնների և մեկնաբանությունների համակարգը:

Կարևորում ենք նաև պաշտպանության ոլորտին խորհրդարանականների մոտիկից ծանոթանալը, քանի որ պաշտպանության ոլորտի խնդիրները ավելի լավ հասկանալու համար անհրաժեշտ է տեսական գիտելիքները հարստացնել գործնական գիտելիքներով: Այս տեսանկյունից կարևորում ենք մեր հանձնաժողովի այցելությունները պաշտպանության ոլորտի օբյեկտներ՝ տեղում գործընթացներին ծանոթանալու, շարքային և հրամանատարական կազմի հետ զրուցելու, օրենքների կիրառման ընթացքում ծագած խնդիրներին իրագրել լինելու և նրանց առաջարկությունները լսելու և հաշվի առնելու առումով:

Նշեն, որ ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովը լրատվամիջոցների և հասարակական կազմակերպությունների հետ պարբերաբար իրականացնում է այցելություններ պաշտպանության ոլորտի օբյեկտներ: Նման այցելությունները ցույց են տալիս նաև, որ քաղաքական ղեկավարությունը ուշադիր և հետևողական է պաշտպանության ոլորտի և զինծառայողների խնդիրների նկատմամբ:

Չբավարարվելով այս ամենով՝ մենք արտասահմանյան առաջավոր փորձի հաշվառմամբ ձգտում ենք օրենքի և մեր իրավասությունների սահմաններում կատարելագործելու Ձինված ուժերի նկատմամբ խորհրդարանական վերահսկողության ասպարեզում մեր ծավալած գործունեությունը՝ այն նպատակաուղղելով Հայաստանի Հանրապետության պաշտպանունակության հարաճուն բարելավմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Սահմանադրություն: Ե., 2005:
2. «ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ 2002 թ. փետրվարի 20-ի հմ. ՀՕ-308 օրենքը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2002 թ., հմ. 12 (187)) :
3. *Hari Bucur-Marcu Philipp Fluri Todor Tagarev (Eds.)*. Defence management. An Introduction. Geneva, 2009.
4. «Անվտանգության վերահսկողության ոլորտի խորհրդարանական վերահսկողություն: Սկզբունքներ, լծակներ և գործունեություն»: Խորհրդարանականների ձեռնարկ հմ. 5: Լոզան, 2003:
5. «Ձինվորական կազմակերպությունների նկատմամբ խորհրդարանական վերահսկողության մասին» ԱՊՀ մոդելային օրենք:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ПАРЛАМЕНТСКОГО КОНТРОЛЯ НАД СФЕРОЙ ОБОРОНЫ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

*Г. К. КАРАПЕТЯН, кандидат педагогических наук,
Председатель Постоянной комиссии Национального собрания РА
по обороне, национальной безопасности и внутренним делам*

РЕЗЮМЕ

В мировой практике демократических государств парламентский контроль над сферой обороны включает: непосредственный контроль (соответствующие конституционные полномочия, депутатские запросы, парламентское расследование, утверждение назначений в Вооруженных силах и т. д.) и опосредованный (принятие законов, регулирующих отношения в данной области, ратификация международных договоров в сфере военной политики, утверждение бюджета и т. д.). Эффективность парламентского контроля в данной сфере обусловлена закрепленными в конституции полномочиями, обычаями, наличием соответствующих ресурсов, знаниями и опытом, а также политической волей.

Следует отметить, что в РА конституционные полномочия парламента по непосредственному контролю над сферой обороны существенно ограничены и, в основном, сводятся к формам опосредованного контроля (принятие законов, ратификация международных договоров, утверждение бюджета и т. д.). Несмотря на это, Постоянная комиссия по обороне, национальной безопасности и внутренним делам Национального собрания РА в сотрудничестве с такими международными и общественными организациями, как, в частности, ОБСЕ, а также заинтересованными государственными структурами РА, проводит многоплановую работу по совершенствованию своей деятельности в сфере контроля над ВС. Например, депутаты выезжают в воинские части, знакомятся с положением дел на местах, с нуждами военнослужащих, в рамках своих полномочий обеспечивая транспарентность в жизнедеятельности ВС.

SOME ISSUES OF THE PARLIAMENTARY CONTROL OVER THE DEFENSE SPHERE IN THE REPUBLIC OF ARMENIA

*H. K. KARAPETYAN, PhD in Pedagogical Sciences, Chairman of the NA
Standing Committee on Defense, National Security and Internal Affairs
of the Republic of Armenia*

SUMMARY

In international practice the parliamentary control over the defense sphere in democratic states includes: the direct control (corresponding constitutional powers, interpellations, parliamentary investigation, final appointment in the Armed Forces, etc.) and the indirect one (adopting the laws regulating rela-

tions in this field, ratifying international treaties in the sphere of military policy, passing the budget, etc.). The efficiency of the parliamentary control in this sphere is conditioned by the powers, as well as practices fixed in the Constitution, availability of the corresponding resources, knowledge and experience, as well as political will.

It should be noted that the constitutional power of the Parliament to direct control over the defense sphere in the RA are considerably limited and mainly take the shape of indirect control (adopting laws, ratifying international treaties, passing the budget, etc.). Despite this, the Standing Committee on Defense, National Security and Internal Affairs of the RA National Assembly, in cooperation with international and non-governmental organizations such as, particularly, the OSCE, as well as the RA state stakeholders, conducts multidimensional work on improving its activities in the sphere of control over the Armed Forces. For instance, the National Assembly Members visit the military units, familiarize themselves in loco with the state of things, servicemen's needs, ensuring the transparency in the vital activity of the Armed Forces in the framework of their powers.

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՏԵՂԸ
ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Գ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՀՀ Պաշտպանության նախարարին առընթեր
հասարակական խորհրդի նախագահ,
Պաշտպանության նախարարի խորհրդական



Պետության և նրա առանձին կառույցների գործունեությանը անհրաժեշտ չափով իրազեկ լինելու և այն վերահսկելու հասարակության իրավունքը ժողովրդավարական նորմ է, որը բխում է ժամանակակից պետության հիմքում դրված ժողովրդաիշխանության սկզբունքից: Վերջինիս ճանաչումն ու օրենսդրական ամրագրումը, սակայն, ինքնաբերաբար չեն լուծում պետության և հասարակության հարաբերությունների հիմնահարցերը: Պետության և հասարակության շահերի ներդաշնակ գույակցումը գործնականում շատ ավելի բարդ ու դժվարին խնդիր է, որի լուծումը կախված է հասարակության ժողովրդավարական հասունության մակարդակից: Այս հարցում վճռորոշ նշանակություն ունեն ինչպես պետական մարմիններում տիրապետող մտածողությունն ու արժեքային կողմնորոշումները, այնպես էլ հասարակության ինքնակազմակերպման ունակությունը, հասարակական-պետական կարևոր խնդիրներին հետամուտ լինելու կարողությունը:

Ընդհանուր այս համատեքստում, որպես հասարակական կարևոր գործառույթ, իր նշանակությամբ առանձնանում է զինված ուժերի նկատմամբ հասարակական վերահսկողության խնդիրը: Դա պայմանավորված է ինչպես զինված ուժերին վերապահված դերակատարությամբ, այնպես էլ կառույցի առանձնահատկություններով: Հասարակությունը զինված ուժերին է հանձնարարել արտաքին ոտնձգություններից պետության ու ժողովրդի պաշտպանությունը և կենսականորեն շահագրգռված է, որ զինված ուժերը գտնվեն իրենց կոչման բարձրության վրա: Ուստի հասարակությունը ձգտում է իր շահերին համապատասխան ներգործել պաշտպանական ոլորտում իրականացվող քաղաքականության և զինված ուժերում տիրող իրավիճակի վրա: Պետական շահագրգիռ մոտեցումը պահանջում է ընդառաջ գնալ հասարակության օրինաչափ ձգտումներին, չպատնեշվել հասարակությունից, թույլ չտալ, որպեսզի գերատեսչական, խմբակային և այլ շահեր վեր դասվեն համապետական և համահասարակական շահերից:

ՀՀ Ձինված ուժերում այսօր իրականացվում են բարեփոխումներ, որոնք ուղղված են արդի պահանջներին համապատասխանող ռազմապաշտպանական

համակարգի ձևավորմանը: Ներդրվել է նաև հատուկ քաղաքացիական ծառայության ինստիտուտը (հաստատությունը), ինչը նպաստում է Ձինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հիմքերի ամրապնդմանը: Մրան գուգահեռ նորովի է կարևորվում պաշտպանական ոլորտի հիմնահարցերի լուծման գործում հասարակության ներգրավվածության, Ձինված ուժեր–հասարակություն կապերի սերտացման խնդիրը: Այդ նպատակին ուղղված քայլերի շարքում ուրույն տեղ ունի Պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհրդի ստեղծումը: Այն պետք է կամրջող դեր խաղա և նպաստի Ձինված ուժերի ու հասարակության միջև համագործակցության հետագա զարգացմանն ու ընդլայնմանը:

Խորհրդի ստեղծման փաստը և նրան վերապահված լայն իրավասությունները խոսում են պաշտպանության նախարարի կողմից Ձինված ուժերի առաջընթացի հարցում հասարակության դերը լուրջ կերպով արժեքավորելու մասին: Դա իր առարկայական դրսևորումն է ստանում խորհրդի նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքում: Խորհրդի կարծիքներն ու տեսակետները պատշաճ ուշադրության են արժանանում, հանգամանք, որը արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ նախադրյալների շարքում ամենաէականներից է: Հարկ է նշել, որ խորհրդի ստեղծումն ամենևին էլ նպատակ չունի Ձինված ուժերը պատնեշել հասարակական մյուս կառույցներից: Հասարակության հետ Ձինված ուժերի համագործակցությունը զարգանում է տարբեր եղանակներով: Ուստի և խորհրդի կարևոր խնդիրներից է գործնական կապերի հաստատումը հասարակական կազմակերպությունների և հասարակության տարբեր շերտերի հետ: Միայն այդ ճանապարհով է հնարավոր իրագործել այն նպատակները, որոնք դրված են խորհրդի առջև: Իր կարգավիճակի և խնդիրների բերումով խորհուրդը հավակնում է դառնալու Ձինված ուժերին առնչվող և նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող առավել մասնագիտացված և գործուն հասարակական մարմիններից մեկը:

Խորհրդի հիմնական գործառնությունների թվում է Ձինված ուժերի նկատմամբ հասարակական վերահսկողության իրականացումը: Այս առումով խորհուրդը լրացնում է ՁԼՄ-ների, հասարակական կազմակերպությունների, Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես Ձինված ուժերի նկատմամբ հասարակական վերահսկողության ինստիտուտների շարքը: Վերջիններիս համեմատությամբ խորհուրդն ունի որոշակի յուրահատկություն՝ կապված խորհրդի կարգավիճակի հետ: Խորհուրդն ստեղծվել է գործում է պաշտպանության նախարարին առընթեր և փաստորեն օժտված է կրկնակի լիազորությամբ՝ հանդես գալու և՛ հասարակության, և՛ պաշտպանության նախարարի անունից: Այս հանգամանքն ընդլայնում է խորհրդի ինչպես իրավասությունների, այնպես էլ պատասխանատվության շրջանակները: Խորհուրդը կարող է անարգել կերպով ստուգումներ և ուսումնասիրություններ կատարել գորքերում, արդյունքները ներկայացնել անմիջապես պաշտպանության նախարարին, հետևել իր կողմից բարձրացված հար-

ցերի լուծման ընթացքին: Միևնույն ժամանակ, խորհրդի անդամները պետք է պահպանեն որոշակի վարքականոցներ, օրինակ, ռազմական և ծառայողական գաղտնիքի պահպանման, հրամանատարական և սպայական կազմի հետ հարաբերությունների հարցերում և այլն:

Զինված ուժերի նկատմամբ հասարակական վերահսկողության կարևորագույն հարցերից մեկն այն է, թե ի՞նչ բովանդակություն է հաղորդվում տվյալ գործառնությին, և ի՞նչ սկզբունքների ու մոտեցումների հիման վրա է այն կառուցվում: Այս հարցում դրսևորած մոտեցումից է կախված, թե ի՞նչ հունի մեջ կդրվեն Զինված ուժեր-հասարակություն փոխհարաբերությունները, կունենան արդյոք դրանք վստահության և թափանցիկության բավարար մակարդակ, կգտնվեն արդյոք շահագրգռությունների հարթության վրա, թե՛ ոչ: Զինված ուժերի նկատմամբ հասարակական վերահսկողությունը ոչ մի դեպքում չպետք է դառնա ինքնանպատակ և տարբեր գործոնների ու շահերի թելադրանքով շեղվի իր ռացիոնալ նպատակներից: Հասարակական վերահսկողության գլխավոր նպատակը պետք է լինի հզոր և մարտունակ Զինված ուժեր ունենալը: Առաջին հայացքից կարող է թվալ, թե նման հարցադրումը ընդհանուր է և վերացական հարթություն է տեղափոխում հասարակական վերահսկողության գործառնությը: Իրականում, սակայն, տեղի է ունենում ճիշտ հակառակը: Գլխավոր այս նպատակից ածանցվելով՝ հասարակական վերահսկողության դաշտում են հայտնվում և նրա առարկան են դառնում բանակային կոնկրետ հիմնահարցեր ու գործընթացներ, որոնք իրենց հարաբերական ինքնուրույնությամբ հանդերձ սերտորեն փոխկապված են և, ինչպես առանձին վերցրած, այնպես էլ ամբողջության մեջ, ազդում են Զինված ուժերի մարտունակության ու պատրաստակամության վրա:

Հասարակական վերահսկողությունը առաջին հերթին պետք է մեկնաբանվի որպես Զինված ուժերին օժանդակելու գործառնությ, և այն իրականացնող մարմինը չպետք է հանդես գա «վերակացուի» կամ անհաղորդ քննադատի դերում, այլ պետք է հաղորդակից լինի Զինված ուժերի հոգսերին ու դժվարություններին: Այս առումով բավականին տարածված է նաև այն սխալ մտայնությունը, թե Զինված ուժերի նկատմամբ հասարակական վերահսկողությունը կոչված է միայն մատնացույց անելու խնդրահարույց հարցերն ու թերացումները: Նման մոտեցումը նույնպես չի կարող լիարժեք համարվել և վերջիվերջո կհանգեցնի հասարակական վերահսկողության գործառնությի էության թյուրըմբռնմանը:

Հասարակությունը չի կարող անտարբեր լինել ոչ միայն մտահոգիչ և բացասական երևույթների, այլև Զինված ուժերի առաջընթացի նկատմամբ: Հաջողություններն ու ձեռքբերումները նույնպես պետք է նկատվեն, ներկայացվեն և խրախուսվեն: Տվյալ հանգամանքը նույնքան կարևոր է, որքան բացթողումների և թերացումների վերհանումն ու արծարծումը: Եվ իրոք, միանգամայն անբնական կլինեն, եթե հասարակությունը աչքաթող աներ Զինված ուժերում արձանագրվող դրական տեղաշարժերը, ջրաջալերեր և չխթաներ այդ ուղղությամբ գործադրվող ջանքերը: Միայն ամբողջական, համակողմանի մոտեցմամբ է հնարավոր ապա-

հովել Ձինված ուժերի և հասարակության միասնությունը, ստեղծել փոխադարձ վստահության բարենպաստ մթնոլորտ, ճանապարհի բացել առկա խնդիրների անկաշկանդ քննարկման համար:

Հարկ է նշել ևս մեկ կարևոր նկատառում: Հասարակական վերահսկողությունը առավել արդյունավետ է դառնում այն դեպքում, երբ չի սահմանափակվում միայն իրերի դրության փաստմամբ, այլ գտնում ու առաջարկում է լուծումներ և զարգացման ծրագրեր:

Ներկայացված սկզբունքներն ու մոտեցումները դրված են Պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհրդի գործունեության հիմքում:

Հասարակական խորհրդի նախաձեռնությամբ անցկացված հասարակական կարծիքի սոցիոլոգիական հետազոտությամբ* պարզվել է, որ Ձինված ուժերի նկատմամբ հասարակության վերաբերմունքը դրական է: Հասարակության 51,5 %-ը լիովին վստահում է Ձինված ուժերին, 38 %-ը ավելի շուտ վստահում է, քան՝ ոչ: Կարելի է համոզված պնդել, որ առաջիկայում էլ Ձինված ուժերը կշարունակեն վայելել հասարակության դրական վերաբերմունքը, քանի որ հասարակության ավելի քան 2/3-ի (71,2 %) կարծիքով Ձինված ուժերում տեղի են ունենում դրական փոփոխություններ, իսկ բացասական երևույթները գնալով նվազում են: Այս պատկերն իր համարժեք արտացոլումն ունի նաև զգայական հարթությունում: Այն հարցին, թե ինչ զգացումներ եք ունենում Ձինված ուժերի մասին մտածելիս, հարցվածների 45,8 %-ը նշել է հայրենասիրությունը, 23,3 %-ը՝ հպարտությունը, 17,2 %-ը՝ ապահովությունը: Հետազոտությամբ նաև պարզվել է, որ հասարակությունը չի խուսափում պատասխանատվությունից Ձինված ուժերում առկա մտահոգիչ երևույթների համար և գրեթե հավասար չափով կիսում է այդ պատասխանատվությունը պետական կառավարման մարմնի հետ (համապատասխանաբար՝ 23,8 % և 26,6 %):

Այս ամենը միասին վերցրած վկայում է հասարակության հետ վստահելի հարաբերություններ կառուցելու, անհարկի խոչընդոտներն ու սահմանափակումները վերացնելու անհրաժեշտության մասին: Հետազոտական տվյալները փաստում են նաև Ձինված ուժերի նկատմամբ հասարակական վերահսկողության դաշտի ընդլայնմանն ուղղված՝ պաշտպանության նախարարի որդեգրած քաղաքականության ճշմարտացիությունն ու հիմնավորվածությունը: Պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհուրդը, լինելով այդ ուղեգծի սպասարկմանը կոչված կառույց, ձգտելու է հնարավորինս լիարժեք կերպով իրականացնելու իր առաքելությունը:

* Հետազոտությունն անցկացվել է 2010 թ. հունվար–փետրվար ամիսներին ՄԵԴԻԱ-ՄՈԴԵԼ ընկերության ՎԱՐԿԱՆԻՇ հետազոտավերլուծական խմբի կողմից: Հարցումն անցկացվել է 1000 մարդու շրջանում, որանցից՝ 450-ը Երևանում, 550-ը՝ հանրապետության բոլոր մարզերում: Հարցվողների ընտրությունը կատարվել է պատահական ընտրանքի սկզբունքով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն»: Ե., 2005:
2. «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007:
3. «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տեքստեր», 2007, հմ. 4:
4. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2009 թ. մայիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհրդի կանոնադրությունը հաստատելու մասին» հմ. 594 հրաման:

МЕСТО ОБЩЕСТВЕННОГО СОВЕТА
ПРИ МИНИСТРЕ ОБОРОНЫ РА
В ДЕЛЕ ОБЩЕСТВЕННОГО КОНТРОЛЯ
НАД ВООРУЖЕННЫМИ СИЛАМИ

*Г. Б. АРУТЮНЯН, Председатель Общественного совета
при Министре обороны РА, советник Министра обороны*

РЕЗЮМЕ

В контексте проводимых в настоящее время в РА оборонных реформ особое значение приобретает создание надлежащих механизмов общественного контроля над Вооруженными силами. С целью его более эффективного и целенаправленного осуществления создан Общественный совет при Министре обороны РА в качестве координирующего и связующего звена между оборонными структурами и общественностью.

Особый статус и полномочия Совета в качестве действующей при Министре обороны общественной структуры дают ему широкие возможности для осуществления деятельности как в государственном, так и в общественном измерениях.

Оптимально используя эти возможности, Совет в координации с государственными и общественными организациями (в том числе с Институтом Защитника прав человека, СМИ и т. д.) осуществляет проверки состояния службы в войсках, в том числе в сфере защиты прав, свобод и интересов военнослужащих, а по результатам анализа выявленных проблем выступает с инициативами перед компетентными в данной сфере государственными структурами, в первую очередь, перед Министром обороны РА.

Совет неуклонно придерживается курса повышения ответственности государственных органов и должностных лиц, а также оптимальной и конструктивной вовлеченности общества в обеспечение демократического контроля над Вооруженными силами.

THE PLACE OF THE PUBLIC COUNCIL
UNDER THE RA MINISTER OF DEFENSE
IN THE PUBLIC CONTROL OVER THE ARMED FORCES

*G. B. HARUTYUNYAN, Chairman of the Public Council
under the RA Minister of Defense, Advisor to the Defense Minister*

SUMMARY

The formation of appropriate mechanisms of public control over the Armed Forces takes on special significance in the context of the ongoing defense reforms in the Republic of Armenia. The Public Council under the RA Minister of Defense has been established as a coordinating and bridging unit between the defense structures and the public aimed at more effective and purposeful implementation of that control.

The special status and credentials of the Council as a social structure acting under the Defense Minister give broad opportunities for implementing its activities both in state and public dimensions.

Optimally using these opportunities, in coordination with state and non-governmental organizations (including the Ombudsman Institute, mass media, etc.) the Council reviews the troops service, including the sphere of servicemen's rights, freedoms and interests protection. According to the results of analysis of the revealed problems the Council comes out with initiatives to the state structures competent in this sphere, primarily, to the Defense Minister.

The Council has consistently taken the line of increasing the responsibilities of state bodies and officials, as well as the optimal and constructive engagement of the society in ensuring democratic control over the Armed Forces.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ԴԵՐԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

*Ռ. Զ. ՄԱԽՄՈՒԴՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու,
ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի ռազմական
և զինծառայողների հարցերով խորհրդական*



1948 թվականի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում և մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները որպես գերակա արժեքներ սահմանող հետագայում ընդունված այլ միջազգային իրավական ակտերում ամրագրված սկզբունքներն ու նորմերը արտացոլվեցին նաև նորանկախ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում: ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածով մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները սահմանվում են որպես բարձրագույն և անօտարելի արժեք:

Մինչույն ժամանակ նախատեսվում է դրանցով սահմանափակված լինելու և դրանց պաշտպանությունն ապահովելու պետության պարտականությունը, որի կատարումը լիարժեք կերպով ապահովելու նպատակով ներմուծվեց օմբուդսմենի՝ Մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետև՝ Պաշտպան) հաստատությունը: Ի դեպ, որոշ զարգացած երկրներում այն հայտնի է շուրջ երկու հարյուրամյակ*:

Տվյալ հաստատության նպատակը մարդու իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն է պետական մարմինների և պաշտոնատար անձանց կամայականություններից ու չարաշահումներից: Այն ոչ թե հակակշռում, այլ համագործակցում է պետական համակարգի մյուս հաստատությունների հետ և հանդես գալիս որպես ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխիք ու մեխանիզմ:

Պաշտպանի լիազորությունները տարբեր պետություններում կարող են տարբեր լինել՝ կախված պետության իրավական և պետական կառավարման համակարգերի առանձնահատկություններից¹: ՀՀ-ում Պաշտպանի իրավասու-

* Խոսքը վերաբերում է սկանդինավյան պետություններում գործող օմբուդսմենի հաստատությանը:

¹ Տես «Национальные омбудсмены: свод правовых положений/по состоянию на 01.01.1998». Варшава, Представитель по правам граждан Республики Польша; Biuro Rzecznika Praw Obywatelskich. Варшава, 1999, сс. 160–173:

յունն ընդգրկում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների բավականին լայն շրջան*:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչ-յուր ոք իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով և կարգով կարող է ստանալ Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը:

Կարծում ենք, որ սահմանադրական այս երաշխիքի լիարժեք ապահովման համար Պաշտպանին դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների ցանկը նախատեսող «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 8-րդ հոդվածում, մեր իրականության առանձնահատկությունների հաշվառմամբ, անհրաժեշտ է այլ անձանց իրավունքների պաշտպանության նպատակով Պաշտպանին դիմելու դեպքերի մասով նախատեսել որոշ կատեգորիաների, այդ թվում՝ զինծառայողների, վերաբերյալ բացառություններ՝ դիմումի քննումը թողնելով Պաշտպանի հայեցողությանը**:

Պաշտպանի՝ Օրենքով սահմանված լիազորությունները կարելի է դասել 2 խմբի՝ հիմնական և լրացուցիչ:

Հիմնական են համարվում դիմում-բողոքների քննարկումը, մարդու իրավունքների վերականգնմանն ուղղված գործունեությունը, այդ թվում՝ ներգործության միջոցների կիրառումը, և Պաշտպանի տարեկան գործունեության վերաբերյալ զեկույցի կազմումը:

Լրացուցիչ են հիմնական լիազորություններից ածանցված լիազորությունները, որոնց նպատակը դրանց իրականացման լիարժեք ապահովումն է: Այդպիսիք են, օրինակ, արագ արձագանքումը, այցելությունները Օրենքով նախատեսված կազմակերպություններ, օրենսդրության բարելավմանն ուղղված գործունեությունը, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի զարգացումը, միջազգային համագործակցությունը և այլն²:

Հաշվի առնելով Պաշտպանի լիազորությունների, գործառնությունների և խնդիրների մեծ ծավալը՝ սույն հոդվածում կքննարկենք դրանց այն մասը, որը վերաբերում է ՀՀ Ձինված ուժերի գործունեության ոլորտին:

ՀՀ Սահմանադրության 8.2-րդ հոդվածի համաձայն՝ «Ձինված ուժերը քա-

* Շատ պետություններում այդ վերահսկողական հաստատության իրավասությունից դուրս է գործադիր իշխանության գլուխը՝ պետության նախագահը (կառավարությունը):

** Ձինծառայողների իրավունքների պաշտպանությանը վերաբերող դիմում-բողոքների շուրջ 70 %-ն ուղարկում են զինծառայողների ընտանիքների անդամները կամ հարազատները: Դրանք, մասնավորապես, վերաբերում են զորամասի հրամանատարների կողմից անհիմն կերպով կարգապահական կալանքներ նշանակելուն, ռազմական ոստիկանության կայազորային բաժնում զինծառայողին օրենսդրության պահանջների խախտմամբ անհիմն պահելուն, սպայական կազմին բնակարանային պայմաններով չապահովելուն և այլն:

² Տես «ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի 2006 թ. տարեկան զեկույցը»: Ե., 2007, էջ 7:

ղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո»³:

Ասվածն ուղղակիորեն կապված է Պաշտպանի իրավական կարգավիճակի հետ, քանի որ այս հաստատության մանդատի հրամայականը ևս ապաքաղաքականացված լինելն է: ՈՒստի Պաշտպանը, չլինելով այս կամ այն քաղաքական ուժի ներկայացուցիչ, ավելի մեծ հնարավորություն ունի օբյեկտիվորեն քննարկման առարկա դարձնելու զինծառայողների, այդ թվում՝ սպաների ու ենթասպաների, իրավունքների պաշտպանության բոլոր պրոբլեմները:

ՀՀ-ում Մարդու իրավունքների պաշտպանի շուրջ 6,5 տարվա գործունեությունը ապացուցեց, որ մեր Չինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունը բարդ, բազմակողմանի և որոշակի առանձնահատկություններ ունեցող գործընթաց է, որում պետք է ներգրավվեն նաև ՀՀ Չինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմը, զորամասերի հրամանատարները, ամբողջ հասարակությունը և պետությունը՝ ի դեմս իր բոլոր հաստատությունների: Այս գործընթացի մասնագիտական և արդյունավետ իրականացման նպատակով Պաշտպանի և ՀՀ պաշտպանության նախարարության համատեղ ջանքերի շնորհիվ ՀՀ-ՆԱՏՕ «Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի» շրջանակներում ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում 2007 թ. ստեղծվել է ռազմական և զինծառայողների հարցերով խորհրդականի հաստիք*:

Պաշտպանն իր լիազորությունների շրջանակներում զինծառայողների իրավունքների պաշտպանությունն իրականացնում է հետևյալ եղանակներով՝

- 1) զինծառայողների իրավունքների խախտման փաստերի վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմ ներկայացված դիմում-բողոքների քննարկում,
- 2) զինծառայողների իրավունքների խախտման փաստերին տեղեկանալու դեպքում (ԶԼՄ-ների, այլ անձանց ահազանգերի միջոցով և այլն) դրանց արագ արձագանքում և Պաշտպանի նախաձեռնությամբ գործի քննության անցկացում,
- 3) զինծառայողների խախտված իրավունքների վերականգնում,
- 4) պարբերական այցելություններ զորամասեր՝ զինծառայողների իրավունքների հնարավոր խախտումները կանխելու, առկա խնդիրները վերհանելու և իրավասու մարմինների ուշադրությունը դրանց լուծման վրա կենտրոնացնելու նպատակով,
- 5) համագործակցություն զինծառայողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ,

³ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն»: Ե., 2005:

* Սկզբում միտում է եղել ստեղծելու առանձին զինվորական օմբուդսմենի հաստատություն, սակայն, հաշվի առնելով, որ ՀՀ Սահմանադրությամբ, ի տարբերություն որոշ պետություններից (Լեհաստան, Լիտվա և այլն), մասնագիտացված օմբուդսմենի հաստատություն չի նախատեսվում, ստեղծվել է նշված խորհրդականի հաստիքը:

6) համագործակցություն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց հետ:

2009 թվականից Պաշտպանն էապես փոխել է իր աշխատառճը և այն ավելի համակարգված ու հնարավորինս թափանցիկ դարձնելու նպատակով ձեռնամուխ է եղել նաև զինծառայողների իրավունքներին վերաբերող ՀՀ օրենսդրությունն ուսումնասիրելու և դրա կատարելագործման նպատակով կոնկրետ առաջարկություններ մշակելու ու ներկայացնելու գործին: Որպես ուսումնասիրության արդյունք 2009 թ. հրապարակվել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի «Մարդու իրավունքների պաշտպանությունը ՀՀ Զինված ուժերում կարգապահական քաղաքականություն իրականացնելիս» արտահերթ հրապարակային զեկույցը, որը պատրաստել է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի և ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից համատեղ ստեղծված աշխատանքային խումբը:

1) Զինծառայողների իրավունքների խախտման* փաստերի վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմ ներկայացված դիմում-բողոքների քննարկում: Այս խմբում ընդգրկված են նաև գորակոչիկները, որոնք նույնպես կարող են դիմել Պաշտպանին: Դիմում-բողոքները դասակարգվում են ըստ հետևյալ խմբերի՝

- դիմում-բողոքներ, որոնք ստացվել են գրավոր ձևով,
- դիմում-բողոքներ, որոնք ստացվել են բանավոր՝ քաղաքացիների՝ Պաշտպանի աշխատակազմ այցելելու ժամանակ: Ընդ որում, բանավոր դիմում-բողոքները գրի են առնվում համապատասխան մասնագետների կողմից,
- դիմում-բողոքներ, որոնք Պաշտպանին կամ նրա ներկայացուցիչներին են տրվում Զինված ուժերում կայացած հանդիպումների ժամանակ:

Դիմումի բովանդակությունը որոշում կայացնելու համար բավարար չլինելու պարագայում աշխատակազմը ձգտում է քաղաքացու հետ անմիջական շփմամբ ստանալու լրացուցիչ փաստեր կամ դրանք հիմնավորող փաստաթղթեր:

Համաձայն Օրենքի 11-րդ հոդվածի՝ Պաշտպանը, բողոք ստանալով, պարտադիր կարգով ընդունում է հետևյալ որոշումներից որևէ մեկը. ա) բողոքը քննարկման ընդունելու մասին, բ) դիմողին իր իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունները ներկայացնելու մասին, գ) բողոք ներկայացնողի համաձայնությամբ բողոքն այն պետական մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմին կամ դրա պաշտոնատար անձին փոխանցելու մասին, որի իրավասությանն է պատկանում բողոքի ըստ էության լուծումը, դ) բողոքը չքննարկելու մասին:

Պաշտպանն ընդունված որոշման պատճենը ուղարկում է դիմողին հնարավորինս շուտ, բայց ոչ ուշ, քան բողոքն ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում:

* Իհարկե, «խախտում» տերմինն օգտագործելիս հեղինակը նկատի է ունեցել ենթադրյալ խախտման փաստը: Իրավակիրառական պրակտիկան ցույց է տալիս, որ իրավունքների խախտում պարունակող դիմումներից շուրջ 50 %-ում հետագա ուսումնասիրությամբ որևէ խախտում չի հայտնաբերվում:

Որոշում կայացնելուց հետո Պաշտպանն իրավասու է դիմելու համապատասխան պետական մարմիններին կամ պաշտոնատար անձանց, որ նրանք նպաստեն բացահայտման ենթակա հանգամանքների ուսումնասիրմանը:

Մինևույն ժամանակ, հարկ ենք համարում նշել, որ Օրենքի՝ դիմում-բողոքների քննարկման գործընթացում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց վերաբերող երկու նորմեր իրար հակասում են: 11-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ բողոքում նշված հարցերի ուսումնասիրումը չի կարող կատարել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը, որի որոշումները կամ գործողությունները (անգործությունը) բողոքարկվում են, մինչդեռ 13-րդ հոդվածի 1-ին մասը Պաշտպանին պարտավորեցնում է բողոքներն ուսումնասիրելիս հնարավորություն տալ այն պետական մարմնին, տեղական ինքնակառավարման մարմնին կամ պաշտոնատար անձին, որի որոշումները կամ գործողությունները (անգործությունը) բողոքարկվում են, պարզաբանումներ տալ բողոքի և կատարված ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ, ինչպես նաև հիմնավորել իր դիրքորոշումն ամբողջությամբ: Մեր կարծիքով՝ նպատակահարմար է փոփոխության ենթարկել 11-րդ հոդվածի 6-րդ մասը և համապատասխանեցնել 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:

Բողոքում բարձրացված հարցերի ուսումնասիրման նպատակով Պաշտպանը, իսկ Պաշտպանի գրավոր որոշմամբ՝ Օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված որոշ լիազորությունների մասով նաև նրա աշխատակազմի աշխատողները, իրավասու են՝

- անարգել կերպով այցելելու ցանկացած պետական հիմնարկ կամ կազմակերպություն, ներառյալ՝ զորամիավորումներ, անձանց հարկադրական պահման, այդ թվում՝ նաև նախնական կալանքի և ազատագրկման վայրեր, անհրաժեշտության դեպքում առանձնագրույց ունենալով զինծառայողների և հարկադրական պահման վայրերում գտնվող անձանց հետ (այս լիազորությունների արդյունավետության ապահովման նպատակով Օրենքը սահմանում է, որ նշված առանձնագրույցները ենթակա չեն միջամտության և գաղտնալսման),

- ցանկացած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրանց պաշտոնատար անձանցից պահանջելու և ստանալու բողոքին առնչվող անհրաժեշտ նյութեր ու փաստաթղթեր,

- պետական մարմիններից կամ պաշտոնատար անձանցից ստանալու բողոքի ուսումնասիրման ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ պարզաբանումներ,

- իրավասու պետական մարմիններին հանձնարարելու բողոքի ուսումնասիրության ընթացքում ծագած և պարզաբանման ենթակա հարցերի վերաբերյալ անցկացնել փորձագիտական հետազոտություններ և ըստ այդմ պատրաստել եզրակացություններ,

- ծանոթանալու վարչական, կարգապահական և այլ իրավախախտումների

վերաբերող այն գործերին, որոնց վերաբերյալ դատավճիռները, վճիռները, որոշումներն օրինական ուժի մեջ են մտել,

– ծանոթանալու բողոքին առնչվող ցանկացած նյութի և փաստաթղթի:

2) Զինծառայողների իրավունքների խախտման փաստերի վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում արագ արձագանքելու և Պաշտպանի նախաձեռնությամբ անցկացնելու գործի քննություն: Պաշտպանն իրավասու է նաև իր նախաձեռնությամբ սկսելու հարցի քննությունը, հատկապես այն դեպքերում, երբ տեղեկություն կա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների զանգվածային խախտումների մասին, կամ դա կապված է այնպիսի անձանց շահերի պաշտպանության անհրաժեշտության հետ, որոնք ի վիճակի չեն ինքնուրույն օգտագործելու իրենց պաշտպանության իրավական միջոցները: 2004 թվականից մինչև 2010 թվականի առաջին եռամսյակը եղել է երեք հարյուրից ավելի նման դեպք: Անհրաժեշտ է նշել, որ Պաշտպանի նախաձեռնությամբ սկսված քննարկումների մասին իրազեկվում են ինչպես «տուժող» անձը, այնպես էլ հասարակությունը՝ մամուլի միջոցով⁴:

Նման դեպքերում պաշտպանն արձագանքում է նախ մամուլում՝ հրապարակումների միջոցով, դատապարտում է երևույթը, ինչը նաև նրա ներգործության միջոցներից մեկն է: Արագ արձագանքման անհրաժեշտության դեպքում Պաշտպանը կամ նրա ներկայացուցիչներն այցելում են իրավախախտման վայր, այդ թվում՝ գորամասեր: Ըստ ուսումնասիրությունների արդյունքների՝ Պաշտպանը կարող է պաշտոնական գրությամբ դիմել համապատասխան իրավասու մարմիններին՝ առաջարկելով ինչպես կատարվածի վերաբերյալ տալ պարզաբանումներ, այնպես էլ անցկացնել համապատասխան քննություն՝ մեղավորներին հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու համար:

3) Զինծառայողների խախտված իրավունքների վերականգնում *: Պաշտպանի ներգործության հիմնական միջոցը խորհրդատվական բնույթի գրավոր որոշում կայացնելն է: Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պաշտպանը պարտավոր է կայացնելու հետևյալ որոշումներից մեկը.

ա) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին կամ դրա պաշտոնատար այն անձին, որի որոշումների կամ գործողությունների (անգործության) մեջ տեսնում է մարդու իրավունքների և ազատությունների խախտում, առաջարկել վերացնել թույլ տրված խախտումները՝ նշելով մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերականգնման համար անհրաժեշտ և կատարման ենթակա հնարավոր միջոցառումները** ,

⁴ Տես «Վթրային շենքը վտանգ է ներկայացնում»: «Հայաստանի Հանրապետություն», 2004 թ. հոկտեմբերի 23, «Օմբրոսներն պահանջում է պատժել»: «Առավոտ», 2004 թ. մայիսի 7, «Омбудсмен подает в суд». «Голос Армении», 2 октября 2004 г., «Գավառի ԶՊՎ-ում Պաշտպանի գրասենյակը խախտումներ է հայտնաբերել» (<http://www.panorama.am/am/law/2007/11/16/mip/>):

* Շատ պետություններում Պաշտպանի և նրա ներկայացուցիչների այն գործունեությունը, որը նպատակաուղղված է մարդու իրավունքների վերականգնմանը, կոչվում է «հետաքննություն»:

** Նման բնույթի որոշումներին անվանումը համառոտելու նպատակով Պաշտպանի աշխատա-

բ) մարդու իրավունքների և ազատությունների խախտման բացակայության մասին, եթե բողոքի քննարկման ընթացքում չի բացահայտվել պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կողմից մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտում,

գ) բողոքի քննարկումը օրենքով նախատեսված հիմքերով դադարեցնելու մասին, եթե բողոքի քննարկման ընթացքում բացահայտվել են բողոքը չքննարկելու կամ քննարկումը դադարեցնելու հիմքեր և այլն:

4) Պարբերաբար գործառնաքննարկության կատարվող այցելություններ՝ զինծառայողների իրավունքների հնարավոր խախտումները կանխելու և դրանք վերականգնելու նպատակով: Պաշտպանի հանձնարարությամբ ստեղծված աշխատանքային խմբերը նախապես հաստատված ժամանակացույցի համաձայն այցելում են գործառնաքննարկության: Այցերի նպատակը ինչպես տեղում դիմում-բողոքների պարզաբանումն է, այնպես էլ Պաշտպանի նախաձեռնությամբ մարդու իրավունքների պաշտպանվածության ուսումնասիրումը, մասնավորապես՝ կենցաղային և սանիտարահիգիենիկ պայմաններին ծանոթանալը, զինծառայողների հետ իրենց իրավունքների շուրջ առանձնագրույցներ ունենալն ու հետաքրքրող հարցերի վերաբերյալ իրավաբանական խորհրդատվություն տրամադրելը, իրավահավասարության խախտման, խտրականության դրսևորման և նման բնույթի այլ խախտումներ բացահայտելն ու կանխելը*։ Ռիտուալային գործունեության արդյունքները ամփոփ կերպով գրավոր ներկայացվում են Պաշտպանին:

5) Համագործակցություն զինծառայողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ: Պաշտպանի գործունեության արդյունավետությունը պայմանավորված է իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների հետ նրա սերտ համագործակցությամբ, քանի որ այդ կազմակերպություններն ավելի մոտ են բնակչությանը, ուստի ունեն մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, հետևաբար և Պաշտպանին փոխանցելու ավելի մեծ հնարավորություն: Այդ նպատակով Պաշտպանը սերտորեն համագործակցում է նաև զինծառայողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ:

6) Համագործակցություն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց հետ: ՀՀ-ում, մասնավորապես՝ Պաշտպանի և ՀՀ ԶՈՒ-ի ղեկավար կազմի արդյունավետ համագործակցության շնորհիվ, իրավասու մարմինների կողմից իրավունքի պաշտպանությանը վերաբերող ցանկացած հարց դառնում է պատշաճ ուշադրության և քննարկման առարկա:

կազմում դրանք ձևակերպում են որպես «խախտում հայտնաբերելու և այն կատարած պաշտոնատար անձին պատասխանատվության ենթարկելու առաջարկ ներկայացնելու մասին» որոշում:

* Հարկ է նշել, որ այցելությունների ընթացքում վերհանված խնդիրների մասին բարձրաձայնում են ինչպես պարտադիր ժամկետային ծառայություն անցնող զինծառայողները, այնպես էլ սպաները: Նման այցելությունների ժամանակ բացահայտվել են բազմաթիվ տարաբնույթ խախտումներ:

Պաշտպանն Օրենքով իրեն վերապահված լիազորություններն իրականացնում է հետևյալ ակտերն ընդունելու միջոցով.

Որոշումները վերաբերում են դիմում-բողոքները քննարկման ընդունելուն կամ չընդունելուն:

Առաջարկությունները կատարվում են մարդու իրավունքների և ազատությունների մասին տեղեկատվության արդյունքների ամփոփման հիման վրա՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց ներկայացնելու ձևով:

Զեկույցները երկրում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման ուսումնասիրությունների, ինչպես նաև Պաշտպանի գործունեության արդյունքների ամփոփում են: Զեկույցները լինում են տարեկան (պարտադիր) և արտահերթ հրապարակային:

Տարեկան զեկույցը Պաշտպանը յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ընթացքում ներկայացնում է պետական իշխանության՝ օրենքով սահմանված մարմիններին, իսկ գարնանային նստաշրջանի ընթացքում՝ ՀՀ Ազգային ժողովի նիստին:

Պաշտպանը կարող է արտահերթ հրապարակային, կամ հատուկ, զեկույցներով հանդես գալ հասարակական հնչողություն ունեցող առանձին հարցերի կամ մարդու իրավունքների կոպիտ խախտումների, ինչպես նաև զանգվածային խախտումները չվերացնելու դեպքերում⁵:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ Պաշտպանի ակտերի միջև հստակ տարանջատում գոյություն չունի, քանի որ դրանք բոլորն էլ կրում են խորհրդատվական բնույթ:

Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Պաշտպանը կարող է զանգվածային լրատվության միջոցներով հրապարակել իր միջնորդությանը չպատասխանած, միջնորդության պահանջները չկատարած կամ անբավարար կատարած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրանց պաշտոնատար անձի վերաբերյալ հատուկ տեղեկություն՝ կցելով Պաշտպանի որոշման և միջնորդության վերաբերյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրանց պաշտոնատար անձանց պատասխանները, եթե սպառվել են պետական մարմիններում հարցը լուծելու համար Պաշտպանի բոլոր հնարավորությունները:

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ Պաշտպանի հաստատությունը մարդու իրավունքների պետական պաշտպանության համակարգում ոչ թե լրացուցիչ, այլ այլընտրանքային միջոց է⁶: Ուստի, մեր կարծիքով, նպատակահարմար կլինի Օրենքում կատարել Պաշտպանի իրավական կարգավիճակի ինքնուրույնությամբ

⁵ Տես «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ 2003 թ. հոկտեմբերի 21-ի հմ. ՀՕ-23-Ն օրենքի 17-րդ հոդված («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2003 թ., հմ. 58 (293)):

⁶ Այդ մասին տես, նաև, *Н. Ю. Хаманова*. Специфика правового статуса Уполномоченного по правам человека в Российской Федерации и проблемы законодательного регулирования его деятельности. «Государство и право», 2007, № 9, с. 22:

յունը և իշխանության մյուս թևերից անկախ լինելու հանգամանքն արտացոլող լրացում հետևյալ բովանդակությամբ. «Պաշտպանի գործունեությունը լրացնում է քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանության առկա միջոցները, չի վերացնում դրանք և չի հանգեցնում խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ապահովող և դրանք վերականգնող պետական մարմինների իրավասության վերացմանը»⁷:

Մինևույն ժամանակ, պետք է նշել, որ հասարակությունը կվստահի Պաշտպանին միայն նրա աշխատանքի բարձր որակի դեպքում, ինչը ենթադրում է՝ դիմում-բողոքների արագ և որակյալ քննություն, պատճառաբանված որոշումների կայացում, հիմնավորված զեկույցների ներկայացում և, վերջապես, այդ պաշտոնը զբաղեցնող անձի ողջամտություն, օրյեկտիվություն և անաչառություն:

⁷ Տես, օրինակ, ՌԻկրախնայի Գերագույն ռադայի «Մարդու իրավունքների լիազորի մասին» օրենքի 4-րդ հոդվածը, նաև՝ «Федеральный Конституционный закон от 26.02.97, И1-ФКЗ «Об Уполномоченном по правам человека в Российской Федерации»». «Собрание законодательства РФ», 1997, № 9, с. 1011; «Российская газета», 1997, № 43, с. 44:

РОЛЬ ИНСТИТУТА ЗАЩИТНИКА ПРАВ ЧЕЛОВЕКА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В ДЕЛЕ ЗАЩИТЫ ПРАВ ЧЕЛОВЕКА В ВООРУЖЕННЫХ СИЛАХ

Р. Дж. МАХМУДЯН, кандидат юридических наук, Советник Защитника прав человека РА по военным вопросам и вопросам военнослужащих

РЕЗЮМЕ

В деле защиты прав человека в Вооруженных силах РА институт Защитника прав человека, кроме своей традиционной миссии, выполняет также очень важную и специфичную роль автономного механизма демократического гражданского контроля над Вооруженными силами. В целях обеспечения эффективности деятельности в данной сфере в 2007 г. была учреждена должность Советника по военным вопросам и вопросам военнослужащих Омбудсмена. В своей деятельности аппарат Омбудсмена активно сотрудничает с государственными структурами и общественными организациями. Особенно тесные связи, основанные на взаимопонимании и взаимном уважении, налажены с руководством МО РА.

Параллельно с основной функцией—рассмотрением жалоб и принятием определенных законом мер—Защитник или его представители систематически выезжают в войсковые части, ведут нацеленную на повышение уровня правосознания у военнослужащих и членов их семей разъяснительную работу, изучают состояние защищенности прав военнослужащих на месте, а также анализируют законодательство и законопроекты с целью представления предложений по улучшению законодательства РА в плане обеспечения прав военнослужащих.

В этом контексте делается ряд предложений по совершенствованию законодательства, в частности, о внесении с учетом национальных особенностей и особенностей военной службы изменений в статью 8 Закона РА «О Защитнике прав человека» в целях расширения круга лиц, имеющих право обратиться к Защитнику по вопросам защиты прав другого лица, в том числе и военнослужащего.

THE ROLE OF THE OMBUDSMAN INSTITUTE
OF THE REPUBLIC OF ARMENIA
IN THE HUMAN RIGHTS PROTECTION
IN THE ARMED FORCES

*R. J. MAKHMUDYAN, PhD in Law, Advisor to the Human Rights Defender
of the RA on Military and Military Servicemen's Issues*

SUMMARY

The Institute of the Human Rights Defender in addition to its traditional mission also performs a very important and specific role of autonomous mechanism of democratic civil control over the Armed Forces in protecting human rights. To ensure the efficiency of the activities in this sphere a position of the Advisor to the Human Rights Defender on Military and Military Servicemen's Issues was established in 2007. The Ombudsman's staff in its activities actively cooperates with state structures and NGOs. Particularly, close links based on mutual understanding and respect have been established with the leadership of the MOD, RA.

In parallel with the main function—administrating the complaints and taking Legal Remedies—the Ombudsman and his representatives regularly go to the military units, conduct an explanatory work targeted at increasing the level of legal awareness among servicemen and their family members. They also study in loco the state of servicemen's rights protectability, as well as review the legislation and the bills for tendering the offers on enhancement of the RA Legislation in terms of ensuring the servicemen's rights.

In this context the author makes a number of proposals on improving the legislation, particularly, on making amendments to the Article 8 of the RA Law «On the Human Rights Defender» regarding the national peculiarities and those of military service. It is done for extending the circle of the persons having the right to apply to the Ombudsman on the rights protection of another person, including the serviceman's.

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Գ. Ե. ՄԻՐԶՈՅԱՆ, մանկավարժական գիտությունների թեկնածու,
«Զինվորի մայր» ՀԿ նախագահ, Ա. Է. ՀՈՎՆԱՆՅԱՆ, «Զինվորի մայր»
հասարակական կազմակերպության ծրագրերի համակարգող



«Զինվորի մայր» հասարակական կազմակերպությունը իր բազմաբնույթ և բազմազան գործունեության շուրջ 20 տարիների ընթացքում աջակցել է Հայաստանում քաղաքացիական հասարակության կայացմանը՝ անմիջական մասնակցություն ցուցաբերելով բանակի ձևավորման և կայունացման գործընթացին, վերհանելով ազգային բանակում տեղ գտած բացասական երևույթները:

Կազմակերպությունը ելնում է այն դրույթից, որ ազգային բանակում զինվորական ծառայության հեղինակության բարձրացման և զինվորական ծառայության նկատմամբ ամբողջ հասարակության դրական վերաբերմունքի պահպանման կարևոր պայման է զինվորական կոմիսարիատների ու զորակոչային հանձնաժողովների աշխատողների կողմից զորակոչի ընթացքում օրենսդրական նորմերի, քաղաքացու իրավունքների և ազատությունների անվերապահ ապահովումը:

ՀՀ Սահմանադրության մեջ նշվում է, որ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը: Տվյալ սահմանադրական նորմը նշանակում է, որ և՛ զորակոչի կազմակերպումը, և՛ զինվորական ծառայությունը պետք է ընթանան օրենքով սահմանված կարգին համապատասխան: Տվյալ կարգից շեղումը, այդ թվում՝ զորակոչի ընթացքում, դառնում է մարդու իրավունքների խախտման պատճառ, որը անհամատեղելի է զինծառայողի՝ որպես Հայրենիքի պաշտպանի բարձր կոչման հետ:

Առողջական վիճակի պատճառով ոչ պիտանի, ինչպես նաև տարկետման կամ ազատման իրավունք ունեցող քաղաքացիների զորակոչումը, զորակոչիկների մարդկային արժանապատվության, նրանց իրավունքների և ազատությունների խախտումը ապակայունացնում են ինչպես հասարակությունը, այնպես էլ բանակը:

Ինչպես հայտնի է, նույնիսկ իրավական բարձր ցուցանիշ ունեցող երկրնե-

րում հնարավոր չէ լիովին բացառել օրինախախտումները, սակայն անհրաժեշտ է մշակել համընդհանուր և ընդունելի երաշխիքներ ու մեխանիզմներ, որոնք ուղղված լինեն մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների պաշտպանությանը: Այդպիսի մեխանիզմներից է հասարակական վերահսկողության հաստատությունը, որը ներառում է նաև ոլորտում գործող ՀԿ-ները: Հայաստանի «Ջինվորի մայր» հասարակական կազմակերպությունը լուրջ աշխատանք է կատարում բնակչությանը իրազեկելու, սոցիալական հարցումներ և մշտազննում իրագործելու, իրավական ուսուցում կազմակերպելու, մեթոդական գրականություն հրատարակելու և տարածելու ուղղությամբ: Հասարակության համար պետք է թափանցիկ լինեն պետական գործունեության բոլոր ոլորտները, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք պարունակում են պետական կամ օրենքով պաշտպանվող գաղտնիք: Առաջին հերթին դա վերաբերում է այն պետական կառույցներին, որոնք իրենց գործունեության բերումով անմիջականորեն առնչվում են մարդու իրավունքներին և ազատություններին, այդ թվում՝ գորակոչով զբաղվող մարմինները:

Օրենսդրության պահպանման գործում պատասխանատվություն առաջին հերթին կրում են պետական մարմինները: Ազգային բանակի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության ոլորտներում իրականացվող բարեփոխումների շնորհիվ հնարավոր դարձավ հստակ սահմանել բանակում տեղի ունեցող իրավախախտումների բացահայտման գործում զինվորական գերատեսչությունների և հասարակական հաստատությունների պատասխանատվության աստիճանը: Այստեղ նկատելի է նաև ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ցուցաբերված էական հետաքրքրությունը անցկացվող մշտազննման նկատմամբ, ինչը հանգեցրեց հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության սերտացմանը:

2009 թ. փետրվարի 1-ից նոյեմբերի 30-ը «Ջինվորի մայր» ՀԿ-ն անցկացրել է մշտազննում՝ գորակոչի ընթացքում քաղաքացիների իրավունքների խախտումները բացահայտելու նպատակով:

Ներկայացվող վերլուծության համար տեղեկատվության աղբյուր են ծառայել հետևյալ խմբերի 3600 շահառուների՝ գորակոչիկների, զինվորների մայրերի, զորացրվածների, ինչպես նաև զինկոմիսարիատների, դպրոցների, հիվանդանոցների, պոլիկլինիկաների և պետական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների շրջանում կատարված հարցումները:

Մշտազննումն անցկացվել է Երևանում և ՀՀ որոշ մարզերում: Ներկայացնում ենք հետազոտության միայն այն արդյունքները, որոնք վերաբերում են գորակոչի ժամանակ քաղաքացիների իրավունքների խախտման դեպքերին:

Եվ այսպես. ընդհանուր խախտումների թվից առավել զանգվածային բնույթ են կրում, բժշկական հետազոտության ընթացքում քաղաքացիների իրավունքների խախտման դեպքերը (46,2 %):

Այլ տիպի խախտումներ հանդիպել են հետևյալ հաճախականությամբ.

– գորահավաքի ժամանակ գորակոչիկներին իրենց իրավունքների և ընթացակարգի մասին ոչ բավարար իրազեկում՝ 27,57 %,

– զինկոմիսարիատներ կանչելու սահմանված կարգի խախտումներ՝ 11,66 %,

– ներկայացվող փաստաթղթերի ընդունումից հրաժարվելու հետ կապված խախտումներ՝ 6,24 %:

Չորակոչիկների իրավունքների խախտումների հիմնական պատճառներից մեկն է գորակոչիկների և նրանց ընտանիքի անդամների ցածր իրավական մշակույթը և իրավագիտակցությունը:

Հարցված գորակոչիկների միայն 9,7 %-ն է նշել, որ գորակոչի կարգի վերաբերյալ տեղեկություններ ստացել է դպրոցում: Սակայն զինկոմիսարիատի պատասխանատուների պատասխանները վկայում են, որ գորակոչի կարգի վերաբերյալ դպրոցում տարվում են բացատրական աշխատանքներ, մասնավորապես, «Իրավունքի հիմունքներ»՝ 42,8 %, և «Զինվորական պատրաստություն»՝ 35,7 %, առարկայական դասերի ժամանակ:

Զինվորների մայրերի 63,2 %-ի կարծիքով, իրենք տեղյակ են, թե որ դեպքերում գորակոչիկը կարող է օգտվել բնակավայրին մոտիկ ծառայելու, զինվորական ծառայությունից ազատվելու, տարկետում ստանալու կամ այլընտրանքային ծառայություն անցնելու իրավունքից, սակայն 36,38 %-ը այդ տեղեկություններին չի տիրապետում:

Մշտազնման արդյունքներով պարզ դարձավ, որ գորակոչիկները և նրանց ծնողները շատ քիչ են օգտվում գորակոչային հանձնաժողովի որոշումները բողոքարկելու իրավունքից: Այն հարցին, թե՞ ներկայացվել են արդյոք գորակոչի ընթացքի վերաբերյալ բողոքներ որևէ պատկան մարմին, մայրերի միայն 4,6 %-ն է տվել դրական, իսկ 3,1 %-ը՝ բացասական պատասխան: Չորացրվածներն այդ հարցին պատասխանել են ձևականորեն, իսկ 59,8 %-ը հրաժարվել է պատասխանելուց: Բողոքարկումների պասիվության պատճառներին վերաբերող 5 հարցերին ընդհանուր առմամբ պատասխանել է մի քանի մարդ՝ հարցվածների 0,3 %-ը:

Կազմակերպության բազմամյա աշխատանքը ցույց է տալիս, որ գորակոչի ընթացքում տեղ գտած իրավախախտումների ոլորտում առկա են դրական տեղաշարժեր, որոնք պայմանավորված են զինկոմիսարիատների աշխատանքային ոճի փոփոխությամբ, գորահավաքի ընթացքի նկատմամբ վերահսկողության ուժեղացմամբ և այդ գործում ՀԿ-ների ներգրավմամբ: Սակայն իրավիճակը դեռ հեռու է իդեալականից:

Ինչպես ցույց են տալիս մեր դիտարկումները, գորակոչիկների և նրանց ընտանիքների իրավունքների մասին տեղեկացումն ու ուսուցումը կտրուկ նվազեցնում են գորակոչման ժամանակ ապակողմնորոշման ռիսկերը:

Քաղաքացիների իրավունքների խախտումները բժշկական զննման ընթացքում ամենատարածվածն են և հղի են բացասական հետևանքներով: Նման խախտումները, որոնց համար քաղաքացիները դիմում են իրավապաշտպան

կազմակերպությունների օգնությամբ, առավել զանգվածային են և կազմում են բոլոր խախտումների մոտ 46,2 %-ը:

Մշտազննումը հերթական անգամ ապացուցեց, որ թեև զորակոչիկներին իրենց իրավունքների մասին իրազեկման ուղղությամբ կազմակերպությունը հանրապետության ամբողջ տարածքում կատարել է մեծ աշխատանք (սեմինարներ, հանդիպումներ, օրենքների տեքստերի և մեր կազմակերպության տեղեկատվական հրատարակումների տարածում և այլն), քաղաքացիները տեղյակ չեն բժշկական հիմունքներով տարկետման իրավունքների մասին, չգիտեն, թե որ փաստաթղթում են դրանք ամրագրված, ինչպես կարելի է դրանց ծանոթանալ: Բացի այդ, ընտանիքներում հաճախ կան լիարժեք հետազոտության և բուժման համար ֆինանսական խնդիրներ: Ոչ պակաս դեր են խաղում նաև գյուղերում բժշկական հաստատություններ չլինելու և հիվանդանոցների հեռու գտնվելու հանգամանքները:

Վերջին տարիներին, կապված սոցիալ-տնտեսական իրավիճակի հետ, նկատվում է զորակոչային տարիքի երեխաների առողջության որոշ վատթարացում:

Ինչպես հայտնաբերվել է մշտազննման ենթարկված գրեթե բոլոր մարզերում, բժշկական նորմերով զինծառայության պիտանելիության կատեգորիաների որոշումը հաճախ կատարվում է առանց անհրաժեշտ մանրամասնությունները հաշվի առնելու, առանց զորակոչիկի առողջական վիճակը արտացոլող բժշկական փաստաթղթերի:

Հայտնաբերվել են նաև այնպիսի խախտումներ, որոնք վերաբերում են բժշկական քննման ընթացակարգին, մասնավորապես՝ բժշկական հաստատություններ կլինիկական հետազոտման ուղարկված զորակոչիկների 40,1 %-ը ոչ մի փոխհատուցում չի ստացել, և ճանապարհածախսը, օրական ծախսերը կատարվել են ընտանիքի միջոցներով, իսկ 4,6 %-ին օգնել են բարեկամներն ու ծանոթները, և զորակոչիկների միայն 9,3 %-ն է ստացել դրամական փոխհատուցում՝ հիվանդանոց հասնելու կամ քաղաքում գիշերելու համար: Մայրերի 77,1 %-ը գումարային փոխհատուցման վերաբերյալ հարցին անգամ չի պատասխանել:

Ընդհանուր առմամբ, զորակոչիկներին՝ հատուկ սահմանված բժշկական հաստատություններ հետազոտման ուղարկելու պրակտիկան վերանայման կարիք ունի:

Բուժիմանարկները, տարեցտարի մասնակցելով զորակոչային միջոցառումներին, ձևավորում են զինկոմիսարիատների հետ կայուն կապեր և շահագրգռված են հետազոտություն անցկացնելու համար բյուջեից գումարներ ստանալու մեջ: ՈՒՍտի կարելի է ենթադրել, որ այդ շահագրգռվածությունը կարող է ազդել նրանց եզրահանգումների վրա: Ի հավաստումն ասվածի՝ տարեցտարի աճում է իրավապաշտպան կազմակերպություններ ուղղված այն դիմումների թիվը, որոնք վերաբերում են անկախ բուժհաստատությունների և զինկոմիսա-

րիատների ուղեգրերի հիման վրա բուժհաստատությունների տված ախտորոշումների զգալի անհամապատասխանությանը:

Նշված խնդիրները ի վերջո կարող են հանգեցնել այն բանին, որ ՀՀ Ջինված ուժերը համալրվեն զինծառայողներով, որոնք ի վիճակի չլինեն ծառայության ընթացքում լիարժեք կերպով կատարելու զինվորական պարտականությունները:

Հետևություններ և առաջարկներ: Կատարված մշտազննման արդյունքները վկայում են, որ զինվորական ծառայությանը զորակոչման ոլորտում քաղաքացիների իրավունքների խախտման հիմնական պատճառներն են ինչպես իշխանության մարմինների պաշտոնատար անձանց կողմից իրավական նորմերի խախտումը, այնպես էլ քաղաքացիական բնակչության անտեղյակությունը, իրավական անպատրաստությունն ու անտարբերությունը:

Մշտազննման ընթացքում պարզ դարձավ նաև, որ ՀՀ ՊՆ համակարգը օգտագործում է իր ներուժը՝ զորակոչային գործընթացի վերահսկողությունը բարելավելու ուղղությամբ: Այս առումով պետք է նշել թե՛ գծի ստեղծումը, դիտողական քարոզչության ձևերի կիրառումը, միջազգային և շահագրգիռ ոչ կառավարական կազմակերպությունների հետ համագործակցության ակտիվացումը:

Սակայն ծրագրի իրագործման ժամանակահատվածում կատարված հարցումները ցույց տվեցին, որ առավել հաճախ տեղի ունեցող իրավախախտումները դիտվում են զորակոչիկների բուժզննման, ուղեգրված բժշկական հետազոտության և զինվորական ծառայությանը պիտանելիության աստիճանի որոշման ժամանակ (46,2 %): Մեր դիտարկումների արդյունքներով մենք մշակել ենք հետևյալ առաջարկությունները:

1. Բուժզննման համար սահմանված կարգի համաձայն՝ զորակոչիկն իր հիվանդությունը հիմնավորելու համար ներկայումս չի կարող օգտվել տարիների ընթացքում իր առողջական վիճակը վերահսկող բուժող բժշկի, ինչպես նաև այլ բժիշկների մասնագիտական եզրակացությունից: Այդ կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում կատարել համապատասխան կանոնակարգային փոփոխություններ և ռազմաբժշկական հանձնաժողովների համար սահմանել օրինական հիմքեր՝ քննության առնելու համար զորակոչիկի հիվանդության վերաբերյալ հիմնավորված այլընտրանքային բժշկական եզրակացությունը:

2. Ռազմաբժշկական հանձնաժողովների անդամ բժիշկները շահագրգռված չեն զորակոչիկի հիվանդության հետագա ընթացքը և զինվորական ծառայության ընթացքում դրա զարգացումները կանխորոշելու մեջ, քանի որ հիվանդ զորակոչիկի հետագա առողջական վիճակի համար պատասխանատվություն չեն կրում: Նպատակահարմար ենք համարում մշակել հստակ համակարգ՝ իրենց պարտականությունների կատարման մեջ թերացած բժիշկներին վարչական և նյութական պատասխանատվության ենթարկելու համար:

3. Ջորակոչիկներն ու նրանց ընտանիքների անդամները ոչ բավարար չափով են իրազեկված իրենց իրավունքների մասին: Ուստի նպատակահարմար

ենք համարում չէ՛նք ՊՆ համապատասխան ստորաբաժանումների և ՀԿ-ների համատեղ ջանքերով մշակել երկարաժամկետ գործողությունների պլան՝ զորակոչի ոլորտում բնակչության իրազեկման և տեղեկացվածության մակարդակի բարձրացման նպատակով: Մասնավորապես՝ զինկոմիսարիատներում, պոլիկլինիկաներում, տեղական ինքնակառավարման մարմինների գրասենյակներում կազմակերպել զորակոչիկների և նրանց ընտանիքների անդամների իրազեկվածությանը նպաստող միջոցառումներ՝ օգտագործելով քարոզչության համապատասխան միջոցներ (պաստառներ, տեղեկատու թերթիկներ, հայտարարություններ և այլն):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Տես «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն», 46 հոդված: Ե., 2005:
2. «Զինապարտության մասին» ՀՀ 1998 թ. սեպտեմբերի 16-ի հմ. ՀՕ–250 օրենքը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 1998 թ., հմ. 26 (59)):
3. «Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին» ՀՀ 1999 թ. մարտի 3-ի հմ. ՀՕ–289 օրենքը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 1999 թ., հմ. 8 (74)):
4. Գ. Ե. Միրզոյան, Ա. Է. Հովհանյան, Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական խնդիրները հասարակական կազմակերպության տեսանկյունից: «ՀԲ», 2009, հմ. 4:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ЗАЩИТЫ ПРАВ ПРИЗЫВНИКОВ
СО СТОРОНЫ ОБЩЕСТВЕННОЙ ОРГАНИЗАЦИИ

Г. Е. МИРЗОЯН, кандидат педагогических наук, Председатель
Общественной организации «Зинвори майр», А. Э. ОБНАНЯН, координатор
программ Общественной организации «Зинвори майр»

РЕЗЮМЕ

Строгое соблюдение установленного законодательством порядка призыва, в частности, по защите прав и свобод призывников, является необходимым условием повышения авторитета воинской службы и формирования у населения положительной мотивации к ней.

В данном аспекте существенное значение имеет действенный контроль над всем процессом призыва со стороны общественных организаций.

Общественная организация «Зинвори майр» («Мать солдата») в течение 20 лет осуществляет многоплановую инициативную деятельность по всем параметрам призыва. Недавно проведенный мониторинг показал, что основными причинами нарушения прав граждан в сфере призыва являются: нарушение установленного порядка призыва и прав призывников, преимущественно в процессе медицинского обследования, низкий уровень правовой культуры и правосознания у призывников и членов их семей.

В связи с этим в организации «Зинвори майр» разработаны конкретные предложения по повышению правосознания и осведомленности насе-

ления, установлению четкого правового порядка военно-медицинского обследования, гарантирующего его оптимальность и прозрачность, а также ответственность врачей.

SOME PROBLEMS OF THE CONSCRIPTS' RIGHTS PROTECTION BY THE NON-GOVERNMENTAL ORGANIZATION

*G. Ye. MIRZOYAN, PhD in Pedagogical Sciences, Chairman of «Zinvori Mair»
Non-Governmental Organization, A. E. HOVNANYAN, Program Coordinator
of «Zinvori Mair» Non-Governmental Organization*

SUMMARY

The strict adherence to the military draft procedure set by the legislation, particularly, on the conscripts' rights and freedoms protection is a necessary condition for enhancing the prestige of the military service and forming the population's positive attitude towards it.

In this aspect the efficient control over the whole draft process, made by non-governmental organizations, is of essential significance.

It has been 20 years the «Zinvori Mair» («Soldier's Mother») NGO has been implementing multifaceted initiatives at all parameters of the draft. A recent monitoring has shown that the main causes of the citizens' rights violation in the conscription sphere are the following: breach of the established draft procedure and the conscripts' rights violation, mostly in the process of medical examination, as well as the low level of legal culture and legal consciousness among the conscripts and their families.

In these terms concrete proposals have been elaborated by «Zinvori Mair» NGO. They namely refer to the increase of legal consciousness and public awareness, establishment of precise legal order of the medical examination ensuring its optimality and transparency, as well as doctors' responsibility.

**ՀՀ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊՏԻՄԱԼԱՑՄԱՆ ՈՐՈՇ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ
ՄԱՍԻՆ՝ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

*Տ. Ռ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, կապիտան, պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի
ավագ սպա-մասնագետ*



**1. Անվտանգության պաշտպանական ոլորտում ռա-
ցիոնալ և օպտիմալ որոշումների կայացման խնդիրը¹**

Անվտանգության ապահովման պաշտպանական ոլոր-
տի ռազմավարական որոշումների կայացումը բացառա-
պես պետության ռազմավարական ղեկավարության
(ՌՂ) առանձնաշնորհն է²: Նման որոշումներ կայացնող
անձանց հայացքները, որպես կանոն, ենթարկվում են
որոշակի ազդեցության: Այդպիսի ներգործություն իրա-
կանացում են ազդեցության խմբերը, հասարակությու-
նը՝ հասարակական կարծիքի միջոցով, հրապարա-

կային քաղաքական գործունեությամբ զբաղվող կազմակերպությունները, որոշ գե-
րատեսչությունների ներգերատեսչական շահերը պաշտպանող լոբբինգը և այլն:
Այդ պայմաններում ռազմավարական որոշումների կայացման գործում զգալի չա-
փով աճում է անվտանգության ու, մասնավորապես, պաշտպանության խնդիրների
հետազոտություններով զբաղվող պետական և ոչ պետական վերլուծական կազմա-
կերպությունների* դերը: Իրերի նման դրվածքը բնորոշ է հատկապես ԱՄՆ-ին³:

Նման կառույցների գլխավոր նախանշանակումն են պետական պատվերի
շրջանակներում հատկացվող համապատասխան դրամաշնորհների միջոցով կամ
իրենց նախաձեռնությամբ (հասարակական կամ մասնավոր հիմնադրամների
ֆինանսավորմամբ) այս կամ այն արդիական խնդիրների խորը ուսումնասի-

¹ «Ռացիոնալ և օպտիմալ որոշումների կայացում» հասկացության վերաբերյալ կան բազմաթիվ
հիմնավոր գիտական ուսումնասիրություններ, որոնց մի զգալի մասից օգտվել է հեղինակը, տես,
օրինակ, J. E. Anderson. Public Policymaking. 2d ed. Boston, 1994, P. 37:

² Որոշումների կայացման գործընթացի մասին ավելի հանգամանորեն տես *Ղ. Ս. Չիլինգարյան,
Վ. Պ. Ավերիսյան, Տ. Ռ. Մարտիրոսյան*, ԱՄՆ-ի պաշտպանական քաղաքականության համակարգի
ղեկավարման ու կառավարման փորձի մասին: «Հայկական բանակ», 2008, հմ. 4:

* Մտավոր կենտրոններ՝ ռազմավարական գաղափարների գեներացիայի, մտքի կենտրոններ
(անգլ.՝ think-tanks):

³ ԱՄՆ-ի փորձի մասին տես *С. Чесноков. Роль негосударственных «мозговых центров»
в процессе принятия решений военно-политическим руководством США в области
обороны и безопасности. «Зарубежное военное обозрение» («ЗВО»), 2007, № 5:*

րությունն ու այն առաջարկությունների մշակումը, որոնք գործնական որոշումների մշակման ժամանակ հաշվի են առնվում Ռ-ի կողմից:

2. Ռիսկերը և պետության կողմից ռիսկերի կառավարման մեխանիզմը

Պաշտպանական հարցերը քննարկելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ռիսկերի* կառավարմանը (մենեջմենտ), որի մեթոդաբանության համաձայն տարբերակվում են երկու տեսակի ռիսկեր՝ «աղետածին» և «քրոնիկական»:

Աղետածին (catastrophic) ռիսկերը ի հայտ են գալիս արտակարգ իրավիճակներում: Այդպիսիք են պետության վրա զինված կամ չզինված հարձակումը (ոչ ռազմական բնույթի՝ տեղեկատվահոգեբանական, դիվանագիտական, տնտեսական, ֆինանսական և այլն), տեխնածին կամ բնական մեծ աղետները, պետության մեջ հասարակական կարգի պահպանմանն սպառնացող վտանգի շեշտակի ուժգնացումը կամ դրա ապահովման հանկարծակի անհնարիությունը, ազգային իշխանության պետական մարմինների գործունեությունը նենգադուլելը և այլն:

Քրոնիկական (chronic) ռիսկերը գոյություն ունեն մշտապես: Դրանք, օրինակ, այն ռիսկերն են, որոնց չեզոքացումը պայմանավորված է պետական վարչական ապարատի կամ պաշտպանական կազմակերպվածքի կայունությամբ և գործունակությամբ, քանի որ դրանց գործունեությունից է կախված պետության գործառույթների կատարման արդյունավետությունը: Նման ռիսկերի շարքն են դասվում նաև այլ պետությունների կողմից այնպիսի ռազմավարական ծրագրերի մշակումը և իրականացումը, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ տվյալ պետության ազգային շահերի վրա, օրինակ՝ ՀՀ դեպքում հակահայկական տարրեր պարունակող ռազմաքաղաքական դաշինքների ձևավորումը, ՀՀ մեկուսացմանը միտված որևէ երկարաժամկետ ձեռնարկում, հարևան որևէ պետության ռազմականացման տեմպերի արագացումը և այլն:

ՀՀ-ում ավելի մեծ ուշադրություն է դարձվում «աղետածին» ռիսկերին, դրանց հակազդեցությանն ու հետևանքների վերացմանը: Մինչդեռ քրոնիկական ռիսկերի պատեհաժամ հայտնաբերումը և դրանց դիմակայելուն պատրաստ լինելը կարող են մեծապես նպաստել որոշ «աղետածին» ռիսկերի կանխմանը:

Անվտանգության (այդ թվում՝ պաշտպանական) ոլորտին առնչվող տարբեր մակարդակների պետական մարմինների գործունեության մեջ ռիսկերի կառավարման համար սովորաբար կիրառվում են երկու հիմնական մոդելներ՝ հակազդումային (ռեակտիվ) ու «ձևարկված» (ֆորմալիզացված): Այս մոդելները տարբերվում են ըստ անվտանգության համակարգի վրա անսպասելի կամ սպասելի ներգործության կամ ըստ նմանատիպ ներգործության ռիսկերի:

Հակազդումային կառավարումը վարչարարություն է՝ ի պատասխան պաշտպանական անվտանգության տեսանկյունից իրավիճակի անսպասելի անբարե-

* Ազգային անվտանգության ոլորտում ռիսկը ազգային շահին կամ պետության ինքնիշխանությանը, տարածքին կամ բնակչությանը կորուստների, վնասների, վնասվածքների պատճառման, հիվանդությունների, մահվան դեպքերի առաջ գալու հավանականությունն է՝ բերված ժամանակի միավորին, և դրանց ի հայտ գալու պարագայում՝ բացասական հետևանքների ծանրությունը, կամ լրջությունը: Տես Ա. Պ. Ալբին. Управление в ситуации риска. Тверь, 2000, сс. 59–61:

նպաստ կամ բարենպաստ փոփոխության: Ռեակտիվ կառավարման դեպքում դրոյիչի ազդեցությամբ մշակվում և իրականացվում են այնպիսի միջոցառումներ, որոնք առաջին հերթին միտված են նախնական իրադրության վերականգնմանը կամ առկա վիճակի բարելավմանը, ինչպես նաև անբարենպաստ դեպքում՝ նմանատիպ երևույթների կրկնության կանխարգելմանը, իսկ բարենպաստ իրավիճակի ձևավորման պարագայում՝ դրանից օգտվելուն: Ռիսկերի կառավարման այս տարբերակն ինքնաբերական (սպոնտան) բնույթի է, դրա պարագայում վարչարարական միջոցները ձեռնարկվում են առանց օգուտները, ծախսերը և շահեկանությունը մանրակրկիտ կերպով ուսումնասիրելու, քանի որ բավարար ժամանակ չի լինում ծագող խնդիրների լուծման ձևերը կամ եղանակները կշռադատելու համար:

Ձևարկված կառավարումը, ի տարբերություն հակազդումայինից, շատ ավելի արդյունավետ է, քանի որ հիմնվում է սպառնալիքների վաղորոք բացահայտմամբ ռիսկերը մանրամասնորեն ուսումնասիրելու, վերլուծելու և դրանց չեզոքացման տարբերակներ մշակելու մեթոդի վրա, այսինքն՝ նախապես ծրագրվող գործողությունների համալիր է: Այն ենթադրում է ռիսկի (նաև դրա հնարավոր հետևանքների ծանրության աստիճանի) քանակային գնահատում՝ մինչև հնարավոր անբարենպաստ իրավիճակի բացասական հետևանքների նվազարկմանը (մինիմալացում) նպատակաուղղված որոշումներ կայացնելը:

«Հակազդումայինից» ավելի արդյունավետ «ձևարկված» մոդելի մշակումն ու կիրառման մեթոդական ապահովումը և՛ քանակական, և՛ որակական առումներով պահանջում են գիտական բաղադրիչի զերակշռում: Ուստի ռազմավարական որոշումների կայացման գործընթացում ձևարկված մոդելի լիարժեք և արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ է, որ այդ մոդելի տարբերակները մշակեն ու դրանց մեթոդական ապահովումն իրականացնեն անվտանգային ոլորտում համապատասխան որակավորմամբ գիտահետազոտական հաստատությունները:

3. Ռիսկերի կառավարման համակարգը և դիպարիմանս պեսանկյունները

Պաշտպանական անվտանգության ոլորտում ռիսկերի կառավարման համակարգի դիտարկումը կարող է կատարվել մեթոդաբանական, նորմատիվ իրավական, կազմակերպական, կադրային, կանխատեսումային, տեղեկատվահաղորդակցական, սոցիալ-հոգեբանական և տեղեկատվահոգեբանական ներգործությունների տեսանկյուններից: Դիտարկենք դրանցից մի քանիսը:

3. 1. Մեթոդաբանական ներգործությունը դրսևորվում է երեք փոխկապված առումներով:

Առաջինը վերաբերում է ազգային անվտանգության համակարգի կառուցման հիմքում դրված մեթոդաբանության ընտրությանը: Անվտանգության զարգացած համակարգեր ունեցող պետությունների համար առավել արգասաբեր է ռիսկաբանական համակարգասիներգիկ մեթոդաբանությունը, որն առաջին անգամ կիրառվել է ԱՄՆ-ում անցյալ դարի ութսունական թվականների կեսերին⁴:

⁴ Стю А. П. Альгин. Анализ, оценка и менеджмент риска. Пособие для студентов. СПб., 2002, տես նույնի՝ «Управление в ситуации риска». Тверь, 2000, сс. 59–61:

Դրա էությունն այն է, որ պետության ու հասարակության կողմից օգտագործվող հաստատություններն ու կառույցները որպես միասնական համակարգ (որում նշված բաղադրիչները փոխլրացնում են միմյանց, սակայն ունեն իրավունքների ու պարտականությունների հստակ տարանջատում) շատ ավելի արդյունավետ են գործում, քան՝ առանձին վերցրած: Ռիսկի հայեցակարգի օգտագործումը հնարավորություն է տալիս ավելի համարժեք պատկերացում ստանալու ազգային անվտանգության ապահովման ոլորտում առկա իրական վտանգների և դրանց չափերի մասին: Ուստի պետական մարմինները կարող են համապատասխան վերլուծությամբ մշակել անվտանգության միջավայրի վրա (առաջին հերթին՝ շատ վտանգավոր և միջին վտանգի գործոնների) բացասական ազդեցության աստիճանի նվազեցման և դրական ազդեցության ուժեղացման արդյունավետ միջոցներ:

Երկրորդ կապված է այն խնդրի լուծման հետ, թե ինչպիսի միջոցներ կարող են կիրառվել ներքին, տարածաշրջանային կամ համընդհանուր բնույթի առկա կամ կանխատեսվող ռիսկերը բացահայտելու նպատակով: Դրա համար անհրաժեշտ է ունենալ համապատասխան ռեսուրսներ, այդ գործունեության սկզբունքները և կարգը սահմանող նորմատիվ բազա, համապատասխան կազմակերպական կառուցվածքներ: Նպատակահարմար է պաշտպանության նախարարության համակարգում ռիսկերի ուսումնասիրությունը և համապատասխան օղակների՝ կառավարային որոշում կայացնողների (պաշտոնյաների, մարմինների) համար մոդելների մշակումը կատարել հետևյալ մակարդակներում.

- *պաշտպանական քաղաքականության մակարդակում*՝ պաշտպանության համակարգում գործող ու համապատասխան գիտական ներուժ ունեցող ռազմավարական հետազոտությունների հաստատությունում,

- *ռազմական քաղաքականության մակարդակում*՝ ՋՈՒ-ի Գլխավոր շտաբի՝ անհրաժեշտ գիտական ներուժ ունեցող համապատասխան օղակում, որն զբաղվում է ռազմական անվտանգության հարցերով:

Ռիսկերի աղբյուրները բազմազան են, սակայն դրանց բացահայտումը պահանջում է մասնագիտական մոտեցում, ինչը հետագայում աղետաբեր ռիսկերից խուսափելու առավել արդյունավետ միջոցներից է:

Բացահայտված ռեալ և հնարավոր ռիսկերը, որոնք կազմում են տարածքային ռիսկի ուղղվածության տրամատի (պրոֆիլի) մոդելը, պահանջում են գնահատում, այսինքն՝ առաջացման հավանականության և հաճախականության, հնարավոր հետևանքների ծանրության աստիճանի, ընդգրկման ծավալների որոշում:

Բացահայտված ռիսկերի համեմատական գնահատումը հնարավորություն է տալիս առկա և ակնկալվող ռիսկերը բաժանելու երեք խմբի՝ մեծ, միջին և նվազ ռիսկայնությամբ: Այս մոտեցման դեպքում կարելի է մեծացնել պաշտպանական անվտանգության ոլորտի կառավարման համակարգի արդյունավետությունը, այնուհետև վերափոխել նրա ֆինանսավորումը և մշակել գործնական քայլեր ռիսկերի, վտանգների ու սպառնալիքների չեզոքացման ուղղությամբ:

Երրորդ առումը կապված է ռիսկերի կառավարման հայեցակարգի և ռազ-

մավարության մշակման հետ: Այստեղ անհրաժեշտ է ռիսկերի կառավարման հետ առնչվող առավել կարևոր գաղափարների և արդյունքների համակարգային վերլուծություն: Հնարավոր չէ առանց լուրջ գիտական հետազոտությունների մշակել պաշտպանության ոլորտում ռիսկի հետ կապված խնդիրների ու դրանցով պայմանավորված որոշումների պատրաստման և ընդունման վերաբերյալ համակարգասիներգիկ տեսլական:

ՀՀ պաշտպանական անվտանգության ոլորտում ռիսկերի կառավարման ու դրա տեսության հիման վրա որոշումների պատրաստման* և ընդունման ընդհանուր հայեցակարգների մշակումը կապված է հետևյալ խնդիրների լուծման հետ.

- ՀՀ զարգացման ռազմավարական կանխատեսում՝ միտումների, հնարավորությունների ու կարողությունների գնահատման միջոցով, մոտակա 10-15 տարիների կտրվածքով հայ հասարակության զարգացման ու ապագա փոփոխությունների այլընտրանքային սցենարների վերլուծության գործիքի կիրառմամբ ստացված մոդելով,

- ռիսկերի բացահայտում, գնահատում, դասակարգում և համակարգում (նկատի ունենք, որ անհրաժեշտ է պատկերացում կազմել ժամանակի մեջ ռիսկերի փոփոխման միտումների վերաբերյալ՝ կախված պետության և հայ հասարակության զարգացման սցենարներից),

- ՀՀ-ի և հայության վրա աշխարհաքաղաքական գործոնների և հատկապես համընդհանրացման ազդեցության ու դրանց հետևանքների ուսումնասիրություն՝ համաշխարհային ու տարածաշրջանային հիմնախնդիրների ազդեցության գնահատմամբ,

- գիտական հետազոտության հիմքի վրա արևելյան ու արևմտյան պաշտպանական համակարգերի առավել շահավետ բաղկացուցիչները համադրելու հնարավորության ուսումնասիրում, նոր ստեղծվելիք համակարգի սիներգիկության ապահովում,

- «հետարդյունաբերական ռիսկերի» վերլուծության և գիտական կանխատեսման անհրաժեշտություն՝ կապված այնպիսի հեռանկարային տեխնոլոգիաների հետ, ինչպիսիք են՝ բիոտեխնոլոգիաներն ու գենային ինժեներիան, նանո-, համակարգչային ու հեռուստահաղորդակցային տեխնոլոգիաները, նոր տեսակի (նոր ֆիզիկական սկզբունքներով գործող) զենքերը, զանգվածային և անհատական գիտակցության ու վարքի վրա ներգործության տեխնոլոգիաները և այլն: Ուստի անհրաժեշտ է, որ պաշտպանության ոլորտի ռազմավարական որոշումների մշակումը կատարվի պաշտպանական գերատեսչության գիտահետազոտական կենտրոններում այլ՝ կառավարական և ոչ կառավարական, գիտահետազոտական հիմնարկների ներգրավմամբ: Գիտնականները, փորձագետները պետք է արդեն այսօր հոգ տանեն, որ մեր հասարակությունը պատրաստ լինի դիմակայելու գալիք

* Որոշումների մշակումը և պատրաստումը, ներառում է խնդիրների մշտազննման (անգլ.՝ *monitoring*), պրոբլեմների վերհամման, քաղաքական որոշումների օրակարգի կազմման, որոշումների գիտական մշակման և վարչական վերջնամշակման ենթափուլերը:

վտանգներին, իսկ ապագա հնարավորությունները կիրառվեն լավագույն ձևով,
 • ռիսկերի կառավարման ժամանակակից տեսության կիրառում (հիմնված սխեմերգիայի, կազմակերպված քննադատականության, նորմալ վթարների, կանխատեսվող նեյրոցանցների, դինամիկ քառսի տեսությունների վրա):

3.2. Կազմակերպական ներգործությունը կապված է հատուկ կառավարման և խորհրդակցական մարմինների (օրինակ՝ ազգային անվտանգության խորհուրդ, պաշտպանության խորհուրդ, ռազմավարական հետազոտություններ կատարող, պաշտպանական ծրագրեր մշակող ու պլանավորող, պաշտպանական քաղաքականություն իրականացնող հաստատություններ), միացյալ պետական պաշտպանական համակարգի՝ պաշտպանական կազմակերպվածքի հետ:

Այժմ ՀՀ-ում ռիսկերի կառավարման համակարգը հարմարեցված է աղետածին ռիսկերի դեմ պայքարին, սակայն դեռ պատրաստ չէ մշտական՝ քրոնիկական, ռիսկերի կառավարմանը: Ավելին. անգամ պաշտպանության ոլորտում աղետաբեր ռիսկերը ուսումնասիրվում ու դառնում են քաղաքականություն միայն ռազմական քաղաքականության մակարդակում, թեև պետք է նշել, որ ՊՆ մակարդակում կատարվում է նաև հնարավոր հակառակորդների մշտազննում, ինչը կարող է դառնալ որոշ քրոնիկական ռիսկերի կառավարման հիմք:

Աշխարհում քրոնիկական ռիսկերի մշտազննում ու կառավարում հիմնականում իրականացնում են գիտահետազոտական կառույցները, որոնք ներգրավված են այդ բնագավառում պետական պատվերի մեջ: Չարգացած երկրներում որոշումների մշակման և ընդունման համակարգը երկթև է. այն ներառում է ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական ռազմավարական հետազոտությունների գիտական կենտրոններ:

Գոյություն ունեն այս ոլորտում ռազմավարական որոշումների պատրաստման և ընդունման երկու մոդել:

Առաջին մոդելով ռազմավարական որոշում կայացնողը պատվեր է ուղարկում համակարգում գործող ռազմավարական հետազոտությունների կենտրոնին, որն իրեն հատկացված միջոցներից պատվեր է տալիս կա՛մ համապատասխան մասնագիտացում ունեցող առանձին փորձագետների, կա՛մ ոչ կառավարական մտավոր կենտրոնին, որոնք ունեն նման խնդիրներ հետազոտելու փորձ: Այնուհետև ռազմավարական հետազոտությունների պետական կենտրոնում կատարվում է ստացված արդյունքների մոդելավորում և գիտական փորձարկում:

Երկրորդ մոդելով որոշումների պատրաստման համար պատասխանատու գործադիր օղակը զուգահեռաբար պատվեր է տալիս և՛ պետական, և՛ ոչ պետական գիտահետազոտական կենտրոններին ու ստացված արդյունքների համադրման կամ որևէ մեկի նախընտրության միջոցով պատրաստում է որոշման նախագիծ: Այս մոդելի թերությունն այն է, որ տվյալ օղակը հիմնականում չի ունենում համապատասխան փորձագիտական կադրեր և ստիպված է լինում հրավիրել անհրաժեշտ մասնագետների՝ ներկայացված առաջարկություններից ընտրություն կամ դրանց համադրում կատարելու համար: Երբեմն դա հանգեց-

նում է համապատասխան փորձագետի վրա գերատեսչական կամ արտաքին ճնշման, ինչի հետևանքով վերջնական որոշումը կարող է լինել ոչ օպտիմալ կամ ոչ բավարար չափով ռացիոնալ:

Որոշումների մշակման, կայացման ու կատարման գործընթացում կազմակերպական առումով էական է գիտական հիմնարկի լիդերությունը* (*leadership*)՝ կապված ռիսկերի չեզոքացմանն ուղղված միջոցառումների մշակման ժամանակ ցուցաբերվող գիտական մոտեցման շնորհիվ ռազմավարական սխալների նվազարկման հետ:

Որոշումների մշակումը և իրականացումը նպատակահարմար է կատարել տարբեր պետական ստորաբաժանումների ուժերով՝ դրանց արդյունավետությունը ապահովելու, մարդկանց նեղ խմբային շահերի լոբբինգից խուսափելու և որոշում կայացնող վերին օղակում ճշգրիտ տեղեկույթ հավաքելու ու իրադրությանը ճիշտ տիրապետելու համար: Բացի այդ, որոշումները մշակող, կայացնող և իրականացնող յուրաքանչյուր օղակում գոյություն ունեն մերխմբային շահեր: Ուստի՝ եթե որոշումը մշակում և իրականացնում է միևնույն օղակը, ապա նա կարող է որոշում կայացնողին ներկայացնել ոչ ամբողջական կամ խեղված տեղեկույթ կամ որոշման մեջ նախատեսել որոշակի մեղմացումներ՝ դրա իրականացման հետ կապված իր հետագա աշխատանքը հեշտացնելու նպատակով: Նման դեպքերում շահերի բախում** կառաջանա նրա և որոշում կայացնողի ու պաշտպանական քաղաքականության օբյեկտների միջև:

3.3. Կադրային ներգործությունը ներառում է միջոցներ՝ կապված, մասնավորապես, անվտանգության և ռիսկի ոլորտի կադրերի պատրաստման հետ⁵: Պաշտպանական ոլորտի կադրերի պատրաստման գործում ՀՀ և ՌԴ իրողությունների մեծությամբ, այդ թվում՝ կադրերի անբավարարության առումով⁶, ենթադրում է այդ ոլորտի խնդիրների լուծման որոշակի մեծություն: Ուստի նշված խնդիրների լուծումների վերաբերյալ ռուսաստանյան մասնագետների կարծիքները կարող են ուսանելի և կիրառելի լինել նաև մեզանում:

* *Լիդերությունը* որոշակի գործընթացը առաջնային նախաձեռնության դրսևորման վարելու սոցիալ-հոգեբանական, հասարակական, քաղաքական, տնտեսական երևույթ է: Միշտ չէ, որ առաջավարությունն իրականացնում է ղեկավարը: Օրինակ՝ Գերմանիայում պետության ղեկավարը կայսր Վիլհելմ 1-ինն էր (1797–1888 թթ.), սակայն պետության քաղաքականության մշակման, իրականացման ու վերահսկման գործառնությունում առաջավարը կանցլեր Օտտո ֆոն Բիսմարկ-Շոնհաուզենն էր (1815–1898 թթ.): Այդպիսին էին նաև Ֆրանսիայում Լյուդովիկոս 13-րդ (1601–1643 թթ.) և գլխավոր նախարար կարդինալ Արման-ժան դը Ռիշելիեի (1585–1642 թթ.) հարաբերությունները:

** *Շահերի բախումը* (անգլ.՝ *conflict of interests*) կառավարման մեջ և որոշումների կայացման գործընթացում այն իրավիճակն է, երբ մեկ դեմք կամ հաստատություն հանդես է գալիս միաժամանակ երկու կամ ավելի կարգավիճակներում, որոնք մրցակցում են միմյանց հետ, օրինակ՝ մշակողի, պլանավորողի և իրականացնողի դերերում (որոշումը մշակող – իրականացնող կամ մշակող – կայացնող – իրականացնող օղակներում և այլն):

⁵ Տես Ս. Խարչենո, Ա. Սրոխոջև. Некоторые аспекты подготовки специалистов и руководителей в области анализа риска. «Управление риском», 1997, № 4:

⁶ Տես Н. Хохлов. Управление риском. Учебное пособие для вузов. М., 1999, сс. 4–5:

Ըստ ռուսաստանյան մասնագետների՝ կադրային խնդիրը կարելի է լուծել հետևյալ հինգ հիմնական ձևերով:

1. Պաշտպանական ոլորտի համալսարաններում, քաղաքացիական բուհերում, մասնագիտացված ուսումնական հաստատություններում մասնագետներ պատրաստել ինչպես բակալավրի, այնպես էլ մագիստրոսի աստիճանով, որոնք ուսումն ավարտելուց հետո կկարողանան արհեստավարժ կերպով ուսումնասիրել տարբեր կազմակերպությունների և պետությունների գործունեությունը, պաշտպանական ոլորտում տարածաշրջաններին և համընդհանրացմանը բնորոշ ռիսկերը, վտանգներն ու սպառնալիքները, որոշել դրանց հնարավոր հետևանքները, քանակապես և որակապես գնահատել ռիսկերը, մշակել դրանց նվազարկման միջոցների և միջոցառումների համակարգ*:

2. Տարբեր բուհերում (մասնավորապես՝ պաշտպանական ոլորտի) վերապատրաստել մասնագետների, որոնք թեև չեն զբաղվելու ռիսկերի վերլուծությամբ, գնահատմամբ կամ կառավարմամբ, սակայն իրենց ունեցած գիտելիքները հնարավորություն կտան հասկանալու ռիսկի վերլուծության ոլորտում կատարվող հետազոտությունների իմաստն ու բովանդակությունը և աշխատանքում օգտագործելու դրանց արդյունքները**:

3. Ռազմավարական հետազոտությունների համար նախատեսված հաստատություններում կազմակերպվող դասընթացների միջոցով, այդ թվում՝ հրավիրված մասնագետների ներգրավմամբ, բարձրացնել պաշտպանական անվտանգության ոլորտում պետական մարմինների բարձր և միջին օղակի ղեկավարների պատրաստակամության մակարդակը: Դրա իմաստն այն է, որ ղեկավար աշխատողները սովորեն որոշումներ կայացնելիս օգտագործել գիտնականների կատարած համապատասխան վերլուծության ու գնահատման արդյունքները: Նման մոտեցումը հնարավորություն կտա վարչական կառույցների ներկայացուցիչներին զինելու անվտանգության խնդիրների և անհատական ու սոցիալական ռիսկերի կառավարման վերաբերյալ գիտելիքներով՝ տեսական հիմունքների մակարդակով:

4. Կառավարման վերին օղակի ղեկավարներին ծանոթացնել ռիսկի և անվտանգության տեսություններին: Մի շարք երկրների (ԱՄՆ, Հոլանդիա, Մեծ Բրիտանիա) փորձը վկայում է, որ քաղաքական իշխանությունները տարբեր բնույթի որոշումներ ընդունելիս հաճախ հենվում են փորձագետների ու վերլուծաբանների հատուկ գիտելիքների և առաջարկությունների վրա: Այսպես. ռիսկի վերլուծությունը՝ որպես որոշումներ կայացնելու հիմնական գործիք, վերջին տարիներին կարևոր դեր է ստացել Մալիտակ տանը և ԱՄՆ-ի Կոնգրեսում, որտեղ «ռիսկի վերլուծությունը... քաղաքական որոշումների կայացման գործընթացի համար գիտական տեղեկության կարգավորման մեխանիզմ է»⁷:

* Նման փորձ կա որոշ արևմտյան երկրներում: Օրինակ՝ Անգլիայում գործում է ռիսկի կառավարման ինստիտուտ, որտեղ պատրաստվում են ռիսկի կառավարիչներ (մենեջերներ): Նմանատիպ ուսումնական հաստատություններ կան Կանադայում, ԱՄՆ-ում և մի շարք այլ երկրներում:

** Նման փորձ Ռուսաստանում արդեն կա:

⁷ Մ. Խարչենկո, Ա. Պրոխոնկ, Նշ. աշխ., էջ 43:

5. Հղկել որոշումների կատարմանը և ռիսկերի չեզոքացմանը մասնակցող անձանց հմտությունները հետևյալ միջոցառումների իրականացմամբ.

ա) ճգնաժամային շտաբի* պլանում նշված ղեկավարության համար պարամունքների կազմակերպում՝ ճգնաժամային իրավիճակների առաջացման տարբեր սցենարներով,

բ) ճգնաժամային իրավիճակների հետևանքների հաղթահարման փորձի ուսումնասիրություն,

գ) նախորդ երկու կետերի իրականացման նպատակով նաև մոդելավորման համապատասխան խաղերի կազմակերպում:

Նման միջոցառումները նպատակահարմար է իրագործել գերատեսչական ռազմավարական գիտական հիմնարկում ստեղծված մոդելավորման կենտրոնում: Օրինակ՝ ԱՄՆ-ում այդպիսի հիմնարկ է պաշտպանական համակարգում գործող Պաշտպանական ազգային համալսարանը:

3.4. Տեղեկատվահաղորդակցային ներգործությունը կատարվում է հետևյալ երեք հիմնական մակարդակներում.

ա) առաջինը կապվում է անվտանգության կառավարման բուն համակարգի տեղեկատվական ապահովման հետ և առաջին հերթին վերաբերում է՝

–ռիսկերի ու վտանգների վերաբերյալ ազգային ու տարածաշրջանային տեղեկատվական ցանցերի ստեղծմանը և զարգացմանը,

–համապատասխան կազմակերպությունների համար միջազգային տեղեկատվական ցանցի մատչելիության ապահովմանը,

–ռիսկերի ու վտանգների վերաբերյալ հատուկ ձևերի տեղեկույթի և տեղեկատվության մշակմանը և կիրառմանը,

–ճգնաժամային (արտակարգ) իրավիճակների ու ռիսկերի ի հայտ գալու կամ կրկնվելու հաճախականությանը ու դրսևորման ոլորտներին,

–տեղական, ազգային ու տարածաշրջանային մակարդակներում աղետների և ռիսկային իրավիճակների զարգացումը նկարագրող գծապատկերների ու քարտեզների ստեղծմանը,

բ) ներառում է ինչպես պետության ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս անհրաժեշտ տեղեկատվահոգեբանական ռազմավարական արշավների (կամպանիաների) և օպերացիաների իրագործման կարողության զարգացումը, ինչը պահանջում է տեղեկատվահոգեբանական ռիսկերի գնահատման, դրանց հակազդեցության և ներգործության գծով մասնագետների պատրաստում ու վերապատրաստում, պաշտպանական համակարգի համապատասխան օղակներում այդ գործընթացի կազմակերպական, կադրային ու տեխնոլոգիական ապահովում⁸,

գ) նախատեսում է պետության ներսում և արտասահմանում ռազմական

* *Ճգնաժամային շտաբը* արտակարգ կամ այլ ճգնաժամային իրավիճակներում օպերատիվ կառավարչական մարմին է, որի գործունեությունը նպատակաուղղված է այդ իրավիճակների հաղթահարմանը և դրանց արդյունավետ կառավարմանը:

⁸ Տես *А. Костюхин, Г. Горбунов, А. Сажин. Информационные операции в планах командования ВС США. «ЗВО»*, 2007, № 5:

բնույթի ռազմավարական և օպերատիվ-ռազմավարական տեղեկատվահոգեբանական, հատկապես՝ ապատեղեկատվական արշավների, օպերացիաների կամ մարտավարական տրամաչափի գործողությունների հուսալի իրականացման կարողությունների ստեղծում ու զարգացում, որոնք ըստ անհրաժեշտության կարող են իրացվել ռազմավարական կամ օպերատիվ մակարդակի ռազմական օպերացիաների շրջանակներում: Այսպիսի կարողությունների ստեղծումը պահանջում է ռազմական բուհերում և ավագ սպայակազմի դասընթացներում համապատասխան տեսական ու գործնական պարապմունքների կազմակերպում: Դրանց ժամանակ պետք է ուսուցանվեն տեղեկատվահոգեբանական ներազդման ռիսկերի գնահատման մեթոդները և դրանց գնահատումների հաշվառմամբ հակառակորդի ու յուրային գորքերի վրա ներգործության ձևերն ու եղանակները:

Բացի այդ, անհրաժեշտություն կա կազմակերպական ու հայեցակարգային ռիսկերի գնահատման և համապատասխան լուծումների նախագծերի նախապատրաստման համար ստեղծել տեղեկատվական ու տեղեկատվահոգեբանական մշտագնման և ազդանշանային (սիգնալային) տեղեկատվահոգեբանական ապահովման օպերատիվ օղակներ⁹:

3.5. Կանխատեսումային ներգործությունը կարող է հիմնված լինել սիներգիկ մեթոդաբանության վրա: Օրինակ՝ կանխատեսման բարդություններից մեկն այն է, որ նոր իրավիճակը կարող է ստեղծվել մի շարք սակավ հավանական իրադարձությունների հետևանքով: Դրան ավելանում է նաև մարդկային գործոնը՝ կապված, օրինակ, արդյունավետ կամ ոչ արդյունավետ որոշումների կայացման հետ: Այսինքն՝ մարդկային գործունեության մեծ համակարգը վիճակագրական չէ և չի ենթարկվում կանխատեսման ու կարգավորման, ուստի հնարավոր չէ նախապես մշակել համապատասխան արձագանքման մեխանիզմներ: Սակայն այդ ոլորտում մարդկային գործունեությունը հիմնականում պայմանավորված է էթնիկական, պետական, հասարակական և այլ բնույթի համակարգերի գոյությամբ, որոնց շրջանակներում լիդերները, ազդեցության խմբերը, մտավոր խմբերը (*thinking groups*), կուսակցությունները, պետական մարմինները և պաշտոնյաները կատարում են հասարակության զարգացման կանոնակարգում, դեկավարում և կառավարում: Դա նշանակում է, որ իրադրության ու դրա շուրջ ծավալվող գործունեության գիտական համակարգային վերլուծությունը հնարավորություն է տալիս կանխատեսելու և ուղղորդելու տվյալ հասարակության զարգացման միտումները:

Այսպիսով՝ ՀՀ պաշտպանական անվտանգության ոլորտում ռազմավարական որոշումների կայացման համակարգը կարիք ունի օպտիմալացման՝ տվյալ բնագավառում գիտատեխնիկական նվաճումների հաշվառմամբ: Դրանում վճռորոշ դեր պետք է խաղա ռիսկերի կառավարման տեսության համակարգային կիրառումը:

⁹ Stu С. А. Комов, С. В. Коротков, И. Н. Дылевский. Об эволюции современной американской доктрины «информационных операций». «Военная мысль», 2008, № 6:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Ա. Մ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ, ավագ լեյտենանտ, ՀՀ ՊՆ ԱՌ-ՀԻ-ի
ռե.ֆերենտ-ասպիրանտուրայի քարտուղար



Բնապահպանական անվտանգությունը¹ դարձել է աշխարհի շատ պետությունների առաջնային մտահոգություններից մեկը: Այն պետք է համալիր ձևով դիտարկվի տարբեր գիտաճյուղերի տեսանկյուններից՝ կենսաբանական, ֆիզիկական, քիմիական, հիդրոլոգիական, սեյսմոլոգիական, սոցիոլոգիական, մշակութաբանական, քաղաքակրթական և այլն: Մասնավորապես՝ բնապահպանական անվտանգության հարցերի ուսումնասիրությունը քաղաքագիտության տեսանկյունից հնարավորություն է տալիս ընդլայնելու մեթոդաբանական ապարատը, ի հայտ բերելու նոր հնարավոր հետևանքներ, մշակելու պրոբլեմների լուծման ու կանխարգելման նոր մեխանիզմներ: Օրինակ՝ կենսական նշանակություն ունեցող գետի աղտոտումը կարող է ունենալ կենսաբանական, տնտեսական, աշխարհագրական, բնակլիմայական, քիմիական և մի շարք այլ հետևանքներ: Սակայն եթե հարցը դիտարկենք նաև քաղաքագիտական տեսանկյունից, ապա գետի աղտոտումը կարող է հանգեցնել հետևյալ քաղաքական հետևանքների. ա) վնասել միջազգային ասպարեզում տվյալ երկրի վարկանիշին, բ) առաջացնել երկրում ապրող բնակչության դժգոհությունը, գ) առաջացնել հարևան երկրի դժգոհությունը, ինչպես նաև դառնալ տարածաշրջանի երկրների դժգոհության առարկա, դ) դառնալ երկրի ներսում գործող քաղաքական ընդդիմադիր կուսակցությունների և ուժերի արդարացի քննադատության առարկա, ե) ստիպել երկրում գործող միջազգային, այդ թվում՝ բնապահպանական, կազմակերպությունների ներկայացուցիչներին

¹ Բնապահպանական անվտանգությունն ազգային անվտանգության այն բաղադրիչն է, որը բնութագրում է տարաբնույթ վտանգավոր երևույթների և աղետների ազդեցությունից շրջակա միջավայրի, անձի և հասարակության պաշտպանվածության վիճակը: Բնապահպանական անվտանգության հիմնական նպատակն է՝ երկրի կայուն զարգացման ապահովման համար շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործությունների հետ կապված վտանգների գնահատումը, կանխատեսումը, կանխարգելումը կամ դրանց նվազեցումը (տես «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության ապահովմանն ուղղված ՀՀ բնապահպանության նախարարության գործունեության հիմնական ուղղությունները և 2008–2012 թվականների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2010 թ. ապրիլի 8-ի հմ. 387-Ն որոշումը, Հավելված 1, Ընդհանուր դրույթներ («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2010 թ., հմ. 17 (751)):

վերանայել երկրի իշխանությունների նկատմամբ իրենց վերաբերմունքը:

Նման իրավիճակների ուսումնասիրությունը ի հայտ է բերում բնապահպանական խնդիրներից շատերի խորքային քաղաքական առումները և դրանց լուծման համար անհրաժեշտ քաղաքագիտական մոտեցումների մշակման մեթոդաբանությունը: Քանի որ քաղաքագիտությունը միջգիտաճյուղային գիտություն է, այսինքն՝ ներառում է ցանկացած հարցի ինչպես քաղաքական, այնպես էլ պատմական, տնտեսական, մշակութային և այլ առումներ, ապա բնապահպանական անվտանգության որոշ հարցերի քաղաքագիտական հետազոտումը, դրանց քաղաքական նշանակության վերհանումը երևան են բերում հարցերի քննարկման նոր ուղիներ: Օրինակ՝ Սևանա լճի մաքրության, ջրի մակարդակի բարձրացման, Սևանի ազգային պարկի կենսաբազմազանության պահպանման խնդիրներն իրենց բնույթով բնապահպանական են, սակայն քաղցրահամ լիճը որպես խմելու ջրի ազգային պաշար և էներգիայի աղբյուր դիտելու, լճի մակարդակի տնտեսական նշանակության, անօրինական ջրօգտագործման, ձկնագողության, լճի ափերի տնօրինման, մասնավոր հատվածին ափերի հատկացման, զբոսաշրջության զարգացման և բազմաթիվ այլ հարցեր ունեն ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական նշանակություն և պետության կողմից պահանջում են ռազմավարական որոշումներ ու դրանց կատարման վերահսկում: Կամ՝ միջավայրի մաքրության պահպանման հարցը իր բնույթով բնապահպանական է, սակայն անմիջականորեն պայմանավորված է տվյալ ժողովրդի սոցիալ-հոգեբանական, պատմամշակութային, ազգային-ավանդական առանձնահատկություններով: Հետևապես՝ հասարակության մեջ շրջակա միջավայրը մաքուր պահելու հասարակական նորմի մշակումն ու պահպանումը արդեն ոչ թե զուտ բնապահպանական, այլ քաղաքական և մշակութային խնդիր է:

Բնապահպանական անվտանգության բազմաթիվ խնդիրներ վաղուց դադարել են զուտ բնապահպանական լինելուց, շոշափում են քաղաքական ու տնտեսական հարցեր և հաճախ դառնում են քաղաքագիտության ուսումնասիրության առարկա: Բնապահպանական հարցերի քաղաքականացումը կամ քաղաքական նշանակությունը ենթադրում է դրանց լուծման քաղաքական ուղիներ և մոտեցումներ՝ քաղաքագիտության մեթոդաբանության կիրառմամբ:

Մի շարք հարցեր առաջ են բերում բնապահպանական և տնտեսական շահերի բախում: Օրինակ՝ տնտեսական առումով ձեռնտու է նվազեցնել արտադրանքի ինքնարժեքը, մինչդեռ բնապահպանական նորմի պահպանման համար պահանջվում են զգալի լրացուցիչ ծախսեր* : Նման դեպքերում հասարակության և, առաջին հերթին, պետության կողմից պահանջվում է քաղաքական կամք՝ այժմեական տնտեսական շահերը հանուն հեռանկարային բնապահպանական շահերի զոհաբերելու համար: Անհրաժեշտ են նաև ծրագրեր, համապատասխան մասնագիտական կառույցներ, ենթակառույցներ: Բնապահպանական անվտան-

* Հայտնի է, որ ԱՄՆ-ում ատոմակայանների արտադրած էլեկտրաէներգիայի ինքնարժեքի 70 %-ը կազմում են թափոնների պահածոյացման վրա կատարվող ծախսերը:

գության ապահովման քաղաքական կամքը դրսևորվում է պետության թե՛ արտաքին, թե՛ ներքին քաղաքականության մեջ:

Արտաքին քաղաքականություն: Տարածաշրջանին սպառնացող ընդհանուր բնապահպանական խնդիրը տարածաշրջանի բոլոր դերակատարներից պահանջում է համապատասխան քաղաքական կամքի դրսևորում՝ բանակցությունների սեղանի շուրջ ընդհանուր լուծում գտնելու համար, անհրաժեշտության դեպքում վերանայելու իրենց ներպետական օրենսդրական դաշտը, ինչը ենթադրում է քաղաքական որոշում: Բազմաթիվ բնապահպանական խնդիրներ այսօր ունեն տարածաշրջանային ընդգրկում: Օրինակ՝ Դանուբ գետի աղտոտումը օրախնդիր հարց է մեծ թվով եվրոպական երկրների համար: Դանուբի մաքրության ապահովումը ենթադրում է տարածաշրջանի բոլոր երկրների կողմից քաղաքական կամք՝ վերահսկելու գետում արտանետումների քանակը: Գետերի ու այլ բնական ջրային պաշարների մաքրության խնդիրը օրակարգային է նաև մեր տարածաշրջանում: Բնապահպանական անվտանգության այդօրինակ հարցերը կարող են ստիպել տարածաշրջանի նույնիսկ հակամարտող կողմերին գալ ընդհանուր հայտարարի և փորձել համերաշխ կերպով գտնել ամբողջ տարածաշրջանին սպառնացող հարցի լուծում, ինչը ենթադրում է կողմերից յուրաքանչյուրի որոշակի քաղաքական կամքի դրսևորում: Երկու հակամարտող երկրների ջանքերը միավորող բնապահպանական խնդիրներ կարող են լինել երկրաշարժները, թունավոր անձրևները, ջրի աղտոտումը, արտանետումների վերահսկումը, գանազան վարակների տարածումը և այլն:

Հայտնի է, որ պետությունների միջև լարվածության կամ հակամարտության դեպքում տուժում են ոչ միայն տնտեսական, քաղաքական, այլև բնապահպանական շահերը: Այսպես. երկու երկրների միջև ռազմական ընդհարումները կամ պատերազմները հաճախ ուղղակի կործանարար ազդեցություն են ունենում տեղի բնության վրա՝ վերացնելով կամ անդառնալիորեն փոփոխելով ամբողջական կամ մասնակի բնահամակարգեր²: Ավելին. հակառակորդին բնապահպանական–տնտեսական վնաս հասցնելու միտումը առկա է ներկայիս պատերազմական ռազմավարության մեջ: Այսօր պատերազմներով պատճառվող բնապահպանական վնասները դարձել են լուրջ ուսումնասիրության առարկա: Երբեմն հակառակորդը նույնիսկ որպես առաջնային թիրախ է դիտում մյուս կողմի բնահամակարգերը: Բացի հակառակորդի կենդանի ուժի, տեխնիկայի, հենակետերի, քաղաքացիական բնակչության կուտակումների ու քաղաքների ոչնչացումից, բնահամակարգերի ոչնչացումն այսօր դիտվում է որպես հակառակորդի թուլացման հատուկ և արդյունավետ միջոց: Այդ նպատակով իրականացվող ջրերի միտումնավոր աղտոտումը, բնական զանգվածների (արտեր, անտառներ և այլն) միտումնավոր այրումը հանգեցնում են այնպիսի լուրջ խնդիրների, որ

² Steu «Проблемы экологии. Экологическая проблема войны. Российская Академия Экологии» (http://www.raeco.ru/index.php?option=com_content&view=article&id=54:2009-09-10-11-29-34&catid=35:2009-09-10-08-29-55&Itemid=48):

հակառակորդը բուն պատերազմական գործողությունների փոխարեն ստիպված է լինում լուծել իր բնակչությանն սպառնացող այլ լուրջ խնդիրներ ևս: Ժամանակակից պատերազմի ընթացքում հակառակորդի բնաշխարհի վնասումն ունի մեկ նպատակ՝ ավերիչ ազդեցություն գործել կենտրոնի կարևորագույն տարրերի՝ բուսական ու կենդանական աշխարհի, մթնոլորտի, գետերի ու լճերի վրա, որպեսզի դժվարանան հակառակորդի զինված ուժերի գործողությունները, խաթարվի նրա տնտեսության բնականոն գործունեությունը, իսկ երկրի բնակչությունն էլ գրկվի կյանքի ու գործունեության համար բարենպաստ բնական պայմաններից:

Հետևապես՝ երկու երկրների միջև խաղաղ գոյակցությունն ապահովվում է միայն տարածաշրջանում նրանց վարած համերաշխ, կառուցողական քաղաքականությամբ, այդ թվում՝ բնապահպանության բնագավառում:

Ներքին քաղաքականություն: Պետությունում իշխող քաղաքական ուժը կարող է ունենալ բնապահպանական անվտանգության խնդիրների լուծման նկատմամբ պատշաճ վերաբերմունք, կամ՝ հակառակը: Եթե նա ունի պատշաճ վերաբերմունք, ապա որդեգրում է հետևողական քաղաքականություն, եթե՝ ոչ, ապա երկրում բնապահպանական խնդիրներն ստիպված բարձրացնում են բնապահպանական ոչ պետական կառույցները, միջազգային կազմակերպությունների տեղի ներկայացուցչությունները, առանձին անհատներ, որոնք երբեմն ի գործ են ստիպելու իշխող քաղաքական ուժին վերանայել իր քաղաքականությունը և գնալ որոշակի զիջումների: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ, ինչպես նշվեց, հաճախ երկրի ներսում բախվում են բնապահպանական ու տնտեսական շահերը, քանի որ երկիրը տնտեսական որևէ ծրագիր իրականացնելու համար կարող է վտանգել բնությունը: Բավարար քաղաքական կամքը դրսևորվում է այն դեպքում, երբ պետությունը կարողանում է կա՛ն հավասարակշռել տնտեսական ու բնապահպանական շահերը, կա՛ն տնտեսական շահը չապահովել բնապահպանականի հաշվին: Եթե պետությունը, այնուամենայնիվ, տնտեսական շահը զերակա է համարում, ապա ասպարեզ են գալիս բնապահպանական ոչ պետական կառույցները, որոնք փորձում են ուշադրություն հրավիրել անհանգստացնող հարցերին³:

Բնապահպանական անվտանգության խնդիրների լուծման համար ռազմա-

³ Օրինակ՝ Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղը կարևոր դեր ունեցավ Հայաստանի արգելոցներից մեկում անտառահատումների դեմ մղվող պայքարում: Բնապահպանական կազմակերպություններից կազմված կոալիցիան 2005 թ. իրականացրեց «SOS! Շիկահող» քարոզարշավը, որին գործուև և ակտիվ մասնակցություն ունեցավ ԲՀՀ հայաստանյան մասնաճյուղը: Քարոզարշավը պսակվեց հաջողությամբ և կանխեց ՀՀ Կառավարության կողմից մշակված «Շիկահողի» արգելոցի տարածքով մայրուղու կառուցման ծրագրի իրականացումը՝ առաջարկելով մայրուղու կառուցման այլընտրանքային տարբերակ: Քաղաքացիական հասարակության և հասարակական գործիչների հետ մեծան արդյունավետ համագործակցությունը կանխեց մոտ 30 հա կաղնու անտառների հատումը (մոտ 14 000 ծառ), ինչպես նաև էնդեմիկ բույսերի և կենդանիների (բեզոարյան այծ, հայկական մուֆլոն, կովկասյան ընձառյուծ և այլն) կորուստը (տես «SOS! Shikahogh» (http://wwf.panda.org/howe_are/wwf_offices/armenia/):

վարական տրամաշափի քաղաքական որոշումների կայացումը և համապատասխան սոցիալ-քաղաքական միջավայրի ստեղծումը հաճախ դառնում են քաղաքագիտական խնդիր, որի հետազոտման, կարևորման և լուծման համար պահանջվում է համապատասխան քաղաքական մշակույթի ձևավորում: Ավելին. քաղաքական այդօրինակ միջավայրի ձևավորումը չի կարող սահմանափակվել միայն կոնկրետ պետության սահմաններով, քանի որ բնապահպանական անվտանգության բազմաթիվ խնդիրներ վերաճել են համամարդկային՝ Երկիր մոլորակի բնության անվտանգության ապահովման խնդիրների: Յուրաքանչյուր երկիր ունի բնապահպանական անվտանգության ապահովման իր քաղաքականությունը, սակայն ընդհանուր բնապահպանական խնդիրը հնարավոր է լինում լուծել միայն այդպիսի առանձին քաղաքականությունների համադրմամբ: Օրինակ՝ մեր տարածաշրջանում երկրաշարժների կանխատեսման ու դրանց հետևանքների հնարավորինս կանխման նպատակով Հայաստանի ու հարևան երկրների ընդհանուր քաղաքականության մշակումը և այդ ոլորտում ծավալված սերտ միջպետական համագործակցությունը հնարավորություն կտան էապես բարձրացնելու կանխատեսումների արժանահավատության մակարդակը և նվազեցնելու դրանց հնարավոր ավերիչ հետևանքները:

Յուրաքանչյուր պետություն պետք է հստակ գիտակցի, որ իր տարածքում վտանգելով բնությունը՝ անմիջական վտանգ է ստեղծում նաև հարևան երկրների համար: Օրինակ՝ Պարսից ծոցում առաջին զինված բախման ժամանակ Քուվեյթից նահանջող իրաքյան զորքերը այրեցին նավթի հանքահորերի մեծ մասը: 1991 թվականի մարտին Քուվեյթում այրվում էր 650 գործող նավթահոր: Մասնագետների գնահատմամբ՝ դրա հետևանքով 4–8 մլն բարել նավթ թափվեց ծովը, ավելի մեծ քանակությամբ ներթափանցեց հողի շերտ, ինչը հանգեցրեց գրունտային ջրերի թունավորմանը: Այրվող նավթահորերի ծովսը մոտ 10 ամիս ծածկում էր արևը, ինչի հետևանքով օդի միջին ջերմաստիճանը տեղանքում նվազեց Յելսիուսի սանդղակով 10 աստիճանով: Քուվեյթում բնակչության մահացության ցուցանիշը ազատագրման առաջին տարում աճեց գրեթե 10 տոկոսով: Այս ամենից տուժեցին նաև հարևան երկրները⁴:

Բնապահպանական անվտանգության մի շարք խնդիրների ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում բնապահպանությունը դիտարկելու ոչ միայն մարդ–բնություն, այլև մարդ–հասարակություն հարաբերակցության համատեքստում: Մասնավորապես՝ որոշ հետազոտողների կարծիքով մարդ–հասարակություն առնչությունը կարող է դիտվել որպես ընդլայնված իմաստով էկոլոգիայի* խնդիր: Անգամ ձևավորվել է համապատասխան գիտաճյուղ՝ սոցիալա-

⁴ Տես «Удар по экологии после 1991» (<http://www.bbc.co.uk/russian/specials/saddam/environment.shtml>):

* *Էկոլոգիա* (հուն․ *oikos* – տուն, հայրենիք, *logos* – գիտություն)՝ գիտություն, որն ուսումնասիրում է մարդու, կենդանիների, բույսերի, միկրոօրգանիզմների փոխհարաբերությունները միմյանց և շրջակա միջավայրի հետ (տես *Л. П. Крысин. Толковый словарь иноязычных слов. 2-ое издание, М., 2000, с. 815*): Վերջինս կարող է ընկալվել նաև որպես մարդկային միջավայր՝ հանրույթ:

կան էկոլոգիա, որն ուսումնասիրում է մարդկային հասարակության ու կենսոլորտի փոխադարձ կապը, դրանց գոյակցության օրենքները: Սոցիալական էկոլոգիան փորձում է ցույց տալ, թե ինչպես բնությունը դանդաղ, փուլայնորեն կերպափոխվեց հասարակության, սակայն չի անտեսում, մի կողմից, դրանց միջև եղած տարբերությունը, մյուս կողմից՝ փոխներթափանցման աստիճանը⁵:

Հատկանշական է նաև, որ այսօր աշխարհում «բնապահպանական (էկոլոգիական) անվտանգություն» հասկացությունը վերաբերում է անվտանգության մի շարք բնագավառների: Օրինակ՝ կա քաղաքային բնակչության բնապահպանական անվտանգություն, արտադրության տեխնոլոգիաների բնապահպանական անվտանգություն, արդյունաբերական, գյուղատնտեսական, տնային տնտեսության, սպասարկման ոլորտներին, միջազգային հարաբերությունների բնագավառին վերաբերող բնապահպանական անվտանգություն և այլն: Այսպիսով՝ բնապահպանական անվտանգության հասկացությունը ընդլայնվել է, և տարեցտարի աճում են դրա կարևորությունն ու արդիականությունը՝ կապված մարդու գործունեության հետ⁶:

Մարդու գործունեության հետևանքով տեղի են ունենում բնական գոտիների անդառնալի կերպափոխումներ: Մոլորակի կլիմայի փոփոխությունները⁷, այդ թվում՝ հանրնդհանուր ջերմացումը, օզոնային շերտի նոսրացումը և այլ իրողություններ, փաստում են, որ մարդկությունն այսօր կանգնած է բնության հետ փոխհարաբերությունների մեծ խնդիրների առջև⁸ և դրանց պետք է վերաբերվի որպես կենսաբազմազանության, բնական հավասարակշռության դեմ ուղղված մարտահրավերների⁹: Այդ սպառնալիքները պայմանավորված են մի շարք խնդիրներով, այդ թվում՝ քաղաքական, սոցիալ-տնտեսական, հաստատութենական և այլն¹⁰: Սպառնալիքների շարքում են հանքահորերի անխնա շահագործումը, Հայերեն «բնապահպանություն» տերմինը նման ընդլայնում չի կարող ստանալ, ուստի մենք սույն հոդվածում այս հարցը չենք ուսումնասիրի:

⁵ Տես, օրինակ, *B. A. Сумаров, В. В. Пустовойтов. Социальная экология. М., 2000; М. Bookchin. The Ecology of Freedom. Stirling, 2005:*

⁶ Տես «Экологическая безопасность. Понятие об экологической безопасности» (<http://ecobez.narod.ru/ecosafety.html>):

⁷ Տես «Կլիմայի փոփոխության գլոբալ լուծման որոնումներ: 60 բնագավառ, ուր գործում է ՄԱԿ-ը»: Ե., 2008, էջ 8–10: Հայաստանի կլիմայական փոփոխությունների մասին տես, օրինակ, «Climate Change Information Center of Armenia» (<http://www.nature-ic.am/ccarmenia/en/>):

⁸ Տես «United Nations Framework Convention on Climate Change» (<http://unfccc.int/2860.php>); «Copenhagen climate change conference 2009» (<http://www.guardian.co.uk/environment/copenhagen/>); «Copenhagen Climate Council» (<http://www.copenhagenclimate-council.com/>):

⁹ Տես «Environment. Nature and Biodiversity. European Commission» (http://ec.europa.eu/environment/nature/index_en.htm); *A. Shah. «Biodiversity»* (<http://www.globalissues.org/issue/169/biodiversity>):

¹⁰ 2010 թ. մարտի 21-ին Իսլանդիայում ժայթքեց Էյաֆիատլայոկուդլ հրաբուխը: Ժայթքումից գոյացած մոխրի ամպի պատճառով Եվրոպայի տարածքում կաթվածահար եղավ օդային հաղորդակցությունը, զանգվածաբար հետաձգվեցին կամ չեղյալ հայտարարվեցին բոլոր ճեղքները: Ապրիլի 16-ին դեպի Եվրոպական երկրներ բոլոր չվերթների դադարեցման մասին հայտարարեցին մի շարք ավիա-

ապօրինի անտառահատումները, որսագողությունը, վայրի կենդանիների ապօրինի վաճառքը, որոշ վայրերում անթույլատրելի ծավալների ձկնորսությունը, գերարածեցումը, գետերի ու խոնավ տարածքների աղտոտումը և այլն: Այդ ամենի հետևանքով տեղի են ունենում շրջակա միջավայրի դեգրադացիա, տեսակների պոպուլյացիաների նվազում և բնական գործընթացների խախտում, ինչն էլ հանգեցնում է կենսաբանական բազմազանության կորուստների¹¹: Դրանց հետևանքով քայքայվում է այն բնական «կապիտալը», որի վրա են հիմնված մարդկության զարգացումն ու գոյատևումը:

Կենսամիջավայրի անդառնալի փոփոխության կանխումը, համընդհանուր բնապահպանական ճգնաժամի հաղթահարումն ու կանխումը, ընդհանուր առմամբ մոլորակի և առանձին տարածաշրջանների բնապահպանական անվտանգության ապահովումը¹² ունեն ռազմավարական նշանակություն: Հետևապես՝ տարածաշրջանի պետությունների ռազմավարական շահերից է բխում ապահովել իրենց, տարածաշրջանի և մոլորակի բնապահպանական անվտանգությունը: Դրա իրականացման հիմքում քաղաքական անհրաժեշտ միջավայրի ստեղծման պահանջն է:

Բնապահպանական անվտանգության՝ մաքուր շրջակա միջավայրի, բնական ռեսուրսների պահպանությանը և օպտիմալ օգտագործմանը նպաստակա-

ընկերություններ, իսկ եվրոպական խոշոր օդանավակայաններն ուղղակի փակվեցին: Ավիաչվերթների խաթարումը ազդեց մոտ 6 մլն ուղևորի վրա: Իսլանդացի գիտնականները հրաբխի ակտիվության նվազման նշաններ նկատեցին միայն ապրիլի 19-ին: Հրաբխի ժայթքման տնտեսական հետևանքներն ավելի մեծ էին, քան այն վնասը, որ համաշխարհային ավիացիան կրեց 2001 թվականի սեպտեմբերին ԱՄՆ-ում կատարված ահաբեկչություններից հետո: Ավիափոխադրումների ճգնաժամի հետևանքով Եվրոպայի տնտեսության կորուստները մոտենում են 4 մլրդ եվրոյի: Մի շարք մասնագետներ ժայթքումը պայմանավորում են մոլորակի համընդհանուր ջերմացմամբ (տես «Ավիափոխադրումների ճգնաժամի հետևանքով Եվրոպայի էկոնոմիկայի կորուստները մոտենում են 4 մլրդ եվրոյի» (<http://www.armenpress.am/news/more/id/600912/lang/am/>):

2010 թ. ապրիլի 20-ին Մեքսիկական ծովածոցում ամերիկյան Լուիզիանա նահանգի փեզրի ստորջրյա հորանցքում գրանցված վթարի պատճառով սկսեց նավթի մեծ արտահոսք: ԱՄՆ-ին սպառնացող բնապահպանական խոշորամասշտաբ աղետի համար ԱՄՆ-ի Նախագահ Բ. Օբաման մեղադրեց «Բրիտիշ Պեթրոլիում» ընկերությանը: Նավթի հոսքը շարժվեց հյուսիսային ուղղությամբ՝ դեպի Ֆլորիդա, որին սպառնաց այնպիսի բնապահպանական աղետ, ինչպիսին երբևէ չի եղել այդ նահանգի պատմության մեջ: Արտակարգ իրավիճակ հայտարարվեց Ֆլորիդա և Լուիզիանա նահանգներում: Մեծ վնաս հասցվեց ոչ միայն շրջակա միջավայրին, այլև խոշոր ծովային ֆերմաներին, որոնցում արհեստական եղանակով ձկներ, խեցգետիններ են աճեցնում (տես «Ազգային մասշտաբի արտակարգ իրադարձություն. Օբաման մեղադրել է «Բրիտիշ Պեթրոլիում»-ին» (<http://www.panorama.am/am/world/2010/05/01/british-petroleum/>):

¹¹ Տես Կ. Դանիելյան, Ա Նազարեթյան, «Հասարակություն – բնություն» փոխհարաբերություններ. Հայաստանի բնապահպանությունը ազգային անվտանգության ռազմավարության համատեքստում: «ՀԲ», 2008, հմ. 2–3:

¹² Տես «Глобальная экологическая безопасность» (<http://www.countries.ru/library/nature/glob.htm>), *Искл. В. Чалабов, А. Мартиросян*. О вопросах стратегии выхода из глобального экологического кризиса. «Вестник МАНЭБ». СПб., 2007, т. 12, № 4, вып. 2, сс. 19—22:

ուղղված մոտեցումը ամրագրված է աշխարհի գրեթե բոլոր պետությունների ռազմավարական տրամաչափի փաստաթղթերում: Մեր երկրում ևս բնապահպանության և բնապահպանական անվտանգության նկատմամբ կան որոշակի մոտեցումներ, ձեռքբերումներ և նաև՝ բազմաթիվ անելիքներ:

Բնապահպանական անվտանգությունը ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության (ՀՀ ԱԱՌ) նախագծի համար մշակված բառարանում սահմանվում է որպես. «Ազգային անվտանգության բաղադրիչ, որը բնութագրում է հասարակության և անձի բնակության ու կենսագործունեության միջավայրի պաշտպանվածության վիճակը: Ներառում է վերահսկողությունը շրջակա միջավայրի (բնական ռեսուրսների, ջրի, մթնոլորտի, հողի, կենդանական ու բուսական աշխարհի) վիճակի նկատմամբ և այնպիսի միջոցների մշակումը, որոնցով բացառվեն մարդու և հասարակության բնականոն կենսագործունեությանն սպառնացող բնապահպանական ճգնաժամներն ու աղետները»¹³:

ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության մեջ ազգային անվտանգության ապահովման գործոնների ու գործողությունների շարքում նշված են բնական պաշարների պահպանումը և արդյունավետ օգտագործումը, բնապահպանական իրավիճակի համակարգված բարելավումը¹⁴: Ազգային անվտանգության դեմ ուղղված ներքին սպառնալիքների շարքում ՀՀ ԱԱՌ-ի մեջ նշված են բնապահպանական խնդիրներն ու բնական պաշարների անարդյունավետ կառավարումը, ուստի կարևորվում է լեռնահանքային արդյունաբերության, բնական, հատկապես՝ անտառային և ջրային պաշարների օգտագործման արդյունավետության մեծացումը¹⁵:

Հայաստանի բնության պահպանության նպատակով ընդունվել են բազմաթիվ օրենքներ ու որոշումներ¹⁶, ուշադրության կենտրոնում են արգելոցներն ու ազգային պարկերը, Սևանի ավազանի պահպանության հարցը և այլն:

Մեր կարծիքով՝ անհրաժեշտ է կարևորել բնապահպանական անվտանգության ապահովման հետևյալ մոտեցումները.

ա) Հայաստանի բնահամակարգերի բազմազանության հարստությանը նպաստում են նրա աշխարհագրական դիրքը, երկրաբանական կառուցվածքը, բարձունքային գոտիականությունը և այլն¹⁷: Թեև Հայաստանը հարուստ չէ

¹³ «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության նախագիծ: Հիմնական տերմիններ և հասկացություններ»: «ՀԲ», 2006, հմ. 2, էջ 50:

¹⁴ Տես ՀՀ ՊՆ պաշտոնական կայք (<http://www.mil.am/arm/index.php?page=49>), կամ՝ «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 15:

¹⁵ Տես «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 22:

¹⁶ Տես «Գործող ակտեր»: ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայք (<http://www.mnp.am/>):

¹⁷ Տես «ԲՀՀ (Բնության համաշխարհային հիմնադրամ): Հայաստանը և Կովկասը»: Ե., 2007, նաև՝ V. Ayvazyan. Promoting Transboundary Cooperation for CBD Implementation in Armenia. Ministerial Conference: Nature Protection in the Caucasus. Promoting Trans-

բնական պաշարներով¹⁸, սակայն եղածի նկատմամբ էլ նկատվում է հոգածության պակաս, ինչը պայմանավորված է սոցիալական, տնտեսական և մի շարք այլ գործոններով: Բնության նկատմամբ անխնա վերաբերմունքը շատ հաճախ կրում է միտումնավոր բնույթ՝ երբեմն անձնական շահույթի նպատակով: Այս երևույթների կանխման և խնդիրների լուծման համար անհրաժեշտ են համակարգված ու նպատակաուղղված մոտեցումներ, որոնք նշվել են ՀՀ բնապահպանական անվտանգության ռազմավարության մեջ¹⁹, և որոնց իրականացման համար ՀՀ Կառավարության կողմից անհրաժեշտ է հետևողական քայլերի ձեռնարկում: Այս առումով, կարծում ենք, որ պետք է վերանայել ու կատարելագործել բնապահպանական օրենսդրությունը:

բ) ՀՀ ազգային անվտանգության համակարգի օրգանական միասնության պահպանման և կայուն զարգացման համար անհրաժեշտ է արժեքավորել ու գնահատել դրա յուրաքանչյուր բաղադրիչ, այն դիտարկել միջգերատեսչական ձևաչափով, ինչպես դա արվեց ՀՀ ԱԱՌ-ի մշակման ժամանակ²⁰: Այս համատեքստում բնապահպանական անվտանգության բաղադրիչը պետք է դիտել որպես անվտանգային միջավայրի լիարժեք կայացման, անվտանգության ճարտարապետության ճիշտ կառուցման ու օպտիմալ կառավարման մշակույթի ձևավորման ու զարգացման կարևոր գործոն: Մեր կարծիքով՝ պետք է արմատավորել հստակ դիրքորոշում բնապահպանական անվտանգության նկատմամբ, այն բանի գիտակցում, որ պահպանելով բնությունը՝ մարդը պահպանում է ինքն իրեն, և հակառակը, վտանգելով բնությունը՝ նա սպառնալիք է ստեղծում իր երկրի անվտանգության համար: Բնության վերաբերյալ բավարար գիտելիքներ հաղորդելու պարագայում աճող սերնդի և ընդհանրապես հասարակության շրջանում մեծանում է բնությունը ավելի մոտիկից ճանաչելու ձգտումը, ինչն էլ ձևավորում է հոգատար վերաբերմունք բնության նկատմամբ և պատասխանատվության զգացում՝ այն պահպանելու և սերունդներին փոխանցելու հարցում: Կարևոր է նաև հայրենական հեռուստաէթերում բնության մասին նոր հաղորդումների ստեղծման նկատմամբ պատշաճ վերաբերմունքի ձևավորումը, ուստի հու-

boundary Cooperation for CBD Implementation. Berlin, 9–11 March 2006 (<http://www.caucasus-conference.org/en/documents/ayvazyan.pdf>):

¹⁸ Տես «Обзор положения в области окружающей среды и безопасности» Армения. Окружающая среда и безопасность. Трансформация рисков в сотрудничестве. На примере Южного Кавказа. Доклад по поручению ПРООН (Программа развития ООН), ОБСЕ (Организация по безопасности и сотрудничеству в Европе) и Регионального представительства ЮНЕП (Программа ООН по окружающей среде), 2004, сс. 28–32:

¹⁹ Տես *Ս. Պապյան*, ՀՀ բնապահպանական անվտանգության ռազմավարությունը: «ՀԲ», 2007, հմ. 2–3:

²⁰ Տես Հ. *Էնթանջյան*, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության միջգերատեսչական մշակման մեթոդաբանության մասին: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 1, *Առյուծի*՝ Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում: Ե., 2008, էջ 34–35:

սաղորդ է, որ ՀՀ գերատեսչական-ճյուղային բարեփոխումների համալիրը պետք է նպատակաուղղված լինի նաև բնակչության բնապահպանական իրազեկության ու կրթվածության ապահովմանը²¹: Ուստի անհրաժեշտ ենք համարում չսահմանափակվել բնապահպանությանը նվիրված պարբերական միջոցառումներով, այլ աճող սերնդին լայնորեն ընդգրկել բնության պահպանությանն ուղղված լայնամասշտաբ միջոցառումներում՝ դրանք դարձնելով առավել հաճախակի և զանգվածային:

զ) Կարծում ենք, որ անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով պետական աջակցություն ցուցաբերել բնապահպանական պետական և ոչ պետական կառույցներին (հատկապես՝ ՀԿ-ներին, հիմնադրամներին, բնապահպանական ինտերնետ կայքերին, հանդեսներին), ինչպես նաև առանձին անհատների²², սահմանել ՀՀ Նախագահի կողմից շնորհվող պետական հատուկ մեդալ²³ կամ մրցանակ՝ բնության պահպանությամբ զբաղվող կառույցների և առանձին անհատների ավանդը հասարակությանն ի ցույց դնելու և այս ուղղությամբ գործունեությունը խրախուսելու նպատակով²⁴:

դ) Բնապահպանական անվտանգությունը ոչ միայն ազգային անվտանգության բաղադրատարր է, այլև համամարդկային անվտանգության հիմնախնդիր, քանի որ այն չի ճանաչում ազգային սահմաններ: Այս խնդրով զբաղվում են աշխարհի շատ առաջատար բնապահպանական կառույցներ²⁵: Արտասահմանում այս գաղափարն այնքան է արմատավորված, որ նույնիսկ իրենց առաքե-

²¹ Տես «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 26:

²² Այս պրակտիկան հաջողությամբ գործում է արտասահմանում, որտեղ բնապահպանական խնդիր արծարծող կամ այդ խնդրի լուծմանը նպաստող նույնիսկ մասնավոր ձեռնարկումը (հովանավորություն՝ բնապահպանական ծրագրի իրականացման նպատակով, գիտական կամ հրապարակախոսական հոդվածի, գիտական կամ գեղարվեստական գրքի տպագրում, գիտաճանաչողական հետազոտությունների անցում և այլն) հաճախ արժանանում է մեծ ուշադրության (տես, օրինակ, «Центр охраны дикой природы» (<http://www.biodiversity.ru/publications/odp/archive/36-37/st18.html>)):

²³ ՀՀ-ում նման մեդալ տրվում է միայն գերատեսչական մակարդակով: Օրինակ՝ ՀՀ բնապահպանության բնագավառում մեծ ներդրում ունենալու համար «Վիվա Սել-ՄՏՍ» ընկերության գլխավոր տնօրեն Ռ. Յիրիկյանին 2010 թ. մայիսի 7-ին ՀՀ բնապահպանության նախարարի հրամանով շնորհվեց բնապահպանության նախարարության «Բնապահպանության բնագավառում նշանակալի ավանդի համար» գերատեսչական ոսկե մեդալ (տես «Բնապահպանական մեդալ՝ Յիրիկյանին» (<http://www.armtown.com/news/am/arv/20100508/78517>)):

²⁴ Տես, օրինակ, «В 2006 г. ведущий программы «В мире животных» Николай Николаевич Дроздов указом Президента России был награжден «Орденом Почета». «Николай Николаевич Дроздов. В гармонии с собой и Матушкой-Природой» (<http://www.wwf.ru/resources/interviews/drozdov-harmony/>), կամ՝ «Alfred Toepfer Medal. EUROPARC Federation» (<http://www.europarc.org/what-we-do/alfred-toepfer-medal>):

²⁵ Տես, օրինակ, «World Wildlife Fund» (<http://www.worldwildlife.org/uho/index.html>); «WWF» (<http://www.panda.org/>); «WWF's global network» (<http://www.wwf.org/>); «Всемирный фонд дикой природы» за живую планету!» (<http://www.wwf.ru/>); «Greenpeace» (<http://www.greenpeace.org/international/>); «Foundation for Ecological Security» (<http://www.fes.org.in/>); «Global Environment Fund» (<http://www.globalenvironmentfund.com/>):

լուրջամբ ոչ բնապահպանական կառույցներն են այսօր հաճախ զբաղվում բնապահպանական խնդիրներով: Օրինակ՝ ՆԱՏՕ-ն, լինելով ռազմաքաղաքական դաշինք, իրականացնում է նաև միջավայրի ուսումնասիրման ու պահպանության բազմազան միջոցառումներ ու ծրագրեր²⁶: Այսօրինակ ծրագրերի կազմակերպումն ու իրականացումը ունեն ոչ միայն բնապահպանական, այլև քաղաքական նշանակություն: Անհրաժեշտ ենք համարում պետական հոգածություն և ուշադրություն դրսևորել ոչ միայն բնապահպանական խնդիրներով զբաղվող, այլև ոչ բնապահպանական, սակայն այդ խնդրի լուծմանն օժանդակող տեղական կառույցների նկատմամբ:

ե) Բնապահպանական անվտանգության խնդիրները երբեմն կարող են նաև արհեստականորեն քաղաքականացվել և դառնալ շահարկման առարկա: Օրինակ՝ 2010 թ. փետրվարի 2-ին ՀՀ բնապահպանության նախարարությունը ստիպված էր հայտարարել, որ աղբբեջանական մամուլի տարածած տեղեկույթը, իբր Հայաստանը պղնձի միացություններով ու ֆենոլով աղտոտում է Կուր և Արաքս գետերը, չի համապատասխանում իրականությանը²⁷:

Հայաստանը մեղադրանքների թիրախ է դարձել նաև Թուրքիայի կողմից՝ կապված Մեծամորի ատոմակայանի շահագործման հետ: Չեն բացառվում շահարկումները տարածաշրջանի նաև այլ դերակատարների կողմից: Հետևապես՝ ՀՀ-ին ուղղված մեղադրանքներին հակազդեցության նպատակով անհրաժեշտ է իրավիճակի հստակ գնահատում և համարժեք քաղաքականության մշակում: Այդ քաղաքականությունը պետք է ամրագրվի ՀՀ բնապահպանական անվտանգության ռազմավարության մեջ:

զ) Պետության համար շրջակա միջավայրի պահպանությունը ոչ պակաս կարևոր է, քան տնտեսական ու ռազմական պաշտպանությունը: Կարծում ենք, որ այս հարցը լուծելի է միայն բնապահպանական ոլորտի պետական հատվածում գիտականորեն հիմնավորված ու հեռանկարային քաղաքականություն ունենալու դեպքում:

Եզրակացություն: Բնապահպանական անվտանգության հատկապես քաղաքական ենթատեքստ ունեցող խնդիրները քաղաքագիտական տեսանկյունից դիտարկելու դեպքում մենք հնարավորություն ենք ստանում այդ խնդիրները հետազոտելու առավել լայն սպեկտրով և համալիր մոտեցմամբ մշակելու նոր լուծումներ:

Լինելով իրենց տրամաշափով համամարդկային՝ բնապահպանական

²⁶ Տես «Science for Peace and Security» (http://www.nato.int/cps/en/natolive/topics_58253.htm); «Региональная безопасность окружающей среды» вызовы для Центральной и Восточной Европы». «Окна в НАТО» (<http://nato.w-europe.org/show.php?art=88&rubr=37>); «Объединение ученых во имя мира и прогресса». «Партнерство в действии». Брюссель, 2002, с. 20; «Экологическая безопасность» (http://www.nato.int/cps/ru/SID-1431FDA4-193FF23F/natolive/topics_49216.htm):

²⁷ Տես «Հայաստանը չի աղտոտում Քուր և Արաքս գետերը» (<http://news.am/am/news/13434.html>):

անվտանգության խնդիրները սպառնալիքներ են՝ ուղղված մարդու և բնության հարատև ու ներդաշնակ գոյակցության, հավասարակշռված հարաբերակցության և ընդհանրապես Երկիր մոլորակի անվտանգության դեմ: Այս համատեքստում անհրաժեշտ է թվում շրջակա միջավայրի բնապահպանական անվտանգության և դրա ապահովման կարևորության նկատմամբ պետության կողմից իր յուրաքանչյուր քաղաքացու մեջ գիտակցված վերաբերմունքի, յուրօրինակ մշակույթի ձևավորումը: Անհատի, ապա և հասարակության մակարդակով բնությունը պահպանելու, այն չվնասելու գիտակցման ձևավորումը պետությունից, տվյալ դեպքում՝ ՀՀ-ից պահանջում է բնապահպանական արդյունավետ քաղաքականության իրականացում:

ПОЛИТОЛОГИЯ БЕЗОПАСНОСТИ

О НЕКОТОРЫХ СПОСОБАХ ОПТИМИЗАЦИИ СИСТЕМЫ ПРИНЯТИЯ СТРАТЕГИЧЕСКИХ РЕШЕНИЙ В СФЕРЕ ОБОРОННОЙ БЕЗОПАСНОСТИ РА В КОНТЕКСТЕ УПРАВЛЕНИЯ РИСКАМИ

*Т. Р. МАРТИРОСЯН, капитан, кандидат исторических наук,
старший офицер-специалист военно-научного журнала
«Айкакан банак» ИНСИ МО РА*

РЕЗЮМЕ

Задача оптимизации системы принятия стратегических решений в сфере обороны является краеугольной для безопасности государства. На основе анализа рисков и опыта армянского и ведущих зарубежных государств можно сделать вывод о необходимости создания новой модели принятия стратегических решений в сфере обороны государства с использованием всего оборонного потенциала нации и государства (общенационального, политического, военного, экономического, научного, духовного, организационного, информационного и т. д.). Предлагается модель выработки, принятия и исполнения стратегических решений на основе принципа разделения трех ветвей принятия стратегических решений (разработка, принятие, исполнение), что обеспечивает минимизацию последствий конфликта бюрократических интересов.

РАССМОТРЕНИЕ НЕКОТОРЫХ ВОПРОСОВ
ЭКОЛОГИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ
С ТОЧКИ ЗРЕНИЯ ПОЛИТИЧЕСКОЙ НАУКИ

*А. М. ШАХВЕРДЯН, старший лейтенант, референт–секретарь
аспирантуры ИНСИ МО РА*

РЕЗЮМЕ

Многие проблемы экологической безопасности давно перестали являться чисто экологическими. Они зачастую имеют политический подтекст. Рассмотрение этих проблем в политологическом аспекте позволяет расширить методологический аппарат исследования, выявлять новые возможные последствия, разрабатывать новые механизмы решения уже существующих и профилактики потенциальных проблем.

Для решения задач экологической безопасности политического характера необходимо принятие политических решений стратегического калибра и создание соответствующей социально-политической среды.

Осуществление государством научно-обоснованной экологической политики предполагает создание соответствующих профессиональных структур, усовершенствование экологического законодательства, повышение уровня обеспечения экологической образованности и осведомленности населения, государственную поддержку экологическим государственным и негосударственным структурам и т. д. В этом аспекте в статье выдвигается ряд конкретных предложений, нацеленных на обеспечение эффективной деятельности системы обеспечения экологической безопасности РА.

POLITICAL SCIENCE OF SECURITY

ON SOME METHODS OF OPTIMIZING THE SYSTEM
OF STRATEGIC DECISION MAKING
IN THE SPHERE OF THE RA DEFENSE SECURITY
IN THE CONTEXT OF RISK MANAGEMENT

*T. R. MARTIROSYAN, Captain, PhD in History,
Senior Officer-Specialist of «Haikakan Banak» Defense-Academic Journal,
INSS, MOD, RA*

SUMMARY

The problem of the optimization of the system of strategic decision making in the defense sphere is keystone for the state's security. A conclusion has been drawn from the risk analysis and the experience of the Armenian and leading foreign states. According to it a new model of strategic decision making in the state defense sphere is needed to be set up. The new model will

require the whole defense potential of the nation and the state (national, political, military, economic, academic, spiritual, organization, information, etc.). Thus, a model of strategic decision processing, making and implementing upon the basis of the separation principle of three branches of strategic decision making (elaborating, making, implementing) is proposed. That ensures the minimization of the conflict aftermath of bureaucratic interests.

REVIEWING SOME ISSUES OF ENVIRONMENTAL SECURITY
IN TERMS OF POLITICAL SCIENCE

*A. M. SHAHVERDYAN, Senior Lieutenant, Aide–Secretary
of the Postgraduate School of the INSS, MOD, RA*

SUMMARY


Many problems of environmental security have long ceased to be purely environmental. They often have a political implication. Reviewing these problems in the aspect of political science makes it possible to extend the methodological apparatus of the study, reveal new potential aftereffects, elaborate new mechanisms of addressing the existing problems and preventing the potential ones.

To solve the environmental security problems of political character it is necessary to make political decisions of strategic caliber and to create a corresponding socio-political environment.

The implementation of a science-based environmental policy by the state implies the creation of appropriate professional structures, improvement of the environmental legislation, rise in the level of population's environmental education and awareness, state support for public and non-governmental environmental structures, etc. In this aspect this article puts forth a number of concrete proposals targeted at ensuring the efficient operation of the system for the RA environmental security.

**ՍԱՌԸ ՊԼԱԶՄԱՅԻ ԷՆԵՐԳԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ
ԱԿՈՒՍՏԻԿ ԴԱՇՏԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ**

*Ա. Ս. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների
թեկնածու, ՀՀ ԳԱԱ ՖԿՊԻ-ի պլազմայի ֆիզիկայի լաբորատորիայի վարիչ,
Կ. Վ. ՀԱԿՈՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ՖԿՊԻ-ի ասպիրանտ,
Ա. Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ՖԿՊԻ-ի ասպիրանտ,
Ռ. ՅՈՒ. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ՖԿՊԻ-ի կրպակի գիտաշխատող,
Ս. Ա. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ՖԿՊԻ-ի ասպիրանտ,
Բ. Գ. ՍԱՀԱԿՅԱՆ, ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետի ուսանող*



Պլազմային տեխնոլոգիաները լայնորեն կիրառվում են գիտության և տեխնիկայի զանազան բնագավառներում: Պլազմային ռեակտորները հնարավորություն են տալիս բազմակի մեծացնելու քիմիական ռեակցիաների արագությունը և իրականացնելու նոր քիմիական ռեակցիաներ: Գազապարպումային պլազմայի լուսային աղբյուրները լայն տարածում են ստացել կենցաղում և արդյունաբերության մեջ: Անընդհատ գազապարպումային CO₂ լազերներն ունեն շատ մեծ ՕԳԳ, ամենահզորն են: Արդեն գոյություն ունեն էլեկտրաէներգիայի մագնիսահիդրադինամիկ գեներատորներ և օդագնացության ու տիեզերագնացության համար մագնիսահիդրադինամիկ շարժիչներ:

Մույն հոդվածում քննարկվում են պլազմայի էներգատարության մեծացման և պայթուցիկ պլազմոիդների ստեղծման հնարավորությունները: Պլազմայի էներգատարության և էներգաներդրման կառավարումն ունի կարևոր կիրառական նշանակություն մեծ ինտենսիվությամբ պլազմոիդների, լույսի աղբյուրների, այդ թվում՝ լազերների, և այլ սարքերի ստեղծման համար:

Էներգաներդրումը պլազմայում ներդրված ինտեգրալ էներգիան է, էներգատարությունը՝ էներգիայի խտությունը, որը պլազմայի միավոր ծավալի էներգիան է:

Էներգաներդրման մեծացման համար անհրաժեշտ է մեծացնել կա՛ն պարպման լարումը, կա՛ն պարպման հոսանքը, կա՛ն էլ երկուսը միասին: Պլազման ինքնահամաձայնեցված միջավայր է, հետևաբար նրա պարամետրներից որևէ մեկի փոփոխությունը հանգեցնում է մյուս պարամետրների փոփոխության: Օրինակ՝ եթե մենք կամայական ձևով փոխում ենք պարպման հոսանքը, ապա պարպման լարումը կարգավորվում է պլազմայի կողմից: Որպեսզի փոխվի նաև լարումը, պետք է փոփոխվեն այլ պարամետրներ ևս, այսինքն՝ ստացվի պլազմայի այլ վիճակ:

Պլազմայի վիճակի փոփոխման եղանակներից մեկը ակուստապլազմային միջավայրի ստեղծումն է: Պարպման հոսանքի փոփոխական բաղադրիչը պարպման խողովակում ստեղծում է ակուստիկ ալիքներ: Այդ ակուստիկ ալիքների համար պարպման խողովակը ակուստիկ ռեզոնատոր է: Ռեզոնատորի ռեզոնանսային հաճախականությունների տիրույթում ակուստիկ ալիքների և պլազմայի փոխազդեցության շնորհիվ խողովակում առաջանում է ակուստապլազմային նոր միջավայր, որի պարամետրները կարող են խիստ տարբերվել սկզբնական չգրգռված պլազմայի պարամետրներից [1]:


Ակուստապլազմային բանելակարգում, անգամ էներգաներդրման անփոփոխության պայմաններում [2, 3], կարելի է մեծացնել պարպման ՕԳ-ն, այսինքն՝ մեծացնել պլազմայից դուրս եկող օպտիկական ճառագայթման ինտենսիվությունը: Մեր աշխատանքներից մեկում հաջողվել է ակուստապլազմային բանելակարգում CO₂ լազերի ելքային օպտիկական ճառագայթման հզորությունը մեծացնել 20 %-ով՝ առանց արտաքին սնման հզորության մեծացման, այսինքն՝ ՕԳ-ն աճել է 20 %-ով [4]: Կոմպակտ ֆլուորեսցենտային լամպերի արդյունավետությունը մեծացել է 1,5 անգամ (արդյունավետություն ասելով հասկանում ենք այն լուսային հոսքը, որը բաժին է ընկնում ծախսվող հզորության 1 Վտ-ին): Աշխարհում լավագույնը համարվող «Ֆիլիպս» կոմպակտ ֆլուորեսցենտային լամպն ունի 70 լմ/Վտ արդյունավետություն, ակուստապլազմային բանելակարգով կոմպակտ ֆլուորեսցենտային լամպի համար մենք ստացել ենք 100 լմ/Վտ [3]:

Վերջին փորձերը ցույց են տալիս, որ մեկ մոդ բանելակարգում ՕԳ-ն կարելի է ավելացնել 30 %-ով, իսկ բազմամոդ բանելակարգում՝ 2 և ավելի անգամ՝ շնորհիվ մոդային կառուցվածքի վերաբաշխման:


Ակուստապլազմային բանելակարգում էներգաներդրումը կարելի է ավելացնել ոչ ավելի, քան 2-3 անգամ [1, 4]:

Սույն աշխատությունում ցույց է տրված, որ մոդուլացված հոսանքով սնուցման դեպքում նորմալ մարմրող պարպման տիրույթում ակուստապլազմային վիճակին անցնելու ժամանակ հնարավոր է էապես մեծացնել պլազմայի էներգատարությունը:

Քննարկենք էներգատարության փոփոխությունը պլազմայի անփոփոխ ծավալի դեպքում: Նման պայմաններում էներգաներդրումն ու էներգատարությունն ունեն միատեսակ «վարք»:



Նկ. 1. Արգոնի պլազմայի էներգաներդրման կախումը պարպման հոսանքի հաստատուն բաղադրիչից.
 $P_0 = 350$ Տոր, 1՝ չզրգոված պլազմա, 2՝ ակուստապլազմա



Նկ. 2. Ակուստիկ կոնտրակցիա.
 D՝ պարպման տեսանելի տրամագիծ (մմ),
 $I \sim I_0$ ՝ պարպման հոսանքի մոդուլացման խորություն


վում է (ռելաքսացիա տեղի չի ունեցել): Էներգաներդրման կախվածությունը պարպման հոսանքի հաստատուն բաղադրիչից ներկայացված է նկ. 1-ում 2-րդ կորով: Նկարից երևում է, որ հոսանքի հաստատուն բաղադրիչը մեծացնելու դեպքում ակուստապլազման սկզբում իրեն «պահում» է ինչպես չզրգոված պլազման երբ հոսանքը հասնում է որոշակի արժեքի (տվյալ դեպքում՝ 19 մԱ-ի) ակուստապլազմայում տեղի է ունենում հոսանքի և լարման թռիչքային փոփոխություն, իսկ հոսանքի հետագա աճման համեմատ էներգաներդրումն ավելի արագ է աճում, քան չզրգոված պլազմայի դեպքում: Հոսանքի հետագարձ ընթացքի ժամանակ էներգաներդրման վարքը պահպանվում է, թեև առկա է չզրգոված վիճակի անցման հիատերեզիս:

Այսպիսով՝ ակուստապլազմային վիճակի «քայքայման» և չզրգոված վիճակի անցման ժամանակ անջատվում է էներգաներդրման փոփոխությամբ պայմանավորված էներգիա:

Նորմալ մարմնող պարպման տիրույթում պարպման հոսանքի հաստատուն

Նորմալ մարմնող պարպման տիրույթում առանց ակուստիկ ազդեցության պլազմայի էներգաներդրման կախումը պարպման հոսանքից բերված է նկ. 1-ում (1-ին կոր): Պարպման հոսանքի մոդուլացման հետևանքով պլազմայում առաջանում են ակուստիկ տատանումներ, և պլազման անցնում է զրգոված վիճակի (ակուստապլազմա): Ակուստիկ ազդեցության վերացումից հետո տեղի է ունենում պլազմայի ռելաքսացիա դեպի չզրգոված վիճակ, և էներգաներդրումը նվազում է մինչև սկզբնական արժեքը: Ռելաքսացիայի տևողությունը կարող է լինել 1-ից մինչև մի քանի հազար վայրկյան՝ կախված փորձի պայմաններից [5]: Նկ. 2-ում 2-րդ կորը ներկայացնում է այն դեպքը, երբ ակուստիկ ազդեցությունը վերացված է, բայց ակուստապլազմային վիճակը պահպան-

բաղադրիչի փոքր անփոփոխ արժեքի դեպքում հայտնաբերվել է, որ պարպման հոսանքի փոփոխական բաղադրիչի աճման պարագայում դիտվում է ակուստիկ կոնտրակցիա [6]: Պարպման տեսանելի տրամագիծը սեղմվում է մինչև 1 մմ-ի, այն դեպքում, երբ չգրգռված պլազմայի պարպման տրամագիծը 4 մմ է (նկ. 2): Ընդ որում, դա աղեղային պարպում չէ և ոչ էլ սովորական ջերմային կոնտրակցիա: Պարպման հոսանքը շատ փոքր է, լարումը մնում է մեծ, մինչդեռ աղեղային պարպման դեպքում լարումը նվազում է: Նույնիսկ երկար ժամանակ աշխատելիս էլեկտրոդները չեն քայքայվում, ինչը բնորոշ է աղեղային պարպմանը: Ակուստիկ տատանումների դադարեցման կամ մոդուլացման հաճախականության փոփոխման հետևանքով պարպման տեսանելի տրամագիծը մեծանում է, այսինքն՝ ակուստիկ կոնտրակցիան վերանում է: Կոնտրակցիայի դեպքում ակուստիկ ազդեցությունը կայունացնում է սեղմված պարպման վարքն ու հետագիծը, մինչդեռ աղեղային պարպումը շատ դժվար է կայունացվում: Ակուստիկ կոնտրակցիան ունի շեմային բնույթ, կախված է մոդուլացման խորությունից ու հաճախականությունից և կախված չէ սովորական ջերմային հաճախականությունից [7,8] (նկ. 3):



Նկ. 3. Արգոնի պլազմայի էներգատարության կախումը պարպման հոսանքի մոդուլացման խորությունից և հաճախականությունից, Po=400 Տոր:

Ակուստիկ կոնտրակցիայի դեպքում պլազմայի ծավալը փոքրանում է: Անգամ էներգաներդրման անփոփոխության պարագայում էներգիայի խտությունը՝ էներգատարությունը, աճում է: Արգոնի ակուստապլազմայի էներգատարությունը 400 Տոր* ճնշման և սկզբնական չգրգռված պլազմայի 12,5 Վտ/սմ³ արժեքի դեպքում կարող է աճել ավելի քան 20 անգամ՝ հասնելով ու անգամ գերազանցելով 200 Վտ/սմ³-ը (նկ. 3): Այդ ժամանակահատվածում պլազմայի ջերմաստիճանը, որը չափվել է ԳԲՀ-ռադիոչափիչով, աճել է 2 անգամ [9]: Այսպիսով՝ փոխելով պարպման մոդուլացման խորությունն ու հաճախականությունը, կարելի է փոփոխել պլազմայի էներգատարությունը: Նշենք, որ պլազմայի էներգատարության թռիչքը համարժեք է գազ-հեղուկ փուլային անցման ջերմունակության թռիչքին: Տվյալ փորձում ակուստապլազմայի ռելաքսացիայի ժամանակը կազմում է


* ճնշման արտահամակարգային միավոր՝ 133,322 Պա:

մոտ 1 վրկ, հետևաբար հզորությունը մոտավորապես հավասար կլինի էներգիայի արժեքին:

Ինչպես արդեն նշել ենք, ակուստապլազմային վիճակի «քայքայման» ընթացքում անջատվում է ակուստապլազմայում կուտակված էներգիան (դա կարելի է անվանել «ակուստապլազմայի կապերի էներգիա»): Այդ տեսանկյունից էներգիայի տարբեր տեսակի կուտակիչները կարելի է համեմատել ըստ էներգատարությունների (կամ էներգիայի քանակի): Արգոնի պլազմայի 1 սմ³-ում 200 Տոր ճնշման դեպքում առկա է 0,4 մգ նյութ (կամ 1019 ատոմ): Դա 200 Տոր ճնշման դեպքում ակուստապլազմայում ապահովում է էներգիայի 3,7–300 Ձ թռիչք:

Նյութի նույն զանգվածի համար (0,4 մգ) ջրի գոլորշացման ջերմությունը մոտ 1 Ձ է (թերմոդինամիկ փուլային անցման էներգիա), բենզինի էներգատարությունը (այրման ջերմատվություն)՝ 20 Ձ (քիմիական կապերի էներգիա), պայթուցիկ նյութերի համար՝ 50–150 Ձ, ազատ աղեղային պարպման կամ կայծակի՝ 103 Ձ, Ս²³⁵-ի էներգատարությունը՝ 108 Ձ (միջուկային ուժերի կապերի էներգիա), էյնշտեյնյան $E=mc^2$ էներգատարությունը՝ 1010 Ձ:

Այսպիսով՝ փորձը ցույց է տալիս, որ ակուստապլազմայի էներգատարությունը նույնիսկ պարպման փոքր հոսանքների դեպքում գերազանցում է պայթուցիկ նյութերի էներգատարությունը (նկ. 4):



Նկ. 4 էներգիայի տարբեր կուտակիչների էներգատարությունները, Ձ/0,4 մգ

Այսինքն՝ ակուստապլազմայի միավոր զանգվածում կարելի է կուտակել ակուստապլազմային փոխազդեցության այնպիսի էներգիա, որը գերազանցի պայթուցիկ նյութերի նույն զանգվածում պարունակվող էներգիան:

էներգիայի կուտակումը կարող է տևել մի քանի վայրկյան, քանի որ ակուստապլազմայի ձևավորման պրոցեսը ռեզոնանսային է ու կատարվում է ոչ ակնթարթորեն, այլ որոշակի վերջավոր ժամանակահատվածում և պահանջում է ոչ շատ հզոր սնուցման աղբյուր: Միևնույն ժամանակ, ակուստապլազմային վիճակի քայքայումը որոշակի պայմանների դեպքում կարելի է իրագործել բավա-

կանին կարճ ժամանակահատվածում, որը համեմատելի է պայթուցիկ նյութերի պայթյունի ժամանակի հետ:

Ակուստապլազմային վիճակի քայքայման դեպքում ակուստապլազմայում և չգրգռված պլազմայում կուտակված էներգիաների տարբերությունը նույնպես պետք է անջատվի պայթյունի ձևով, բայց՝ առանց պայթուցիկ նյութերի օգտագործման:

Դա հիմք է տալիս ենթադրելու, որ կարելի է ստեղծել պայթուցիկ պլազմոդիներ, որոնք նման լինեն բնական գնդաձև կայծակների:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. А. Р. Мкртчян, А. С. Абрамян, К. А. Абрамян, С. А. Геворгян, Р. Б. Костянян. Непрерывный СО₂-лазер с использованием акустоплазменного взаимодействия. Конференция «Лазерная Физика—2001», LP—2001. Аштарак. «Труды», сс. 59—62.
2. А. Р. Мкртчян, А. С. Абрамян, К. П. Ароян, Т. Ж. Бежаниян, Р. Б. Костянян, К. С. Мкртчян. Управление параметрами газового разряда СО₂-лазера при помощи плазмо-акустического взаимодействия. Материалы Всероссийской Конференции. ФНТП—2004. Петрозаводск, 2004, т. 1, сс. 127—131.
3. А. R. Mkrtychyan, A. S. Abrahamyan, K. A. Abrahamyan, S. A. Gevorgyan, R. B. Kostanyan. Plasma Fluorophor Energy-Saving Lamps. XIII Int. Conf. on Gas Discharges and their Applications. Glasgow, 3—8 Sept. 2000, Proc. Vol. 2, PP. 855—859.
4. А. И. Морозов. Введение в плазмодинамику. М., 2006.
5. А. С. Абрамян, К. С. Мкртчян. Время релаксации плазмы, возмущенной акустической волной. «Известия НАН Армении. Физика», 2005, т. 40, № 3.
6. К. С. Мкртчян. Исследование контракции и проводимости низкотемпературной плазмы при акустическом возмущении. Е., 2004.
7. Ю. П. Райзер. Физика газового разряда. 2 изд. М., 1992.
8. В. Е. Фортвов, А. Г. Храпак, И. Т. Якубов. Физика неидеальной плазмы. М., 2004.
9. А. С. Абрамян, К. П. Ароян, Э. Г. Багдасарян, С. А. Геворгян, Р. Б. Костянян, Т. Ж. Бежаниян. Дистанционное измерение температуры аргоновой акустоплазмы. Конференция «Лазерная Физика—2005», LP—2005. Аштарак. «Труды», сс. 65—68.

УПРАВЛЕНИЕ ЭНЕРГОЕМКОСТЬЮ ХОЛОДНОЙ ПЛАЗМЫ АКУСТИЧЕСКИМИ ПОЛЯМИ

*А. С. АБРААМЯН, кандидат физико-математических наук, заведующий лабораторией плазменной физики ИППФ НАН РА,
К. В. АКОПЯН, аспирант ИППФ НАН РА, А. С. МИКАЕЛЯН, аспирант ИППФ НАН РА, Р. Ю. ЧИЛИНГАРЯН, младший научный сотрудник ИППФ НАН РА, С. А. ЧИЛИНГАРЯН, аспирант ИППФ НАН РА,
К. Г. СААКЯН, студент факультета физики ЕГУ*

РЕЗЮМЕ

На резонансных частотах акустического резонатора, образованного разрядной трубкой с плазмой, при акустическом воздействии на плазму образуется новая акустоплазменная среда, параметры которой могут сильно отличаться от первоначальной невозмущенной плазменной среды. В области тлеющего разряда для малых значений постоянной компоненты разрядного тока с увеличением переменной компоненты тока наступает акустическая контракция, видимый диаметр разряда сжимается в несколько раз и достигает ~1 мм. Причем параметры разряда отличаются от дугового.

При акустической контракции из-за уменьшения объема, занимаемого плазмой, даже при неизменном энерговкладе, увеличивается плотность энергии, вводимой в единицу объема плазмы, т. е. энергоемкость. Изменяя частоту и глубину модуляции тока разряда можно управлять энергоемкостью акустоплазмы.

Энергоемкость аргоновой акустоплазмы при давлении 400 Торр может увеличиваться более, чем в 20 раз, и достигать 200 Дж/см³ и более, при начальном значении для невозмущенной плазмы 12,5 Дж/см³. При этом температура плазмы, измеренная СВЧ-радиометром, увеличивалась не более, чем в 2 раза.

При разрушении акустоплазменного состояния выделяется запасенная в акустоплазме энергия.

В одном см³ аргоновой плазмы при давлении 200 Торр содержится 0,4 мг вещества, что обеспечивает изменение энергоемкости от 3,7 до 300 Дж.

Таким образом, даже при малых токах разряда энергоемкость акустоплазмы превышает энергоемкость взрывчатых веществ.

MILITARY ENGINEERING

**THE MANAGEMENT OF THE ENERGY CAPACITY
OF COLD PLASMA THROUGH THE ACOUSTIC FIELDS**

*A. S. ABRAHAMYAN, PhD in Physical and Mathematical Sciences,
Head of Plasma Physics Laboratory, IAPP, NAS, RA,
K. V. HAKOBYAN, Graduate Student, IAPP, NAS, RA,
A. S. MIKAELYAN, Graduate Student, IAPP, NAS, RA,
R. Yu. CHILINGARYAN, Junior Researcher, IAPP, NAS, RA,
S. A. CHILINGARYAN, Graduate Student, IAPP, NAS, RA,
K. G. SAHAKYAN, Student at the Faculty of Physics, YSU*

SUMMARY

At the resonance frequencies of acoustic resonator formed by the discharge tube with plasma, at the acoustical action to plasma a new acousto-plasmic medium is generated. The parameters of that medium may significantly vary from the primary unperturbed plasma medium. In the area of glow discharge for small values of constant component of the discharge current with the increase of the variable component of the current an acoustic contraction occurs, the apparent diameter of the discharge is compressed many times and reaches ~1 mm. Moreover, the discharge parameters differ from the arc one.

At the acoustic contraction due to the decrease of volume occupied by the plasma, even at a constant energy input, the density of energy which is brought into unit of volume of plasma (i. e. energy capacity) increases. By changing the frequency and depth of modulation of the discharge current it is possible to manage the energy capacity of acoustoplasma.

The energy capacity of argon acoustoplasma at the pressure of 400 Torr can be increased more than 20 times and reach 200 J/cm^3 and more, with the initial value for the unperturbed plasma of $12,5 \text{ J/cm}^3$. Thus, the temperature of plasma, which is measured by UHF-radiometer increases no more than 2 times.

Energy stored in acoustoplasma is getting released at the destruction of the acoustoplasmic state.

There are 0,4 mgs of the substance in 1 cm^3 of argon plasma at the pressure of 200 Torr. That provides the change in energy capacity from 3,7 to 300 Joule.

Thus, even at low discharge currents the energy capacity of acoustoplasma exceeds the energy capacity of explosives.

**ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎՆԵՐՈՒՄ
ՈՉ ԿԱՆՈՆԱԳՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ**

*Վ. Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, գնդապետ, հոգեբանական գիտությունների թեկնածու,
դոցենտ, ՀՀ ՊՆ ԱՌ-ՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի
գլխավոր խմբագրի տեղակալ, Հ. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, ՀՊՄՀ կիրառական
հոգեբանության ամբիոնի հայցորդ, քաղաքացիական հասարակ
ծառայության առաջին դասի առաջատար ծառայող,
ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի
տնտեսագիտական վերլուծության և գնումների փաստաթղթերի
չեղարկման վարչության առաջատար մասնագետ*



Հայաստանի Հանրապետության անվտանգության առավել իրական երաշխիքն է մարտունակ և արդիական բանակը: Ընդսմին այդ երաշխիքն ունի միայն մեկ չափանիշ՝ ՀՀ Զինված ուժերն իրենց մարտունակությամբ մշտապես պետք է գերազանցեն հակառակորդի զինված ուժերը¹: Մարտունակության կարևոր նախապայմաններից է բարձր մակարդակի զին-

վորական կարգապահությունը, որի պահպանման ոլորտում ներկայումս տեղի են ունենում էական փոփոխություններ: Այդ փոփոխությունները խիստ հակասական են: Մի կողմից՝ ուրվագծվում են ժողովրդավարացմամբ պայմանավորված դրական միտումներ, իսկ մյուս կողմից՝ հասարակության սոցիալ-տնտեսական ու հոգևոր ճգնաժամը, ստորաբաժանումներում կարգազանցությունների թվի աճումը, զորակոչիկների կարգապահության ցածր մակարդակը, անձնակազմի սոցիալական և իրավական անբավարար պաշտպանվածությունը հանգեցնում են կարգուկանոնի պահպանման նկատմամբ զինծառայողների շարժառիթավորվածության նվազմանը², ինչն էլ իր հերթին հանգեցնում է ոչ կանոնադրական հարաբերությունների խորացմանը, կոլեկտիվի կառավարման հետ կապված դժվարությունների առաջացմանը և այլ բացասական երևույթների:

¹ Տես Մ. Մ. Օհանյան, Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումները, երկրորդ փուլ: «Հայկական բանակ», 2008, հմ. 2-3:

² Տես Մ. Ա. Հարությունյան, Զինծառայողների սոցիալական վիճակի բարելավումը՝ որպես ՀՀ ԶՈՒ-ի գերակա խնդիր: «ՀԲ», 2009, հմ. 4:

Ջինվորական կոլեկտիվը արդյունավետ կերպով կառավարելու, կոլեկտիվի անդամներին ուսուցանելու և մարտական ոգով դաստիարակելու, դրական բարոյահոգեբանական մթնոլորտ ձևավորելու համար ստորաբաժանման հրամանատարի կարևոր խնդիրներից է ոչ միայն անհատ զինծառայողի, այլև ամբողջ կոլեկտիվի հոգեբանության, մասնավորապես՝ դիրքորոշումների, տրամադրությունների, հետաքրքրությունների, կարծիքների իմացությունը: Ստորաբաժանումում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտը էապես ազդում է անձնակազմի գործունեության արդյունավետության, համախմբվածության, կարգապահության, յուրաքանչյուր զինծառայողի վարքի վրա:

Ջինվորական կոլեկտիվն ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք անմիջական ազդեցություն են գործում զինծառայողների միջանձնային հարաբերությունների վրա: Ստորև ներկայացնենք այդ առանձնահատկություններից մեր կարծիքով առավել կարևորները:

Դրանց շարքում իր ուրույն տեղն ունի Հայրենիքի զինված պաշտպանության համար զինվորական կոլեկտիվի նախանշանակվածությունը: Ջինվորական կոլեկտիվը այլ կոլեկտիվներից տարբերվում է իր առջև դրված նպատակներին հասնելու միջոցներով և եղանակներով, որոնք խիստ պահանջներ են ներկայացնում անձնակազմի գործողությունների համատեղելիությանն ու համաձայնեցվածությանը, մարտական պատրաստականության ու կարգապահության մակարդակներին: Եվ պատահական չէ, որ զինվորական կոլեկտիվում բոլոր տեսակի գործողությունները հստակ կանոնակարգված են:

Ջինվորական կոլեկտիվի առանձնահատկություններից են նաև նրա բոլոր անդամների հաղորդակցման և փոխգործության կայունությունը, տևականությունը և անընդհատությունը: Առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի պարագայում դրանք պայմաններ են ստեղծում զինծառայողի անձնավորության վրա կոլեկտիվի նպատակաուղղված ու պլանաչափ դրական ներգործության համար, նպաստում են համախմբվածության, կարգապահության և մարտական պատրաստականության մակարդակների բարձրացմանը:

Ջինվորական կոլեկտիվների առանձնահատկություններից է նաև նրա համատարրությունն ըստ սեռի: Ավելին. կոլեկտիվները համալրված են երիտասարդներով, որոնք դեռևս գտնվում են սոցիալականացման, մասնավորապես՝ արժեքային և վարքային կողմնորոշումների ակտիվ ձևավորման փուլում:

Գիտենալով կոլեկտիվի առանձնահատկությունները և այդ կոլեկտիվում տեղի ունեցող սոցիալ-հոգեբանական պրոցեսներն ու երևույթները (փոխհարաբերություններ, ընդօրինակում, ներշնչանք, նույնականացում, հարմարվողականություն, անձնավորության ինքնահաստատում)՝ հնարավոր է արդյունավետ կերպով կառավարել կոլեկտիվը, կասեցնել զինծառայողների փոխհարաբերություններում նշմարվող բացասական միտումները:

Ջինվորական կոլեկտիվի հոգեբանությունը հասկանալու համար կարևոր է տեսնել ու ճիշտ գնահատել այդ կոլեկտիվում ձևավորվող փոխհարաբերություն-

ների էությունը և ուղղվածությունը, դրանց դրսևորման ձևերը, փոքր խմբերում ծառայողական և անձնական շփումների հարաբերակցությունը, սոցիալական շեղումները և այլն³:

ԶՈՒ-ի անձնակազմի կարգապահության ամրապնդման խնդիրը մշտապես դասվել և դասվում է առավել կարևոր խնդիրների շարքը: Ցավոք, որոշ զինվորական կռիվակիցներում դեռ հանդիպում են երևույթներ, որոնք բացասաբար են ազդում ԶՈՒ-ի անձնակազմի բարոյահոգեբանական վիճակի վրա, որը գործերի մարտական պատրաստության կարևոր բաղադրիչներից է⁴:

Նման պրոբլեմներից առավել տարածված է մի երևույթ, որը զինծառայողների միջանձնային հարաբերությունների ոլորտում կոչվում է «նշ կանոնադրական հարաբերություններ»*: Ոչ կանոնադրական հարաբերությունները այնպիսի իրավախախտումներ են, որոնք դրսևորվում են որպես քրեական բնույթի կայուն սոցիալ-բացասական արարքների համախումբ՝ հիմնված բանակային իրականության մեջ գոյություն ունեցող բացասական ավանդույթների վրա: Զինծառայողների կենցաղի և գործունեության համար անհրաժեշտ պայմանների ստեղծման գործում կանոնադրական նորմերից շեղումները, բանակում բացասական ավանդույթների կենսունակությունը, կարգապահական խախտումների դեմ թույլ ու ձևական պայքարը, առանձին հրամանատարների բյուրոկրատական մոտեցումները բացասաբար են ազդում զինվորի անձնավորության ձևավորման վրա և նպաստում են որոշ զինծառայողների մեջ հակահասարակական կողմնորոշումների ամրապնդմանը:

Ըստ մեր հետազոտական տվյալների՝ որոշ ստորաբաժանումներում ոչ պատշաճ մակարդակի կարգապահության հիմնական պատճառները կարելի է ներկայացնել հետևյալ կերպ:

1. Կանոնադրական պահանջների և վարքի տարրական նորմերի անտեսումը, ինչպես նաև մի շարք սպաների կողմից «պրոխոդների»** խրախուսումը բանակային իրականության բավականին կայուն բացասական տարրերն են, որոնք հիմնականում պայմանավորված են առանձին ստորաբաժանումներում կարգազանցությունների կանխարգելման աշխատանքում առկա թերություններով: Տվյալ ոլորտում արդյունավետ աշխատանքի կատարման համար չկան պատրաստված մասնագետներ, որոնք ունենան խոր գիտելիքներ ինչպես ընդհանուր, այնպես էլ զինվորական հոգեբանությունից, քրեաբանությունից և այլ համապատասխան մասնագիտական առարկաներից:

³ Տես Հ. Ա. Մարտիրոսյան, ՀՀ Զինված ուժերում իրավախախտումների կանխարգելման, կարգապահության պատշաճ մակարդակի պահպանման ուղիները: «Օրենք և իրականություն», 2009, հմ. 4:

⁴ Տես Վ. Հ. Մարգարյան, Մարտական գործունեության հոգեբանություն: Ե., 2009, էջ 170:

* Ռուսալեզու գրականությունում տարածված են «դեդովշինա», «գողկովշինա» տերմինները:

** Ժարգոնային բառ է, որն օգտագործվում է ոչ կանոնադրական հարաբերությունների ոլորտում արտոնյալ կարգավիճակ ունեցող անձնավորությանը նշելու համար:

Այս առումով պաշտպանական բարեփոխումների համատեքստում կարևորվում է ՀՀ ՁՈՒ-ի համար զինվորական հոգեբանների նպատակային պատրաստման խնդիրը, թեև զինվորական հոգեբանների պատրաստումը այսօր Հայաստանի Հանրապետությունում ունի զարգացման դրական միտումներ:

2. Պետական ոչ մի այլ կառույցում այդքան ցայտուն չեն դրսևորվում տարիքային տարբերությունները, որքան բանակում: Դա բացասաբար է ազդում պարտադիր ժամկետային ծառայության զորակոչվածների վրա, հոգեխոցվածքի պատճառ է դառնում, քանի որ նոր սոցիալական միջավայրում դեռ չի ձևավորվել նրանց հոգեբանական կայունությունը: Բացասական ազդեցություն է գործում նաև նրանց պարտադրական ընդգրկումը միասեռ սոցիալական խմբի մեջ:

Առավել մտահոգիչ են զինծառայողների միջանձնային հարաբերությունների ոլորտում եղած այն կարգազանցությունները, որոնք պայմանավորված են զինծառայողների հակահասարակական հայացքներով:

Ըստ վիճակագրական տվյալների՝ կարգազանցությունների մեծ մասը գրանցվում է ծառայության ժամկետի երկրորդ կեսին⁵: Նշենք, որ կարգազանցների մոտավորապես կեսը բացասաբար է բնութագրվում դեռ նախքան բանակ զորակոչվելը: Այս տեսանկյունից կարևոր է, որ ստորաբաժանման անմիջական հրամանատարները իմանան իրենց ենթակա անձնակազմի յուրաքանչյուր անդամի հիմնական հատկությունները, նրանց բնորոշ հոգեբանական առանձնահատկությունները⁶, այդ թվում նաև հեղոնիստական ռիսկը*, որը բնորոշ է այդ տարիքի երիտասարդներին:

Մեր կարծիքով՝ զինծառայողների միջանձնային հարաբերություններում բացասական զարգացումները նվազագույնի հասցնելու համար հրամանատարական կազմի ուշադրությունը պետք է կենտրոնացած լինի ոչ միայն պարտադրման միջոցների ամրապնդման, այլև կարգազանցությունների կանխարգելման վրա:

Ընդհանուր առմամբ ոչ կանոնադրական հարաբերությունների, կարգազանց վարքագծի անմիջական պատճառները կարելի է բաժանել երկու խմբի.

1. պատճառներ, որոնք պայմանավորված են մինչ զորակոչը անձնավորության ոչ ճիշտ ձևավորմամբ (մանկավարժական բարձրորոշություն),

2. պատճառներ, որոնք պայմանավորված են ստորաբաժանումներում քողարկված ոչ կանոնադրական հարաբերությունների համակարգով:

Վերջին մի քանի տարիների զորակոչին վերաբերող տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ կա ոչ բարեհաջող ընտանիքներում դաստիարակված

⁵ Տես Ջ. Դ. Ասարյան, Ժամկետային զինծառայողների քրեածին վարքի սոցիալ-հոգեբանական պատճառները և դրանց հաղթահարման ուղիները: Հոգ. գիտ. թեկ. ատենախոսություն: Ե., 2007, էջ 83, 85:

⁶ Տես Վ. Հ. Մարգարյան, Զինծառայողների անհատական առանձնահատկությունների հաշվառման հարցի շուրջ: «Հայկական բանակ», 2005, հմ. 1:

* Հեղոնիստական (հաճույքապաշտական) ռիսկ ասելով հասկանում ենք բավականությունը, հաճույքը, որն ստանում են ռիսկի գնալու, վտանգի զգացողություն ապրելու հետևանքով:

նորակոչիկների թվաքանակի աճման միտում: Շատ ընտանիքներում ծնողների եկամուտները մեծ չեն, առկա են էական սոցիալ-կենցաղային խնդիրներ: Որոշ ընտանիքներում երեխաների դաստիարակությանը բավարար ուշադրություն չի հատկացվում, ինչը տվյալ կատեգորիայի զինծառայողների սոցիալ-մանկավարժական բարձիթողության, կոլեկտիվից օտարվածության, ագրեսիվության և անկանխատեսելի վարքի պատճառներից է: Ուստի այդ բացը պետք է ջանան վերացնել բանակում հրամանատարասպայական կազմի ներկայացուցիչները, այսինքն՝ զինվորական կարգապահության ամրապնդմանն ուղղված աշխատանքի ամենակարևոր օղակը պետք է լինի ՋՈՒ-ի կառավարման մարմինների ղեկավար կազմը: Պաշտոնատար անձի գործունեության մասին հարկ է դատել ոչ միայն ըստ այն բանի, թե նա գործառնաբերում կանոնադրական խախտումների որքան և ինչպիսի փաստեր է «հայտնաբերել», այլև՝ թե նա անձամբ ի՛նչ է արել թերությունների վերացման և բացասական երևույթների կանխման համար: Ընդամենն առաջին պլան է մղվում գործառնաբերում (ստորաբաժանումներում) կոնկրետ կազմակերպական աշխատանքը: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ որոշ սպաներ չեն տիրապետում մարդկանց, կոլեկտիվի կառավարման մեթոդներին (միջոցներին, եղանակներին), կոլեկտիվում կանոնադրական հարաբերությունների հաստատման հնարներին, չեն պատկերացնում, թե ինչպես պետք է լուծել այս կամ այն դաստիարակչական խնդիրը: Նրանք միայն ձգտում են հայտնաբերելու բացասական երևույթները:

Ձորքերի կենսակերպի բոլոր կողմերի վրա դաստիարակչական ներգործության արդյունավետությունը մեծ մասամբ պայմանավորված է կրտսեր հրամանատարների աշխատանքով: Նրանք գտնվում են շարքային զինվորների հետ մշտական հաղորդակցման մեջ, անմիջականորեն ներգործում են նրանց վրա: Վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսումնական գործառնաբերում սերժանտների մի զգալի մասի պատրաստումը արդյունավետ չէ: Խոսքը վերաբերում է ենթակա անձնակազմի կառավարման, անհրաժեշտ բարոյահոգեբանական մթնոլորտի ստեղծման կարողությունների ձևավորմանը: Դրա հետևանքով ենթակաների շրջանում չի հաջողվում պահպանել զինվորական կարգապահության պատշաճ մակարդակ: Հաճախ նաև սերժանտներն են դառնում հանցագործ ոտնձգությունների օբյեկտ: Ստեղծված իրավիճակի պատճառն ուսումնական գործառնաբերում այդ թվակազմի համար մասնագիտական հոգեբանական ընտրազատման համակարգ չունենալն է:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ որոշ ստորաբաժանումներում ոչ կանոնադրական փոխհարաբերությունները, այսինքն՝ կանոնադրական նորմի այդ ձևի խախտումները, ստացել են ավելի քողարկված, կայուն և վտանգավոր բնույթ: Կան գործառնաբեր, որտեղ պաշտոնատար անձանց մի մասը, առաջին հերթին՝ ստորին օղակի սպաները, ենթասպաները, տեսնում են գործերի վատ վիճակը, սակայն չգիտեն ինչպես այն շտկել և, չցանկանալով ցույց տալ իրենց անգործությունը, այդ ամենը թաքցնում են բարձրաստիճան հրամանատարներից:

2006 թ. սկսած գործառնաբերում տեղի ունեցող դեպքերի և մեղավորներին կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի վերլուծությունը հնարավորություն տվեց առանձնացնելու երկու խումբ կարգապահական-հոգեբանական պրոբլեմներ:

Առաջին խումբն են կազմում կարգապահ վարքի շարժառիթավորման և կոլեկտիվի հետ աշխատելու՝ կրտսեր հրամանատարական կազմի ունակության հետ կապված պրոբլեմները:

ՀՀ ՊՆ գործառնաբերում կատարված հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ որոշ զինծառայողներ չունեն անհրաժեշտ կարգապահական շարժառիթավորում և չեն կարողանում իրենց պահել կազմակերպված, կանոնադրական նորմերին, օրենքներին, զինվորական ավանդույթների պահանջներին համապատասխան, իսկ ստորին օղակի զինվորական կառավարման մարմինները չունեն մանկավարժական-հոգեբանական առումով բավարար կարողություններ, որպեսզի հետևողականորեն կարգավորեն իրենց ենթակաների գործունեությունը:

Կարգապահական-հոգեբանական պրոբլեմների երկրորդ խմբում կարելի է ընդգրկել պաշտոնական հարաբերությունների շրջանակներից դուրս գտնվող միջանձնային հարաբերությունների քողարկված համակարգը, որն ունի իր ուրույն կարգերն ու կանոնները և համատեղելի չէ կանոնադրությունների, օրենքների, համամարդկային բարոյականության պահանջների հետ:

Ըստ զորակոչի համալրված զինվորական ստորաբաժանումներին բնորոշ են տարբեր ձևերի ոչ կանոնադրական փոխհարաբերություններ: Իրենց ուրույն կարգերը ստորաբաժանումներում կարող են ձևավորել մաս առանձին զինծառայողներ՝ կապված հարաբերությունների համակարգում առաջավարի դերի, հոգեբանական կարգավիճակի* հաստատման, ոչ ֆորմալ իշխանության ձեռքբերման հետ:

Անբարենպաստ միտումները սաստկանում են անբարենպաստ սոցիալ-հոգեբանական ֆոնով, ինչը պայմանավորված է հասարակությունում առկա սոցիալական շեղումներով (հարբեցողություն, թմրամոլություն, հանցագործություն և այլն): Դրա հետևանքով ՀՀ ՋՈՒ-ի շարքերը համալրում են մաս քաղաքացիներ, որոնք ունեն որոշակի կենսափորձ և կայուն բացասական շարժառիթային դիրքորոշումներ, ինչն էլ, որպես կանոն, հանգեցնում է ոչ կանոնադրական հարաբերությունների: Պետք է նշել, որ բանակում շատ են մասնալի դեպքերը, երբ անմիջական հրամանատարական կազմը, չունենալով հոգեբանական-մանկավարժական գիտելիքների անհրաժեշտ և բավարար պաշար, զինվորին, որն ունի մտածողական ընդունակությունների հետ կապված խնդիրներ, ծանակի առարկա է դարձնում: Որոշ դեպքերում անձնակազմի մարտական պատրաստման և

* Հոգեբանական կարգավիճակը միջանձնային հարաբերությունների համակարգում սուբյեկտի այն դիրքն է, որով պայմանավորվում են նրա իրավունքները, պարտականությունները և արտոնությունները: Միևնույն մարդը կարող է տարբեր խմբերում ունենալ տարբեր հոգեբանական կարգավիճակներ:

ուսուցման ժամանակ կոնկրետ անձանց նկատմամբ կիրառվում է ուժային ներգործության մեթոդը՝ նրանց ուսման մեջ «ձգելու», նաև՝ վերադաստիարակելու նպատակով: Նման մոտեցումը կործանարար ազդեցություն է գործում զինվորի անձնավորության վրա: Ավելին. այդ ամենը հանգեցնում է հրամկազմի, ծառայության և ընդհանրապես ՁՈՒ-ի նկատմամբ կայուն բացասական դիրքորոշման ձևավորմանը:

Կարգազանցությունների կանխարգելման միջոցների մշակման ուղղությամբ սպաների գործունեության հիմքը պետք է լինի կարգազանցությունների ընդհանուր և անմիջական պատճառների, ինչպես նաև պայմանների պատեհաժամ հայտնաբերումը, վերլուծությունը և վերացումը: Նշված նպատակներին հնարավոր է հասնել միայն կանխարգելիչ միջոցներով, որոնք ներառում են կազմակերպական, հոգեբանական, իրավական, դաստիարակչական, տեխնիկական, նյութատեխնիկական բաղադրիչներ:

Այս տեսանկյունից կարևոր խնդիրների շարքն են դասվում.

1. սոցիալ-հոգեբանական երևույթների ու պրոցեսների մշտազննումը և դիմամիկայի գնահատումը,

2. դաստիարակչական ներգործությունը՝ անձնակազմի յուրաքանչյուր անդամի անհատական-հոգեբանական առանձնահատկությունների հաշվառմամբ,

3. ոչ կանոնադրական հարաբերությունների հանգեցնող պատճառների ու պայմանների հայտնաբերումը և դրանց վերացմանն ուղղված գիտականորեն հիմնավորված մեթոդների կիրառմամբ պատեհաժամ միջոցառումների ձեռնարկումը:

Այսպիսով՝ մեր կողմից կատարված հետազոտական տվյալների վերլուծությունը հնարավորություն տվեց ներկայացնելու ստորաբաժանումներում ոչ կանոնադրական հարաբերությունների հանգեցնող պայմանների համախումբը: Սակայն միայն ոչ կանոնադրական հարաբերությունների հանգեցնող պայմաններով սահմանափակումը կլինեք կոպիտ մասնագիտական սխալ, քանի որ կարգազանցության պատճառները պայմանավորված են ոչ թե կարգազանց վարքագծին նպաստող պայմաններով և նույնիսկ առանձին անձնային հատկանիշներով, այլ դրանց փոխկապվածությամբ և ընդհանուր համախումբով: Այս տեսանկյունից հետազոտության շրջանակներում խիստ կարևոր խնդիրներից էր զինծառայողների կարգազանցության հոգեբանական նախադրյալների հետազոտությունը և արդյունքների վերլուծությունը: Արդյունքների որակական վերլուծությամբ հնարավորություն ընձեռնվեց առանձնացնելու կարգազանցին բնորոշ առանձնահատկությունների համախումբը և այն իրավիճակային գործոնները, որոնց զուգորդումը անձնավորության կոնկրետ հատկությունների համախմբի հետ հանգեցնում է կանոնադրական նորմերից զինծառայողների վարքի շեղմանը:

Կատարելով զինվորական կարգապահության մակարդակի վրա բացասաբար ազդող գործոնների հետազոտություն և կարգազանց զինծառայողի անձ-

նային հոգեբանական հատկանիշների առանձնահատկությունների կոնկրետ համախմբի վերլուծություն՝ մենք ստացել ենք արդյունքներ, որոնք ունեն որոշակի գիտական նորույթ: Գիտափորձի պլանավորման ժամանակակից մաթեմատիկական-վիճակագրական մեթոդների⁷ կիրառմամբ՝ արտածվել է զինծառայողների ընդհանուր թվակազմից հավանական կարգազանցների հայտնաբերման հարաբերակցական-ռեգրեսիոն հավասարումը: Այսինքն՝ մշակվել է մի մաթեմատիկական մոդել, որը հնարավորություն է տալիս որոշելու իրավիճակային վարքագծի հաշվարկային արժեքը: Հարաբերակցական-ռեգրեսիոն հավասարումն ունի հետևյալ տեսքը՝

$$y = \frac{e^{10,772} \times \text{ԻՆՏ}^{0,16} \times \text{ԲՀՄ}^{-0,395}}{\text{ՀԿ}^{1,062} \times \text{ԲՇ}^{0,228} \times \text{ԿՎ}^{0,532} \times \text{ԴՈՄ}^{-0,07}}$$

որտեղ՝ ՀԿ-ն հուզական կայունությունն է, ԲՇ-ն՝ բնավորության շեշտվածությունը, ԻՆՏ-ն՝ մտածողությունը, ԿՎ-ն՝ կամային վերահսկողությունը, ԲՀՄ-ն՝ զինվորական կոլեկտիվում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտը, ԴՈՄ-ը՝ դոմինանտությունը:

Ըստ մեր կատարած հետազոտությունների՝ իրավիճակային վարքագծի առավելագույն թույլատրելի արժեքը, հաշվարկված այդ բանաձևով, հավասար է 241,81: Բանաձևի կիրառմամբ հնարավորություն է ընձեռվում բացահայտելու քողարկված բացասական դրսևորումների հավանականությունը բացասական բարոյահոգեբանական մթնոլորտի պարագայում, ինչն ավելի արդյունավետ է դարձնում կարգազանցությունների դեմ պայքարը, դրանց կանխմանն ու կանխարգելմանն ուղղված աշխատանքը:

⁷ Шу А. Ж. Гласс, А. Ж. Стенли. Статистические методы в педагогике и психологии. Пер. с англ. Л. И. Хайрусовой под общ. ред. Ю. П. Адлера. М., 1976, сс. 450–452:

ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ И ВОСПИТАНИЕ

**СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПРИЧИНЫ
НЕУСТАВНЫХ ВЗАИМООТНОШЕНИЙ
В ВОИНСКИХ КОЛЛЕКТИВАХ**

В. Г. МАРГАРЯН, полковник, кандидат психологических наук, доцент, заместитель главного редактора военно-научного журнала «Айкакан банак» ИНСИ МО РА, А. А. МАРТИРОСЯН, соискатель кафедры прикладной психологии АГПУ, ведущий служащий особой гражданской службы первой степени, ведущий специалист Управления экономического анализа и оформления документов по продажам Департамента материально-технического обеспечения МО РА

РЕЗЮМЕ

В контексте особенностей воинского коллектива рассмотрены социально-психологические причины неуставных взаимоотношений, являющиеся детерминантами дисциплинарно-психологических проблем в воинских коллективах.

Авторами был проведен комплекс целевых исследований в ряде воинских частей и подразделений ВС РА. Системный анализ результатов позволил выделить две группы основных причин правонарушений: причины, обусловленные неправильным формированием личности до призыва (педагогическая распущенность), и причины, обусловленные существующей в вышеуказанных подразделениях скрытой системой неуставных взаимоотношений и недостаточно эффективной социально-психологической деятельностью командного состава.

Авторы, наряду с конкретными предложениями по разрешению дисциплинарно-психологических проблем в воинских коллективах и минимизации социально-психологических причин неуставных взаимоотношений, методом корреляционно-регрессионного анализа вывели уравнение для определения расчетного значения ситуационного поведения военнослужащих, что может стать основой для повышения эффективности профилактики и предупреждения неуставных взаимоотношений.

MILITARY PSYCHOLOGY AND EDUCATION

**THE SOCIO-PSYCHOLOGICAL CAUSES OF ACTS
OF VIOLENCE AMONG SERVICEMEN
IN MILITARY COLLECTIVES**

*V. H. MARGARYAN, Colonel, PhD in Psychology, Associate Professor,
Deputy Editor-in-Chief of «Haikakan Banak» Defense-Academic Journal, INSS, MOD, RA,
H. A. MARTIROSYAN, Applicant at the Chair of Applied Psychology of the Armenian
State Pedagogical University, I class Leading Employee of Special Civil Service,
Leading Specialist at the Directorate of Economic Analysis and Purchase Documents
Execution of the Logistics Department, MOD, RA*

SUMMARY

The socio-psychological causes of acts of violence among servicemen, which are the determinants of disciplinary and psychological problems in military collectives are examined in the context of the peculiarities of these collectives.

The authors have conducted a set of target studies in a number of military units of the RA Armed Forces. The system analysis of the results allowed to single out two groups of main causes of delinquencies: the causes conditioned by the improper formation of the person before the draft (pedagogical negligence), and the causes conditioned by the hidden occurrence of acts of violence among servicemen in the aforementioned sub-units and also by the lack of efficient socio-psychological activity by the Commissioned staff.

Along with concrete proposals on solving disciplinary and psychological problems in the military collectives and on minimizing socio-psychological causes of the acts of violence, the authors have derived an equation for determining the estimated value of servicemen's situational behavior through the method of correlation and regression analysis. This could be the basis for increasing the efficiency of preventing the acts of violence among the servicemen.

**19-ՐԴ ԴԱՐԻ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿՁԲԻ
ՌՈՒՄՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀԱՅԱՁԳԻ ՉՈՐԱՊԵՏՆԵՐԸ.
ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ**

*Մ. Լ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր,
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող*

19-րդ դարի և 20-րդ դարի սկզբի հայոց զինվորականության պատմությունը հայ ժողովրդի պատմության բաղկացուցիչ մասն է, նրա հարուստ ռազմական ավանդույթների փայլուն էջերից մեկը: Այն ներառում է 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին ռուսական բանակում ծառայող հայազգի զորապետների ու սպայական գերդաստանների, 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին ստեղծված հայկական ազգային զորամասերի, 1914–1918 թթ. առաջին աշխարհամարտի տարիներին Կովկասյան ճակատում կազմավորված հայկական կամավորական ջոկատների, վերջիններիս վերակազմավորման հետևանքով ստեղծված հայկական կանոնավոր գումարտակների, դրանց զարգացմանը ու ծավալմանը ստեղծված հայկական հրաձգային զնդերի, սպա՝ Հայկական առանձին բանակային կորպուսի և 1918–1920 թթ. Հայաստանի Հանրապետության բանակի կազմավորման և գործունեության պատմության հարցերը:



19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին ռուսական կայսերական բանակում ծառայել են 100-ից ավելի հայազգի գեներալներ և սպաներ: Հայ ժողովրդի զավակները իրենց սխրանքներով աչքի են ընկել ինչպես 1812 թ. ռուս-ֆրանսիական, այնպես էլ 1828–1829 թթ. ռուս-պարսկական, 1877–1878 թթ. ռուս-թուրքական, 1904–1905 թթ. ռուս-ճապոնական, 1-ին և 2-րդ բալկանյան և 1914–1918 թթ. առաջին համաշխարհային պատերազմներում:

19-րդ դարի և 20-րդ դարի սկզբի հայոց զինվորականությանը վերաբերող ռազմապատմական նյութերի մի զգալի մասը արտացոլում է ռուսական բանակի հայազգի գեներալների և սպաների կյանքն ու գործունեությունը:

Ռուսական կայսերական բանակի հայազգի գեներալների և սպաների կյանքն ու մարտական գործունեությունը լուսաբանող հիմնական արխիվային

* Ռուսաստանի պետական ռազմապատմական արխիվ ((ՌՊՌՊԱ)՝ Российский государственный военно-исторический архив (РГВИА)), որը նախկինում կոչվել է Կենտրոնական պետական ռազմապատմական արխիվ ((ԿՊՌՊԱ)՝ Центральный государственный военно-исторический архив (ЦГВИА)):

նյութերը գտնվում են Ռուսաստանի պետական ռազմապատմական արխիվում (այսուհետև՝ ՌՊՌՊԱ)*:

Այստեղ գլխավոր շտաբի (409-րդ) ֆոնդում պահվում են գեներալ-լեյտենանտներ Ադամ Կորզանովի, Արտեմի Վարտանովի, գեներալ-մայորներ Իվան Բադրամովի, Գավրիիլ Կորզանովի, Լևոն Տիգրանովի, գնդապետներ Իվան Ալավերդովի, Միխայիլ Գոզալովի, Ալեքսանդր Մելիքյանցի, Գեորգի Պոզոնի վերաբերյալ փաստական հարուստ նյութեր (ծառայողական ցուցակներ, պատմական տեղեկանքներ և այլն): Այլ ֆոնդերում (521-րդ, 551-րդ) կան նյութեր պորուչիկ իշխան Գեորգի Արզուտինսկի-Դոլգորուկիի, կապիտան Լևոն Օսիպյանցի, պորուչիկ Լևոն Տեր-Ավետիքովի կյանքի և ռազմական գործունեության մասին (ծառայողական ցուցակներ, զեկուցագրեր և այլն):

ՌՊՌՊԱ-ում հայտնաբերված արխիվային նյութերից պատմական բացառիկ արժեք են ներկայացնում հայազգի գեներալների և սպաների ծառայողական ցուցակները: Դրանք այն հիմնական և արժանահավատ փաստաթղթերն են, որոնցում վավերացված են հայազգի գեներալների և սպաների ռազմական գործունեությունը, զինվորական կոչումները, մարտական սխրանքները, զբաղեցրած հրամանատարական պաշտոններն ու համառոտ կենսագրական տվյալները: Այդ փաստաթղթերը կազմված են պատերազմական տարբեր տարիների և գոյություն ունեցող կարգի համաձայն հաստատված են վերադաս հրամանատարության կողմից: Թեև այդ ծառայողական ցուցակները երբեմն շատ հակիրճ են, այդուհանդերձ արժեքավոր պատմական փաստաթղթեր են, որոնց հիման վրա կարելի է որոշակի պատկերացում կազմել նրանց կյանքի ու մարտական ուղու մասին:

Մեզ հաջողվել է արխիվներում հայտնաբերել բոլոր այն կարևոր ծառայողական ցուցակները, որոնցում արտացոլված են ռուսական բանակի հայազգի գեներալների և սպաների կյանքն ու ռազմական գործունեությունը 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին, և որոնք մենք լայնորեն օգտագործել ենք մեր աշխատություններում: Ինչպես նշվեց, ծառայողական ցուցակները արտացոլում են ռուսական բանակի հայազգի գեներալների և սպաների ռազմական կենսագրությունը, ռուսական զորքի տարբեր զորատեսակների կազմում նրանց անցած մարտական ուղին և սխրանքները:

Գեներալ-մայոր Քրիստափոր Արարատովի մարտական գործունեությունը ռուսական, ապա հայկական բանակներում լուսաբանող փաստաթղթեր կան Ռուսաստանյան բանակի կենտրոնական պետական արխիվի* Հայկական հրաձգային դիվիզիայի վարչության ֆոնդում (1535-րդ):

Հայաստանի Ազգային արխիվում (Ֆ. 121) կան կարևոր փաստաթղթեր, որոնք բնութագրում են գեներալ-մայոր Պավել Բեժանբեկի ռազմական գործունեությունը ռուսական բանակի շարքերում, նրա անցած մարտական ուղին և սխրանքները, նրա կարևոր դերը հայկական ազգային զորամասերի ստեղծման գործում (ծառայողական ցուցակ, հրամաններ և այլն):

* Центральный государственный архив Российской армии (ЦГА РА).

Կրասնոդարի երկրամասի պետական արխիվում* հավաքված են հույժ կարևոր փաստաթղթեր, որոնք լուսաբանում են 20-րդ դարի սկզբին ռուսական բանակի կազակային զորքերում ծառայած հայազգի սպաների և զինվորների մարտական գործունեությունը: Արժեքավոր են հատկապես առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Կովկասյան ճակատում թուրքական զորքերի դեմ Քյուրդամիրի ուղղությունում, Բաքվի, Դերբենդի և Պետրովսկի (ներկայումս՝ Մախաչկալա) շրջաններում տեղի ունեցած մարտերում գեներալ Լազար Ֆյոդորի Բիչերախովի պարտիզանական զորաջոկատի կազմում հայ «կազակների» մարտական սխրանքները լուսաբանող փաստաթղթեր (պարզևատրման հրամաններ, ցուցակներ, զեկուցագրեր և այլն):

Մի շարք կարևոր ռազմական փաստաթղթեր են պահվում նաև Մոսկվայի պետական գրադարանում: Այդ գրադարանի ռազմական գրականության բաժնում պահվող՝ 1906–1916 թթ. տպագրված ցուցակներում¹ հավաքված են միանգամայն արժեքավոր նյութեր գեներալ-համհարզներ իշխան Մովսես Արզումանյանի-Դուրդուրուկովի, իշխան Լևոն Մելիքովի, հետևակի գեներալներ իշխան Վասիլի Բեհրուբովի, կոմս Միքայել Լոռիս-Մելիքովի, ծովակալ Լազար Մերեբրյակովի, գեներալ-լեյտենանտներ Սողոմոն Աբամելիքի, Անդրեյ Աթաբեկովի, Յակով Ալխազովի, Դմիտրի Ախշարումովի, Դավիթ Բեհրուբովի, Մատվեյ Լալանի, Վալերիան Մադաթովի, Արիստոմ-Աբել Սգեբրովի, Թովմաս Նազարբեկովի, Արզաս Տեր-Ղուկասովի, գեներալ-մայորներ Իվան Բադրամովի, Ալեքսանդր Բեկ-Գաջանի, իշխան Սողոմոն Բեկտաբեկովի, Հովհաննես Դավիդյանի (Ժան դը Վիտտե), իշխան Իսահակ Թումանովի, իշխաններ Արտեմ և Մեմիոն Լազարևների, Լազար Լազարևի, Իվան Լոռիս-Մելիքովի, Ալիմ Խաստասովի, Նիկիտա Կալուստովի, Արշակ Կամսարականի, Ալեքսանդր Կարգանովի, Հովսեփ Կորգանովի, Նիկոլայ Հախվերդովի, Ֆեոդոր Հախվերդովի, Աբրահամ Մադաթովի, իշխան Նիկոլայ Մանվելովի, Ալեքսանդր Մարդանովի, Իվան Մարկոզովի, Իսահակ Մելիք-Հայկազովի, Նիկոլայ Մելիք-Շահնազարովի, Պավել Մելիք-Շահնազարովի, Արտեմ Յուզբաշևի, Գևորգ Շահխաթունյանի, Բեհրուբ Շելկովնիկովի, Իվան Շելկովնիկովի, Վլադիմիր Շելկովնիկովի, Լևոն Պոզոնի, Մեմիոն Մերեբրյակովի, Իվան Սիմոնովի, Գեորգի Սումբատովի, Միքայել Սումբատովի, Հովհաննես Վարշամովի, Արտեմի Վարտանովի, Ավակում Վեքիլովի, Դմիտրի Տեր-Ասատուրովի, Տիգրան Տիգրանովի, Ստեփան Քալանթարովի, գնդապետներ Նիկոլայ Բադդասարովի, Արսենի Դուրլխանովի, Պավել Խաչատուրովի, Մերգեյ Շելկովնիկովի, Գեորգի և Ռուբեն Պոզոնների, Մովսես Միլիկովի, Վադարշակ Տեր-Հակոբյանց-Տեր-Մարկոսյանցի, Թադևոս Տեր-Հովսեփյանցի, կապիտան Գաբրիել Միրիմանովի, ռուսական բանակի մի

* Государственный архив Краснодарского края (ГАКК).

¹ Стл «Общий список офицерских чинов русской императорской армии», «Списокъ генераламъ по старшинству» և «Списокъ полковникамъ по старшинству». СПб., 1906—1916:

շարք այլ հայազգի գեներալների և բարձրաստիճան սպաների մասին:

Վավերագրերը ներկայացնում են համառոտ կենսագրական տվյալներ, մարտերում հայազգի գեներալների և սպաների կատարած սխրանքները, զբաղեցրած հրամանատարական պաշտոնները, ստացած պարգևները, ինչպես նաև ակտիվ մասնակցությունը 1828–1829, 1877–1878 թթ. ռուս-թուրքական, 1904–1905 թթ. ռուս-ճապոնական, 1-ին և 2-րդ բալկանյան, 1914–1918 թթ. առաջին համաշխարհային կամ այլ պատերազմների:

Ռուսական բանակի հայազգի գեներալների անձնական կյանքը և ռազմական գործունեությունը ներկայացված են նաև մի շարք հրապարակումներում:

Կարևոր հրապարակումներից են, մասնավորապես, Ա. Ս. Խոնյակովի և Ի. Մ. Բակունինի «Գեներալ-լեյտենանտ Մադաթովի կյանքը»², Վենգերովի «Ռուսական զրքեր՝ հեղինակների մասին կենսագրական տվյալներով», Գ. Ի. Ախշարույանովի «1812 թ. պատերազմի նկարագրությունը»³, Ի. Ս. Սիմոնովի «Մ. Ս. Լալակի հիշատակին»⁴, «Իշխանուհի Ս. Ա. Մադաթովա, իշխան Վալերիան Գրիգորի Մադաթով»⁵, «Պավել Մովսեսի Մելիքովի կյանքի տեղեկագիր»⁶, «Դելյանովների տոհմը»⁷, Ի. Ա. Բելոգլովի «Կոմս Լոռիս-Մելիքով, հուշեր», «Գեներալ Յա. Կ. Ալխազով», «Գեներալ Արզաս Արտեմի Տեր-Ղուկասով»⁸, Վ. Ա. Պոտտոյի «Գեներալ-համհարզ Իվան Դավիդի Լազարև»⁹ աշխատությունները:

Մի շարք նյութեր են հրատարակվել Ա. Գիզետտիի «Կովկասյան զորքերի Գեորգիյան ասպետների և մարտական պատվանշանների մասին տեղեկությունների ժողովածու»¹⁰ և «Ռազմական հանրագիտարան»¹¹ աշխատություններում:

Մեր ժամանակներում 19-րդ դարի և 20-րդ դարի սկզբի ռուսական բանակի հայազգի զինվորականների կյանքը և ռազմական գործունեությունը լուսաբանող նյութեր ու փաստաթղթեր հրապարակվել են Հ. Ավետիսյանի «Հայազգի գեներալները ռուսական կայսրությունում»¹², տողերիս հեղինակի «Հայազգի զինվո-

² Տես Ա. Ս. Хомяков, И. М. Бакунин. Жизнь генерал-лейтенанта Мадатова. СПб., 1837:

³ Տես С. А. Венгеров. Русские книги. С биографическими данными об авторах и переводчиках (1708—1893), в 3-х томах. СПб., 1897—1899; Д. И. Ахшарумов. Описание войны 1812 года. СПб., 1819:

⁴ Տես И. С. Симонов. Памяти М. С. Лалаева. «Педагогический сборник», 1912, № 12:

⁵ Տես И. С. Симонов. Княгиня С. А. Мадатова, князь Валериан Григорьевич Мадатов. «Русская Старина», 1873, Кн. 1:

⁶ Տես И. С. Симонов. Известия о жизни Павла Моисеевича Меликова. М., 1852:

⁷ Տես И. С. Симонов. Род Деляновых. «Братская помощь пострадавшим в Турции армянам». М., 1898:

⁸ Տես И. А. Белоголовый. Граф М. Т. Лорис-Меликов, Воспоминания; Генерал Я. К. Альхазов; Генерал Арзас Артемьевич Тер-Гукасов: «Братская помощь». М., 1898, сс. 269–289, сс. 302–313, сс. 313–334:

⁹ Տես В. А. Потто. Генерал-адъютант Иван Давидович Лазарев. Тифлис, 1900:

¹⁰ Տես А. Гизетти. Сборник сведений о Георгиевских кавалерах и боевых знаках отличий Кавказских войск. Тифлис, 1901:

¹¹ Տես «Военная энциклопедия». М., 1913:

¹² Տես Г. Аветисян. Генералы-армяне в Российской империи. Е., 2007:

րականները ռուսական բանակում (19-րդ դարի վերջ–20-րդ դարի սկիզբ)»¹³ ու «Գեներալ-լեյտենանտ Հովհաննես Հախվերդյան»¹⁴, մենագրություններում, մի շարք այլ գիտական աշխատություններում:

¹³ Տես Մ. Լ. Կարապետյան, Հայագի զինվորականները ռուսական բանակում (19-րդ դարի վերջ–20-րդ դարի սկիզբ): Ե., 2008:

¹⁴ Տես Մ. Ա. Կարապետյան. Генерал-лейтенант Ованес Ахвердян. Е., 2003:

ՆԺԳԵՀԻ՝ ՄԱՐՏԻ ՎԱՐՄԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Վ. Կ. ԱԹՈՅԱՆ, Կրկնապատիվության քեկնածու



Գարեգին Նժդեհի տեսական ժառանգության մեջ իրենց ուրույն տեղն ունեն ռազմական արվեստին, զինվորի հոգեբանական և մարտավարական պատրաստությանը վերաբերող աշխատությունները: Նժդեհի գաղափարախոսությունը բնորոշվում է որպես հայ ազգի անվտանգության, գոյատևման ապահովման, ազգային ինքնության, հայկական մշակույթի, հայոց լեզվի պահպանության և համահայկական նպատակների իրականացման համապարփակ ազգային ծրագիր, որի կարևոր բաղադրիչներից են սերունդների ռազմահայրենասիրական դաս-

տիարակությունն ու պետության ռազմական հզորության ամրապնդումը: Նժդեհի աշխատություններում ամփոփված դրույթներն իրենց արդիականությունը չեն կորցրել մաս մեր օրերում և կարող են տեսական ու գործնական մշակակություն ունենալ Հայոց բանակի ռազմագիտական, հայ զինվորի հոգեբանական ու ֆիզիկական պատրաստության մակարդակի բարձրացման գործում: Ինչպես իրավագիտորեն մշտել է ՀՀ ներկայիս Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը. «Նժդեհը մեր այն զինվորական տեսաբաններից է, ով իր գեներալի միջոցով համադրել է գրչի ուժին, և նրա ստեղծած գործերը մշտապես ուղղորդում են գաղափարական, ինչու՝ ոչ, շատ դեպքերում մաս՝ զինվորական տեսության զարգացումը... Նժդեհը հայ ժողովրդի սիմվոլն է»¹:

Ռազմակրթական դաստիարակության տեսանկյունից առաջին հերթին առանձնանում են նրա խոհերը՝ կապված «ահավարության» հետ, որը Նժդեհի ստեղծած և հայոց լեզվի բառապաշարը հարստացրած բազմաթիվ բառերից մեկն է: «Խոտան պիտի հռչակել այն բոլոր տեսությունները, որոնք հաղթանակը միշտ էլ նվիրում են այն կողմին, որը մի հատիկ զինվոր, մի քնդանոթ, ամրա-

¹ «Հարցազրույց Լ.Ղ.Ղ. Պաշտպանության նախարար գեներալ-լեյտենանտ Ս. Օհանյանի հետ»: «Չորրորդ իշխանություն», 2006 թ. դեկտեմբերի 15:

շինական մի կառուցվածք ավելի ունի: Ո՛չ, ո՛չ, հարյուր զինվորի ուժը միշտ էլ հավասար չէ հարյուրի ուժին: Այդ ուժն ունի իր հավելումն ու նվազումն ունի, նայած թե ո՞վ է և հոգեբանական ինչպիսի՞ մթնոլորտում ու ինչպե՞ս է ղեկավարում այդ հարյուրյակը: Կռվում գործ ունենք կենդանի, հարավոփոխ, դինամիկ է և ոչ մեքենական մեռյալ ուժերի հետ, որոնք չեն մնում քարացած միեւնույն կետի վրա: Տեխնիկական վճռական դեր է կատարում միայն այն դեպքում, երբ նրանցից օգտվում ենք իբրև ահավարության միջոցներից: Հաղթանակը օրինաչափորեն թեքվում է այն կողմը, որը հաջողվում է ավելի երկար ժամանակ մահվան սարսափի տակ պահել իր հակառակորդին՝ ճգնելով խորտակել նրա դիմադրական ոգին: Այո՛, ըստ էության՝ ռազմավարությունն այլ բան չէ, եթե ոչ՝ ահավարություն: Եվ, որովհետև մահն է ահացուցիչը՝ մենք բնավ մեղանչած չենք լինի լեզվի ոգու դեմ, եթե այսպես բանաձևենք ռազմավարությունը—հոգեբանորեն առնված՝ դա մահավարություն է»²:

Նժդեհի աշխատությունների վերլուծությունից պարզ է դառնում, որ նա մեծապես կարևորում էր զինվորականության բարոյահոգեբանական պատրաստվածությունը և բանակը առաջնորդող ղեկավարության անհատական հատկանիշները: Նույն ժողովուրդը կարող է և՛ հրաշագործություններ կատարել, և՛ խայտառակորեն ծունկի գալ հակառակորդի առաջ, որ հաղթանակի են հասնում դեռ կռիվը չսկսած, նախ՝ բարոյապես, նախ՝ հոգիների մեջ. «Վա՛յ այն բանակին, որին հոգեբան և կարող ղեկավարներ են պակասում: Նման դեպքում տկար տարրերին հաճախ հաջողվում է ապամագնիսացնել, բարոյալքել անգամ մարտունակ տարրերը: Ջանգվածների հոգեբանության օրենքներին ծանոթ ղեկավարը անձնական կենդանի օրինակի վարակչությամբ նպաստում է իր զինվորների դրական հոգեբնեւացմանը, որով և՛ անկարելի դարձնում բացասականը: Եվ, հենց սրանում էլ, ըստ էության, կայանում է ղեկավարության գործի կեսը—նրա կարևորագույն մի մասը»³: Ավելացնենք, որ թեև Նժդեհը ճակատամարտում հաղթանակը ապահովելու համար առանձնացնում է երեք նախապայման՝ զորքի թվաքանակ, զենքի արդիականություն և բարոյական գերազանցություն, սակայն որպես վճռորոշ նախապայման շեշտում է վերջինը՝ դրանով հենց բացատրելով Սյունիքում իր վարած հերոսամարտերի հաջողությունը:

Հարկ է նշել, որ Նժդեհը միշտ եղել է գիտակցված պայքարի կողմնակից: Ըստ նրա՝ ժողովրդի և բանակի տոկոսությունը, հաղթանակին հասնելու կամքը մեծապես կախված են այդ պայքարի նպատակի զիտակցումից, իմա՝ այն գաղափարի, իրավունքի կամ տարածքի պաշտպանության, հանուն որի մղվում է պատերազմը: Ըստ Նժդեհի տեսության՝ ռազմական առաջնորդի կարևորագույն հատկանիշներից է իր զինվորների վրա բարոյական ազդեցություն գործելու ունակությունը, առանց որի անհնար է հաղթանակներ կերտել:

Նժդեհը Սյունիքում ձեռք բերված ռազմական հաջողությունների պատճառ-

² Գ. Նժդեհ, Երկեր, հ. 1: Ե., 2002, էջ 283:

³ Նույն տեղում, էջ 287:

ների թվում առանձնացնում է նաև իր մշակած և կիրառած՝ «գրոհող ժայռեր», «պայթուցիկ տակառներ», «մուրճ և ոստայն», «ուժանակային հրավառություն», «փրկարար ակնախարություն», «գայլի ռազմավարություն»^{*} և այլ մարտավարական հնարները, որոնք արդյունավետորեն կիրառում էին նրա դավիթբեկյան ուխտերը և գայլավաշտերը: Թերևս անհնար է մեկ հողվածի շրջանակներում մանրամասն քննարկել բոլոր վերոնշյալ հնարները, սակայն փորձենք երկու խոսքով անդրադառնալ դրանցից մի քանիսին:

Ինչպես նշում է Նժդեհը՝ «գայլի ռազմավարության» հիմնական էությունն այն էր, որ առավելապես գիշերային հարձակումների միջոցով Նժդեհի ժողովրդական վաշտերը նախ, հակառակորդին անակնկալի բերելով, ստանում էին բարոյական առավելություն, ապա նոր՝ անցնում հարձակման: Հարձակումների այդ գործելաճը նրան հնարավորություն էր տալիս խուճապի մատնելու և մարտավարական աքցանի մեջ առնելու հակառակորդին, հաճախ նրան շեղելու գործողության նախապես որոշված ուղղությունից, պարտադրելու մարտը վարել իր համար անհարմար տեղագրական պայմաններում, իսկ յուրային գործին՝ խուսափելու երկարատև դիրքային մարտերից, նվազագույնի հասցնելու զոհերի թիվն ու ռազմամթերքի ծախսը և այլն:

Տեղին է հիշատակել Նժդեհի կողմից կիրառված մեկ այլ՝ «գրոհող ժայռեր», մարտավարական հնարը: Նժդեհը, կանխատեսելով հակառակորդի գրոհի ուղղությունները, իր և թշնամու միջև գտնվող բարձունքներում՝ ժայռերի տակ, մարտիկներին հրամայում էր թաքցնել մեծ քանակությամբ (դինամիտ): Հակառակորդի գրոհը դեռ չսկսված՝ այդ ականները պայթեցվում էին՝ առաջ բերելով, Նժդեհի բառերով, «քարե կարկուտ» և ծխի ու փոշու ամպերով պատելով ձորերը: Նման հնարը հնարավորություն էր տալիս կանխելու հակառակորդի կազմակերպած գրոհի հնարավորությունը և խուճապ տարածելու նրա շարքերում: Ստանալով հոգեբանական առավելություն՝ Նժդեհի զինակիցները դիմում էին գրոհի և պարտության մատնում անակնկալի եկած թշնամուն:

Անհրաժեշտ ենք համարում հիշատակել նաև «մուրճ և ոստայն» կոչվող մարտավարական հնարը, որի հիմնական էությունը հետևյալն էր: Նժդեհն իր ուժերի չնչին մասը տեղաբաշխում էր ռազմաճակատի ոչ էական կետերում, իսկ մեծ մասը թաքցնում էր՝ վճռական պահին որպես կենդանի «մուրճ» կիրառելու համար: Հակառակորդի գրոհն սկսվելուց հետո սյունեցիների հիմնական ուժերը որոշ ժամանակ դեռ մնում էին կրավորական դիրքում, մինչև հակառակորդը, առաջանալով, կարևոր կետերում թուլացնում էր իր զգոնությունը, ինչից հետո Նժդեհը հիմնական ուժերով դիմում էր հարձակման՝ թևանցմամբ կամ թիկունքային գրոհով:

Հայոց ռազմարվեստի պատմության տեսակետից հետաքրքրություն է ներկայացնում նաև Նժդեհի կողմից կիրառվող հոգեբանական գրոհների մարտա-

^{*} Այստեղ հարկ ենք համարում նշել, որ Նժդեհը «ռազմավարություն» տերմինը երբեմն կիրառում է իր մարտավարական հնարները բնորոշելիս:

վարությունը: Ըստ Նժդեհի՝ զորամիավորումները մարտունակ են այնքան ժամանակ, որքան ճակատամարտի ընթացքում զգացվում է դրանց հրամանատարական կազմի ներկայությունը: ՌԻստի հակառակորդի ուժերի ղեկավարումը թուլացնելու նպատակով Նժդեհը իր զինակիցներից առանձնացնում էր մի խումբ մարտիկների, ինչպես ինքն էր կոչում՝ «որսորդներին», որոնց նպատակն էր ճակատամարտն սկսվելուն պես ոչնչացնել հակառակորդի հրամանատարներին:

Նժդեհը ռազմարվեստին նվիրված իր աշխատություններում հատուկ շեշտում է մարտում հրամանատարի՝ առաջնորդի խոսքի նշանակությունը: Ըստ նրա՝ այն, ինչ հաճախ դժվարանում է անել արդիական հեռահար թնդանոթը, հեշտությամբ կատարում է ղեկավարի զորավոր խոսքը: Խոսքը, երբեմն՝ հրամայող ու իշխող, երբեմն՝ կանչող ու մղող, միշտ պատկերավոր ու սեղմ, սրտերին՝ կրակ, բազուկներին՝ թափ, կամքերին՝ մղում տվող խոսքն է իշխելու և ղեկավարելու միակ միջոցը: Հաղթելու համար քիչ է խելքը, տաղանդը, անհրաժեշտ է և զորավոր խոսքը⁴:

Հաշվի առնելով հայ ժողովրդի պատմական փորձը, ճակատագիրը, Հայաստանի բարդ աշխարհագրական դիրքը և հարևան երկրների մշտական տարածքային նկրտումները՝ Նժդեհն իր բազմաթիվ գիտատեսական, հրապարակախոսական աշխատություններում կարևորել է հայ ժողովրդի համար ռազմարվեստին, ռազմական գիտելիքներին տիրապետելու անհրաժեշտությունը: Նա գրել է, որ պատերազմը մի մշտական չարիք է, որը եղել է, կա ու պիտի լինի, և որ գուցե դարերն ու մարդկային բարոյական մշակույթը կարողանան մեղմացնել նրա բնույթը, փոխել ձևերը, բայց վերացնել՝ երբեք: ՌԻստի կցանկանար, որ մեր ժողովուրդը ևս, որն արևի տակ իր անկախ անկյունն ունենալու ձգտումն ունի, պարտադրորեն յուրացնի կռվի բարդ արվեստը, որը հատկապես մեզ նման փոքր ազգերի համար եղել է և կմնա ինքնապաշտպանության միակ միջոցը⁵:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև Գարեգին Նժդեհի 1921 թ. Գորիսում տպագրված «Խուստուփյան կանչեր» և 1918 թ. Երևանում Շերամի համահեղինակությամբ լույս ընծայված «Զորաշարքային կանոնադրություն» աշխատությունները: Մասնավորապես «Խուստուփյան կանչեր» աշխատությունում նկատելի է, որ Նժդեհին խորթ է եղել հրամանների պաշտոնական, այսպես ասած՝ ստանդարտային ոճը. «Նա (զորքը, -Վ. Ա.) հարգում է գիտակցական կարգապահությունը, բայց չի սիրում պաղ և անհոգի պաշտոնականությունը: Նա ուզում է, որ իր առաջնորդը լինի ավելի սրտի մարդ և ամենազլխավորը նաև զինվոր: Եվ այդպիսին է կատարյալ առաջնորդը. նրան պաշտում են, բայց չեն վախենում նրանից և պիտի չվախենան»⁶: Նժդեհը նման մոտեցում ուներ նաև վերադասի կողմից տրված հրամաններն ընկալելու և դրանց ենթարկվելու նկատմամբ՝ նույնը պահանջելով նաև իր զինակիցներից. «Մարդկային իմացականությ-

⁴ Տես Գ. Նժդեհ, Լեոնահայաստանի զոյամարտը: Պէյրոս, 1999, էջ 26–27:

⁵ Տես նույն տեղում, էջ 16:

⁶ Գ. Նժդեհ, Երկեր, հ. 1: Ե., 2002, էջ 40:

յան դեմ խորապես մեղանշում է նա, ով իրեն տրված հրամանը չի գործադրում ստեղծագործաբար: Վտանգի ժամանակ, մասնավորապես, երբ մի երկրի և ժողովրդի լինել-չլինելու խնդիր կա, դավաճանություն է՝ զինվորական կանոնագրի այս կամ այն հոդվածի տակ վատորեն թաքնվելը կամ անձնական պատասխանատվությունից փախչելը: Նման պատմական պայմաններում՝ ղեկավարի չափանիշը, նրա հարցումը պետք է լինի՝ ի՞նչ կթելադրի երկրիս ու ցեղիս հավիտենական շահը, և ոչ թե միայն՝ օրվա իշխանությունը: Կան վայրկյաններ, կան քաղաքական անցքերի այնպիսի ձախող դասավորումներ, երբ իշխանությունները իրենց անգոր են զգում, ավելին՝ դառնում են տատանվող, զիջող, պարտվողական... *Եթե Մյունխաց աշխարհում, ես ինչ պետք, պաշտոնյա համարեի, ես կատարած պիտի լինեի բարձր իշխանության ծանոթ հրամանները, որ ասել է՝ ես պիտի հաշտվեի Մյունխքը Ադրբեջանին կցված լինելու փաստի հետ: Եւ այդ դեպքում, ինչ խոսք, որ ուրացողները ինչ «խռովարար» անունը չէին փա»⁷:*

Նրա բոլոր հրամանները առանձնանում են բոցաշունչ, հայրենասիրական ոգով և հստակորեն միտված են զինվորների մարտական, բարոյական ոգու բարձրացմանը: Այսպես. Գափան–Գենվազ–Տաթևի ռազմական ուժերին ուղղված իր հմ. 17 հրամանում (1920 թ. հունվարի 17) նա գրում է. «Զինվորներ, անհաշտ թշնամին նորից մեզ իր ձեռնոցն է նետել: Վերցնենք առանց տատանումի: Օրեր առաջ իմ արևմտյան ուժերի խենթ հարվածներից ընկավ անառիկ Գեղվա ձորը: Օրեր անց ձեր նույն գեղվաձորյան թափի և կրակի առաջ պիտ ընկնի Որոտանի աջ ափը: Այնտեղ, Գեղվա բարձունքներում եւ ձորերում, մեզ գորավիզեց Գավիթ-Բեկի վրիժավառ սովերը, այստեղ, Որոտանի ճակատում, մեզ կառաջնորդե թորոս իշխանի հայրենանվեր հոգին: Յոթ բարձունք ունի այս ճակատը, հպարտ բարձունքներ, որոնց տիրելու մեջ, որոնց վրա է մեր փրկությունը: Ով տիրեց այդ լեռներին, նա է տերը Ջանգեզուրի: Ուրեմն առա՛ջ, իմ յոթն անգամ սիրած և քաջ դավանցիներ, առաջ դեպ այդ բարձունքները՝ դեպ Քյափազ, Ային-դաղ, դեպ Հարթիզ: Մեզ հետ Աստված եւ մեր պատերազմական բախտը, առա՛ջ»⁸: Ինչպես այս, այնպես էլ իր բոլոր հրամաններում Նժդեհը՝ որպես խոր հավատքի տեր մարդ, համոզված էր, որ «անկրոն էակը հրաշունչ զինվոր չի դառնա», իր խոսքը վերջացնում էր Աստծուն և մեր անվանի հայորդիներին հիշատակելով՝ «Առա՛ջ, մեզ հետ Աստված եւ Գավիթ-Բեկի վրիժակ հոգին», «Առա՛ջ, մեզ հետ Աստված եւ մեծ հայորդիների՝ Քրիստափորի եւ Ռոստոմի անհանգիստ հոգիները», «Զորավիզ ունենալով Աստծուն ու մեր ընտիր ռազմիկների՝ Գավիթ-Բեկի ու թորոս իշխանի հայրենանվեր ու վրիժակ հոգիները, դավանցիներ ենք մենք՝ միշտ հաղթող ու անպարտ», և այլն:

Նժդեհը՝ որպես հմուտ ռազմական հոգեբան, հայ մարտիկների ռազմահայրենասիրական ոգին բարձր պահելու և հերոսական մահով ընկած հայորդիների փառքը հավերժացնելու նկատառումներով հրամայել էր զինվորների անվանա-

⁷ Գ. Նժդեհ, Երկեր, հ. 2: Ե., 2002, էջ 206–207:

⁸ Գ. Նժդեհ, Խուստուփյան կանչեր, Զորաշարքային կանոնադրություն: Ե., 1992, էջ 11:

ցուցակների ամենօրյա ստուգումների ժամանակ հիշատակել հանուն Հայրենիքի ազատության նահատակված հայ քաջորդիների անունները՝ Քեռի, Խեչո և այլն: Եվ երբ ստուգողը տալիս էր այդ նվիրական անունները, զորաշարքի այդ թևի առաջին զինվորը պատասխանում էր՝ «ընկա՛վ», «փա՛ռք»՝ կրկնում էր այդ թևի երկրորդ զինվորը, «հավերժ փա՛ռք»՝ ավելացնում էր ամբողջ զորաշարքը⁹: Բացի այդ, նրա հրամանով գյուղերում կառուցվել էին ամրաբերդեր, որոնք անվանակոչվել էին այս կամ այն ազգային հերոսի անունով՝ Խեչոյաբերդ, Քեռիաբերդ, և այլն:

Գարեգին Նժդեհն իր մարդասիրությունը դրսևորում էր նույնիսկ թշնամու նկատմամբ: Այսպես. նրա հրամաններից մեկում ասված է. «...եղեք անխնա ձեզ դիմադրողների նկատմամբ, ասպետ եւ մարդ եղեք կանանց, երեխաների եւ ծերերի նկատմամբ»¹⁰: Կարծում ենք, չափազանց հետաքրքիր է մեջ բերել նաև իր զինակիցներին սպարապետ Նժդեհի ուղղած յոթ պատվիրանները. «Քաջերին, միայն քաջերին է լսում ու զորավիգում պատերազմների քմահաճ Աստվածը: Վախկոտներն իզուր են կանչում նրան: Խուլ է նա նրանց համար... Նա է միշտ հաղթում, որը արդեն հաղթել է իրեն, այսինքն՝ որն իր մեջ մեռցնելու չափ թուլացրել է մահվան երկյուղը... Նրանք, որոնք ծառայում են բարձր հայրենասիրությունից կամ փառասիրությունից դրդված, միայն նրանք են ավելացնում իրենց զենքի ու ցեղի փառքը: Հենց այնպես ծառայել, ծառայել, որովհետև պահանջում են, կամ ստիպված ես մի զույգ ուսադիրներ կրել մի կտոր հացի համար, նշանակում է դատապարտված լինել կատարելու սովորական մահկանացուին հատուկ ամենաանցանց ու անփառունակ գործեր: Վա՛յ քեզ բանակ, եթե նմաններով հարուստ են շարքերդ... Ունեցիր բոլոր մարտական առաքիլությունները, բայց մի մոռանար, որ առաջինը, առանց որին պատերազմների քմահաճ Աստվածը քեզ քիչ անգամ կժպտա, դա խիզախությունն է... Քեզ վրա նայիր որպես դատապարտվածի, որը հանուն իր երկրի ու ժողովրդի պաշտպանության պիտ միշտ պատրաստ լինի ընդունելու մահը: Եղիր խիզախ, խստաբարո ու չարքաշ: Հատկությունների այդ բարձր երրորդությունը քեզ կմտեցնեն կատարյալին... Երկար ու լուրջ տքնությամբ մեռցնելու աստիճան թուլացրու քո մեջ մահվան վախը եւ դու չես մնա առանց փառքի, պատմությունից դուրս... Դապոնացու արեւոտ սիրով սիրիր հայրենիքդ, եւ ամեն օր, որպես աղոթք, կրկնիր ճապոնական կայսրի խոսքերը. Եթե խորապես գիտակցենք, որ սերը դեպի հայրենի երկիրն ու ժողովուրդը ավելի բարձր է կանգնած մեծ ու գեղեցիկ Արեւին, քան մեր հայրենիքի ամենաբարձր լեռները, այն ժամանակ մահը ամեն մեկիս համար թռչնի փետուրից էլ թեթեւ կթվա»¹¹:

Այսպիսով՝ Սյունիքում վարած ինքնապաշտպանական կռիվների շնորհիվ

⁹ Հարկ ենք համարում նշել, որ սույն ավանդույթը Նժդեհն իր խոսքով փոխառել էր բուլղարական բանակից (տես Գ. Նժդեհ, Խուստուփյան կանչեր: Չորաշարքային կանոնադրություն: Ե., 1992, էջ 8):

¹⁰ Նույն տեղում, էջ 10:

¹¹ Նույն տեղում, էջ 20–21:

հաջողվեց ոչ միայն խորհրդային իշխանություններին ստիպել պատմականորեն հայկական այդ երկրամասը բողմել Հայաստանի կազմում, այլև տեղի հայությանը փրկել կոտորածից և ապահովել Փետրվարյան ապստամբության ճնշումից հետո մազապուրծ եղած մտավորականության, զինվորականության և բազմահազար գաղթականների ապահով նահանջը Սյունիք, այնուհետև՝ Պարսկաստան: Մխաված չենք լինի, եթե ասենք՝ *չլիներ Նժդեհի և նրա հերոս զինակիցների սխրագործությունը Սյունիքում, չէր լինի նաև հայկական այդ երկրամասը մերօրյա Հայաստանի Հանրապետության կազմում, ինչով, անշուշտ, կվերանգվեր Հայաստանի Հանրապետության ընդհանրապես, թեկուզ՝ որպես խորհրդային հանրապետության գոյությունը:*

Դիմենք Նժդեհին. «Սրբազան է ինքնապաշտպանողական ամեն գոյամարտ: Այդպիսին էր իմ վարածը Սյունյաց աշխարհում: Երկու տարի տետղ կռիվների առաջին շրջանում պե՛տք էր թուրք-թաթար վտանգից փրկել Սյունիքի հայությունը: Երկրորդ շրջանում – ինքնավար Սյունիքի օրով – պե՛տք էր մահացու անդամահատությունից փրկել Հայաստանը՝ Մոսկվայի կողմից Ադրբեջանին տրված Սյունյաց երկիրը: Երրորդ շրջանում – Լեռնահայաստանի օրով – պե՛տք էր հոգեբանորեն հրահրել եւ ռազմագիտորեն կարելի դարձնել Հայաստանի Փետրվարյան ապստամբությունը, ապա փրկության կամուրջ հանդիսանալ բոլշեւիզմի գազանից մազապուրծ եղած հայ մտավորականության համար...»¹², «Իմ ժողովրդական վաշտերն էին, որ ջարդեցին, զինաթափեցին եւ գերեցին XI Կարմիր բանակի գրեթե բոլոր զորամասերը, եւ, հակառակ հանրապետական Հայաստանի կառավարության եւ Մոսկվայի ներկայացուցիչ Լեգրանի միջեւ կնքված պայմանագրին – որով Չանգեզուրը բողմված էր Ադրբեջանին, իմ ժողովրդական բանակը, զենքի ուժով, խորհրդային իշխանությանը պարտադրեց իր կամքը, Սյունիքի կցումը Հայաստանին»¹³:

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր Սեյրան Չաքարյանը, ուսումնասիրելով Նժդեհի կերպարը, հայ ժողովրդի պատմության ճակատագրական անկյունադարձերում կատարած աշխատանքը, նրա՝ որպես ռազմական ու քաղաքական ազգային գործչի ուղին և գրական, ռազմագիտական, գաղափարախոսական ժառանգությունը, հատկապես՝ Ցեղակրոն ու Տարոնական շարժումների պատմությունը և ուսմունքը*, հայտնել է հետևյալ կարծիքը. «Նժդեհի զորավարական գործունեությունը անխզելիորեն կապված է նրա դավանած գաղափարախոսության և փիլիսոփայության հետ»¹⁴: Դրան համահունչ է պատմաբան Սիեր

¹² Գ. Նժդեհ, Երկեր, հ 2, էջ 251:

¹³ Նույն տեղում, էջ 188:

* Ընդհանուր առմամբ, դա կարելի է բանաձևել հետևյալ կերպ. ազգային ինքնապաշտպանական համակարգ, միաժամանակ՝ հայ ազգի հարատևմանը, բնականոն զարգացմանը, հոգևոր և ֆիզիկական անվտանգությանը, նրա բնական Հայրենիքի վերատիրմանը միտված շարունակական գործունեություն:

¹⁴ Ս. Չաքարյան, Գարեգին Նժդեհ (փիլիսոփայական ճեպանկար): Ե., 2001, էջ 31:

Հարությունյանի հետևյալ գնահատականը. «Նժդեհականությունը, որպես ռազմաշունչ, ուժապաշտ, երիցս հայկական տեսականորեն ու գործնականորեն փորձարկված, ամբողջական գաղափարախոսություն, զինանձնակազմի գիտակցությանը պետք է հասցվի ոչ թե մասնակիորեն՝ առանձին դրույթներով, այլ լիակատար կերպով՝ իբրև մի կուռ աշխարհայացք, ուսմունք»¹⁵:

Այսպիսով՝ Նժդեհի ուսմունքի հայրենասիրության, ազգին նվիրվածության, քաջության, ինքնագոհության՝ հանուն Հայրենիքի և հայության հավաքական իղձերի իրականացման, հայության բնական կենսատարածքի (արեալ) վերականգնման և հայկական Սփյուռքի հայրենահավաքման մասին դրույթները կարող են համապատասխան նպատակային աշխատանքի, համակարգված կերպով ներկայացման և ճիշտ քարոզչության դեպքում ՀՀ Ձինված ուժերի համար ունենալ մեծ նշանակություն՝ զինժառայողների և ռազմական բարձրագույն ուսումնական հաստատությունների կուրսանտների մասնագիտական գիտելիքների խորացման, ֆիզիկական պատրաստության մակարդակի բարձրացման և, վերջապես, ներկայիս ու ապագա սերունդների ռազմահայրենասիրական ու բարոյահոգեբանական ոգու ամրապնդման տեսանկյունից:

¹⁵ Մ. Հարությունյան, Նժդեհյան գաղափարախոսության դերը ազգային ոգով դաստիարակության գործում: «Բանակ—հասարակություն» (Ձեկուցումներ, ելույթներ): Ստեփանակերտ, 2002:

ВОЕННАЯ ИСТОРИЯ

АРМЯНСКИЕ ВОЕНАЧАЛЬНИКИ РУССКОЙ АРМИИ XIX ВЕКА И НАЧАЛА XX ВЕКА: ИСТОЧНИКОВЕДЧЕСКИЙ ОЧЕРК

М. А. КАРАПЕТЯН, *доктор исторических наук,
ведущий научный сотрудник Института истории НАН РА*

РЕЗЮМЕ

Военная история является относительно новой дисциплиной для современного армянского научного сообщества. В этом аспекте особое значение приобретает системное развитие источниковедения в данной области. С учетом того, что военная история армянского народа в XIX—XX вв. в значительной мере являлась частью российской военной истории, особую актуальность получают изучение и систематизация российских военно-архивных материалов, относящихся к жизнедеятельности российских офицеров армянской национальности и истории армянских национальных формирований, действовавших в составе русской армии.

В российских архивных материалах и публикациях этого периода, систематизированных и представленных автором в данной статье, содержатся биографические данные о жизни и боевом пути армянских военачальников русской армии, принимавших активное участие в русско-

турецкой 1877—1878 гг., русско-японской 1904—1905 гг., 1-ой и 2-ой Балканской, первой мировой войнах и стоявших у истоков ВС первой Республики Армения.

ОБ АКТУАЛЬНОСТИ ТЕОРИИ ВЕДЕНИЯ БОЯ
ГАРЕГИНА НЖДЕ

В. К. АТОЯН, кандидат экономических наук

РЕЗЮМЕ

В статье представлены основные элементы литературного и идеологического наследия выдающегося армянского мыслителя, государственного и военного деятеля XX в. генерала Гарегина Нжде, касающиеся проблем военного искусства, военно-патриотического воспитания, духовной, моральной, а также стратегической, тактической и теоретической подготовки солдат и офицерского состава. На основе анализа богатого фактологического материала выявляются некоторые практические методы ведения тактических боев, разработанные и реализованные Гарегиним Нжде в процессе самообороны Сюника. Взгляды Нжде и на сегодняшний день не потеряли своей актуальности и могут быть использованы в целях формирования и развития морально-боевых качеств военнослужащих Вооруженных сил и курсантов военных училищ РА.

MILITARY HISTORY

THE ARMENIAN COMMANDERS OF THE RUSSIAN ARMY
IN THE 19th AND EARLY 20th CENTURIES:
A SOURCE STUDY BLUEPRINT

*M. L. KARAPETYAN, Doctor of Historical Sciences,
Leading Researcher at the Institute of History, NAS, RA*

SUMMARY

Military history is a relatively new discipline for the contemporary Armenian academic community. In this aspect the systemic development of source studies in this field acquires a special value. Given the fact that the Armenian people's military history of the 19—20th centuries was largely a part of the Russian military history, the study and systematization of the Russian military archives become especially topical. These records relate to the vital activity of the Russian officers of Armenian origin as well as to the history of Armenian national formations operating in the Russian Army.

The Russian archival documents and publications of that period, which have been systematized and produced by the author in this article, contain the biographical information about the life and combat path of the Armenian com-

manders of the Russian Army who took an active part in the Russo-Turkish War of 1877—1878, the Russo-Japanese War of 1904—1905, the First and Second Balkan Wars, the First World War, as well as those who were at the sources of the Armed Forces of the First Republic of Armenia.

ON THE RELEVANCE OF GAREGIN NZHDEH'S
BATTLE WAGING THEORY

V. K. ATOYAN, PhD in Economic Sciences

SUMMARY

This article touches on the basic elements of literary and ideological heritage of the outstanding Armenian thinker, state and military figure of the 20th century General Garegin Nzhdeh. These elements relate to the problems of military art, military-patriotic training, spiritual, moral, as well as strategic, tactical and theoretical training of soldiers and officers. Some practical methods of waging tactical actions elaborated and realized in the process of Syunik self-defense by Nzhdeh, are revealed upon the analysis of abundant factual material. Today Nzhdeh's views haven't lost their contemporariness and can be applied in the formation and development of moral and combat merits of servicemen of the Armed Forces and military cadets of the Republic of Armenia.

ՀԱՄԱՐԻ ԲԱՌԱՐԱՆ

*Ն. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ, կապիտան, Լ. Հ. ՊԱՊԻԿՅԱՆ, մայոր,
Դ. Ս. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, գնդապետ*

ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

ահացուցիչ – устрашающий; offensive	reason, good sense
ալընտրանքային ծառայություն – альтернативная служба; alternative service	լուսային հոսք – световой поток; light flux
ալրման ջերմատվություն – теплопроводность стгорания; heat emission of combustion	խորհրդակցական մարմին – совещательный орган; 1. deliberative body, 2. advisory body, advisory agency
անաչառություն – беспристрастность; 1. impartiality, 2. objectivity, 3. neutrality	կազմակերպվածք – организационная структура; organizational structure
անընդհատություն – непрерывность; continuity	կարգազանցություն – нарушение порядка; 1. disorderly behavior, 2. delinquency
առաջավարություն – лидерство; leadership	կարգապահական մեկուսարան – дисциплинарный изолятор; disciplinary isolator
արժանահավատություն – верифицированность, достоверность; 1. trustworthiness, credibility, 2. reliability	կարգապահություն – дисциплина; discipline
արտանետում – выброс; 1. emission, 2. discharge	կարգապահություն – дисциплинированность; discipline
բազմամոդ բանեւակարգ – многомодовый режим; multimode operation, multimode behavior	կենսաբազմազանություն – биоразнообразие; biodiversity
գազապարպումային պլազմա – газоразрядная плазма; gas-discharge plasma	կենսոլորտ – биосфера; 1. biosphere, 2. biological envelope
գործունակություն – дееспособность; 1. energy, activity, 2. capacity	կրավորական դիրք – пассивная позиция, безразличие; passive position, indifference
դրամաշնորհ – грант; grant	կուտակիչ – аккумулятор, накопитель; accumulator
զգայական հարթություն – плоскость эмоций; emotions area	համակարգասիներգիկ տեսլական – системно-синергетическое видение; system-synergetic vision
զորաշարք – строй войск; formation of troops	համատարրություն – однородность; homogeneity
զորավիզ – 1. поддержка, защитник, 2. опора; aider, supporter, protector	հայտարարագիր – декларация; declaration
ընտրագատում – отбор; selection	հայտարարական բնույթ – декларатив-
իմացականություն – рассудок, разум;	

<p>ный характер; declarative nature, declarative effect</p> <p>հարճումն բարելավում – прогрессирующее улучшение; progressive improvement</p> <p>հիմնադրամ – фонд; fund</p> <p>հոգեխոցվածք – психическая травма; psychic trauma</p> <p>հսկողություն – 1. надзор, 2. присмотр; 1. control, 2. supervision</p> <p>ձեռնհասություն – компетентность; competence</p> <p>ձևարկում – формализация; formalization</p> <p>մանկավարժական բարձիքություն – педагогическая распущенность; pedagogical negligence</p> <p>մարտավարական հնար – тактический прием; tactic, tactical method</p> <p>մշտագնում – мониторинг; monitoring</p> <p>մոդել – модель; model</p> <p>– հակազդումային մոդել – реактивная модель; reaction model, reacting model</p> <p>– ձևարկված մոդել – формализованная модель; formalized model</p> <p>մտայնություն – умонастроение; frame of mind, mental set</p> <p>մտավոր կենտրոն – мозговой центр; think-tank</p> <p>նենգադուլ – саботаж; sabotage</p> <p>նենգադուլել – саботировать; sabotage</p> <p>ողջամտություն – здравомыслие; judiciousness, sanity</p> <p>պարպում – разряд; discharge</p> <p>– աղեղային պարպում – дуговой разряд; arc discharge</p> <p>– պարպման լարում – напряжение разряда; discharge voltage</p> <p>ջերմունակության բռիչք – скачок теплоемкости; heat capacity jump</p> <p>նազմարշավ – военная кампания; military campaign</p> <p>ռիսկ – риск; risk</p>	<p>– աղետածին ռիսկ – катастрофогенный риск; catastrophe generating risk</p> <p>– հեղոնիստական ռիսկ – гедонистический риск; hedonistic risk</p> <p>– ռիսկի կառավարում – управление риском; risk management</p> <p>– քրոնիկական ռիսկ – хронический риск; chronic risk</p> <p>ռիսկաբանական համակարգասիներգիկ մեթոդաբանություն – системно-синергетическая методология управления рисками; system-synergetic methodology of risk management</p> <p>վարույթ – производство; 1. effectuation, 2. execution</p> <p>վերահսկելիություն – контролируемость; controllability</p> <p>վերահսկողություն – контроль; control</p> <p>– ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողություն – демократический гражданский контроль; democratic civilian control</p> <p>– խորհրդարանական վերահսկողություն – парламентский контроль; parliamentary control</p> <p>վերացական հարթություն – плоскость абстракции; abstract surface</p> <p>տիեզերագնացություն – космонавтика; astronautics</p> <p>տիրույթ – 1. владение, область, 2. диапазон; 1. property, possession, 2. range</p> <p>– մարմնող պարպման տիրույթ – диапазон тлеющего разряда; glow discharge range</p> <p>– ռեզոնանսային հաճախականության տիրույթ – диапазон резонансной частоты; resonance frequency range</p> <p>տրամաա – профиль; profile</p> <p>տևականություն – длительность, продолжительность; duration</p> <p>ուժանակ – динамит; dynamite</p> <p>փոխառություն – 1. заем, 2. заимствование; 1. borrowing, 2. adoption</p>
--	--

փոխգործություն — взаимодействие; 1. interoperability, 2. interaction
 քննադատականություն — критицизм; criticism
 քննման ընթացակարգ — процедура рассмотрения; examination procedure

քրեաբանություն — криминалистика; criminalistics, forensic science
 օդազնացություն — воздухоплавание, аэронавтика; aeronautics
 օրինագիծ — законопроект; bill, draft law

РУССКО-АРМЯНСКИЙ СЛОВАРЬ

аккумулятор — կուտակիչ
 альтернативная служба — ալլընտրանքային ծառայություն
 аэронавтика — см. *воздухоплавание*
 безразличие — 1. անտարբերություն, 2. см. *пассивная позиция*
 беспристрастность — անաչառություն, անկողմնապահություն, անկողմնակալություն
 биоразнообразие — կենսաբազմազանություն
 биосфера — կենսոլորտ
 верифицированность — արժանահավատություն
 взаимодействие — փոխգործություն
 владение — 1. տիրույթ, տիրապետություն, 2. տիրապետում
 военная кампания — ռազմարշավ
 воздухоплавание — օդազնացություն
 выброс — արտանետում
 газоразрядная плазма — գազապարպուճային պլազմա
 грант — դրամաշնորհ
 дееспособность — գործունակություն
 декларативный характер — հայտարարական բնույթ
 декларация — հռչակագիր, հայտարարագիր
 диапазон — տիրույթ, ընդգրկույթ
 — диапазон резонансной частоты — ռեզոնանսային հաճախականության տիրույթ
 — диапазон тлеющего разряда — մարմրող պարպման տիրույթ

динамит — ուժանակ, դինամիտ
 дисциплина — 1. կարգապահություն, 2. գիտաճյուղ
 дисциплинарный изолятор — կարգապահական մեկուսարան
 дисциплинированность — կարգասիրություն
 длительность — 1. տևողություն, 2. երկարատևություն, տևականություն, անհատականություն
 достоверность — см. *верифицированность*, վավերականություն
 заем — փոխառություն
 заимствование — 1. փոխառում, 2. փոխառություն
 законопроект — օրինագիծ
 защитник — 1. պաշտպան, 2. см. *пог-держка 2*
 здравомыслие — ողջամտություն
 компетентность — 1. իրազեկություն, 2. ձեռնհասություն
 контролируемость — վերահսկելիություն
 контроль — վերահսկողություն
 — демократический гражданский контроль — ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողություն
 — парламентский контроль — խորհրդարանական վերահսկողություն
 космонавтика — տիեզերագնացություն
 криминалистика — քրեաբանություն
 критицизм — քննադատականություն
 лидерство — առաջավարություն, լիդերություն
 многомодовый режим — բազմամոդ բանեկարգ

- модель – մոդել
 – реактивная модель – հակազդումա-
 յին մոդել
 – формализованная модель – ձևարկ-
 ված մոդել
 мозговой центр – մտավոր կենտրոն
 мониторинг – մշտազննում
 надзор – հսկողություն
 накопитель – սմ. *аккумулятор*
 нарушение порядка – 1. կարգի խան-
 գարում, 2. կարգազանցություն
 непрерывность – անընդհատություն
 область – 1. սմ. *влагение 1*, 2. շրջան
 однородность – համասեռություն, համա-
 տարրություն, միատեսակություն
 опора – 1. հենարան, 2. նեցուկ, գորավիզ
 организационная структура – կազմա-
 կերպվածք, կազմակերպական կառուց-
 վածք
 отбор – ընտրազատում
 пассивная позиция – պասիվ դիրք, կրա-
 վորական դիրք
 педагогическая распушенность –
 մանկավարժական բարձրորություն
 плоскость – հարթություն
 – плоскость абстракции – վերացական
 հարթություն
 – плоскость эмоций – զգայական հար-
 թություն
 поддержка – 1. աջակցում, աջակցու-
 յուն, օգնություն, սատարում, 2. գորա-
 վիզ, աջակից
 присмотр – հսկողություն
 прогрессирующее улучшение – հա-
 բաճում բարելավում
 продолжительность – սմ. *глитель-
 ность*
 производство – 1. արտադրություն, 2.
 վարույթ
 профиль – 1. կիսադեմք, 2. տրամատ,
 հատույթ
 процедура рассмотрения – քննման ըն-
 քացակարգ
 психическая травма – հոգեխոցվածք
 разряд – 1. պարպում, 2. կարգ
 – дуговой разряд – աղեղային պարպում
 – напряжение разряда – պարպման
 լարում
 разум – սմ. *рассудок*
 рассудок – 1. բանականություն, 2. դա-
 տողականություն, իմացականություն,
 3. գիտակցություն
 риск – ռիսկ
 – гедонистический риск – հեղոնիս-
 տական ռիսկ
 – катастрофогенный риск – աղետա-
 ծին ռիսկ
 – управление риском – ռիսկի կառա-
 վարում
 – хронический риск – քրոնիկական
 ռիսկ
 саботаж – նենգադուլ
 саботировать – նենգադուլել
 световой поток – լուսային հոսք
 системно-синергетическая методоло-
 гия управления рисками – ռիսկա-
 բանական համակարգափներգիկ մեթո-
 դաբանություն
 системно-синергетическое видение –
 համակարգափներգիկ տեսլական
 скачок теплоемкости – ջերմունակու-
 յան թռիչք
 совещательный орган – խորհրդակցա-
 կան մարմին
 строй войск – գորաշարք
 тактический прием – մարտավարական
 հնար
 теплотворность сгорания – այրման
 ջերմատվություն
 умонастроение – մտայնություն, մտա-
 տրամադրվածություն
 устрашающий – սարսափեցնող, ահա-
 ցուցիչ
 фонд – 1. հիմնադրամ, 2. ֆոնդ
 формализация – ձևարկում, ֆորմալա-
 ցում

ENGLISH-ARMENIAN DICTIONARY

abstract surface – վերացական հարթություն
 accumulator – կուտակիչ
 activity – 1. գործունեություն, 2. աշխատանք, 3. ակտիվություն, 4. see *energy*
 adoption – 1. որդեգրում, 2. ընդունում, 3. փոխառություն
 advisory agency – see *advisory body*
 advisory body – խորհրդակցական մարմին
 aeronautics – օդագնացություն
 aider – գորավիզ
 alternative service – այլընտրանքային ծառայություն
 astronautics – տիեզերագնացություն
 bill – 1. հաշիվ, 2. օրինագիծ, 3. ազդ
 biodiversity – կենսաբազմազանություն
 biological envelope – կենսոլորտ
 biosphere – կենսոլորտ
 borrowing – փոխառություն
 capacity – 1. տարողություն, 2. ունակություն, ընդունակություն, 3. հզորություն, 4. գործունակություն
 competence – 1. իրազեկություն, 2. ձեռնհասություն
 continuity – 1. շարունակականություն, 2. անընդհատություն
 control – 1. հսկողություն, 2. վերահսկողություն
 – democratic civilian control – ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողություն
 – parliamentary control – խորհրդարանական վերահսկողություն
 controlability – վերահսկելիություն
 credibility – see *trustworthiness*
 criminalistics – քրեաբանություն
 criticism – քննադատականություն
 declaration – հռչակագիր, հայտարարագիր
 declarative effect – see *declarative nature*

declarative nature – հայտարարական բնույթ
 deliberative body – խորհրդակցական մարմին
 delinquency – 1. իրավախախտում, 2. կարգազանցություն
 discharge – 1. արտահոսք, 2. արտանետում, 3. լիցքաթափում, 4. զորացրում, 5. պարպում
 – arc discharge – աղեղային պարպում
 – discharge voltage – պարպման լարում
 disciplinary isolator – կարգապահական մեկուսարան
 discipline – 1. կարգապահություն, 2. կարգասիրություն, 3. գիտաճյուղ
 disorderly behavior – կարգազանցություն
 draft law – see *bill*
 duration – 1. տևականություն, 2. տևողություն
 dynamite – ուժանակ, դինամիտ
 effectuation – վարույթ
 emission – 1. արձակում, ճառագայթում, 2. արտանետում, 3. թողարկում
 emotions area – զգայական հարթություն
 energy – 1. էներգիա, 2. եռանդ, 3. գործունակություն
 examination procedure – քննման ընթացակարգ
 execution – 1. վարույթ, 2. կատարում, 3. մահապատիժ
 forensic science – see *criminalistics*
 formalization – ձևարկում, ֆորմալացում
 formation of troops – զորաշարք
 frame of mind – մտայնություն
 fund – հիմնադրամ
 gas-discharge plasma – գազապարպումային պլազմա
 good sense – see *reason* 2, 3, 4
 grant – դրամաշնորհ
 heat capacity jump – ջերմունակության բռիչք

- heat emission of combustion – այրման ջերմաստվություն
- homogeneity – համասեռություն, համասարրություն, միատեսակություն
- impartiality – անաչառություն, անկողմնապահություն, անկողմնակալություն
- indifference – 1. անտարբերություն, 2. see *passive position*
- interaction – փոխգործություն
- interoperability – փոխգործություն
- judiciousness – ողջամտություն, խելամտություն
- leadership – 1. ղեկավարություն, 2. առաջավարություն, լիդերություն
- light flux – լուսային հոսք
- mental set – see *frame of mind*
- military campaign – ռազմարշավ
- model – մոդել
– formalized model – ձևարկված մոդել
– reacting model – see *reaction model*
– reaction model – հակազդումային մոդել
- monitoring – մշտագնում
- multimode behavior – see *multimode operation*
- multimode operation – բազմամոդ բանելակարգ
- neutrality – 1. չեզոքություն, 2. անաչառություն
- objectivity – անաչառություն, անկողմնապահություն, անկողմնակալություն
- offensive – 1. վիրավորական, 2. հարձակում, գրոհ, 3. սարսափեցնող, ահացուցիչ
- organizational structure – կազմակերպվածք, կազմակերպական կառուցվածք
- passive position – պասիվ դիրք, կրավորական դիրք
- pedagogical negligence – մանկավարժական բարձիթողություն
- possession – 1. տիրում, տիրապետում, 2. see *property 1, 3*
- profile – 1. համբավ, վարկ, 2. կիսադեմք, 3. հատույթ, տրամաա progressive improvement – հարաճում բարելավում
- property – 1. սեփականություն, ունեցվածք, 2. հատկություն, 3. տիրույթ
- protector – 1. պաշտպան, 2. see *aider*
- psychic trauma – հոգեխոցվածք
- range – 1. շրջա, 2. տիրույթ, ընդգրկույթ, 3. շարք
– glow discharge range – մարմնող պարպման տիրույթ
– resonance frequency range – ռեզոնանսային հաճախականության տիրույթ
- reliability – 1. հուսալիություն, 2. արժանահավատություն
- reason – 1. պատճառ, 2. բանականություն, 3. գիտակցություն, 4. դատողականություն, իմացականություն
- risk – ռիսկ
– risk management – ռիսկի կառավարում
– catastrophe generating risk – աղետաձին ռիսկ
– chronic risk – քրոնիկական ռիսկ
– hedonistic risk – հեդոնիստական ռիսկ
– risk management – ռիսկի կառավարում
- sabotage – 1. նենգադուլ, 2. նենգադուլել
- sanity – see *judiciousness*
- selection – ընտրագատում
- supervision – հսկողություն
- supporter – see *aider*
- system-synergetic methodology of risk management – ռիսկաբանական համակարգասիներգիկ մեթոդագրանություն
- system-synergetic vision – համակարգասիներգիկ տեսլական
- tactic – մարտավարական հնար
- tactical method – see *tactic*
- think-tank – մտավոր կենտրոն
- trustworthiness – արժանահավատություն

Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

ՀՀ ՊՆ Ռ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈՒՀ-ի կողմից հաստատված «Գոկտորական և քեկնաժուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով, հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները մինչև 2 էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հասկալումները:

Չեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

К сведению авторов и читателей

Военно-научный журнал Института национальных стратегических исследований им. Д. Канаяна МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала, с приложением резюме на русском и английском языках объемом до 2-х страниц.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

For the information of the authors and readers

Defense-academic journal «Haikakan banak» of Drastamat Kanayan Institute for National Strategic Studies of the Defense Ministry of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length. Provide Russian and English summaries (2 pages maximum).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Պատասխանատու քարտուղար՝ *Ա. Ջ. Պեղրոսյան*
Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ՝ *Ջ. Դ. Ասատրյան*
Թարգմանչության և խմբագրման բաժնի պետ՝ *Ա. Մ. Մովսիսյան*
Տեխնիկական բաժնի պետ՝ *Ա. Պ. Նազարեթյան*

Հայերեն տեքստերի խմբագիր՝ *Ա. Կ. Շահբազյան*
Ռուսերեն և անգլերեն տեքստերի խմբագիր՝ *Լ. Հ. Պապիկյան*
Ձևավորող նկարիչ՝ *Դ. Ա. Փարվանյան*
Լուսանկարիչ՝ *Ա. Դ. Ներսիսյան*

Տեխնիկական և գեղարվեստական խմբագրումը՝ *Ա. Պ. Նազարեթյանի*
Տեքստերի թարգմանությունը՝ *Ն. Ս. Սյրիչյանի*
Համակարգչային ապահովումը՝ *Գ. Ս. Դադայանի, Վ. Ռ. Խալաֆյանի*
Սրբագրիչներ՝ *Ն. Հ. Բաղդասարյան, Ա. Հ. Սարուխանյան*

Խորհրդատվություն անգլերեն տեքստերի վերաբերյալ՝ *Ա. Հ. Հակոբյանի, Ա. Ա. Մարտիրոսյանի*

Լուսանկարչական ապահովումը՝

ՀՀ ՊՆ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. ՌԻՄեցու փողոց, 56/6, հեռ. 28-54-25, 28-12-94:

URL: <http://www.mil.am/arm/index.php?page=105>

Էլ. փոստ՝ haykakanbanak@mail.ru

© ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների
ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2010 թ.

Ստորագրվել է տպագրության 26.06.2010: Թուղթը՝ օֆսեթային: Ձևաչափը՝ 70x100 1/16:
Տեքստը՝ 132 էջ + 4 էջ ներդիր: Պայմանական տպագրական 10,5 մամուլ: Տպաքանակը՝ 500:
Տառատեսակը՝ «Թայմս» և «Բարբիկա»: Տպագրությունը՝ օֆսեթ:
Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108:

Տպագրվել է «Լիմուշ» տպարանում:



ՀՀ Պաշտպանության նախարարի այցը ՀՀ ՋՈՒ-ի 12-րդ խաղաղապահ բրիգադի՝
Ղունդուզում տեղակայված ստորաբաժանում.

Աֆղանստան, 2010 թ. հուլիսի 24



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՈՒԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ